Ատելության խոսքի կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում

Հետազոտություն

Արա Ղազարյան
Դավիթ Ասատրյան

Արա Ղազարյան իրավաբանական գրասենյակ
Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հետազոտության համառոտ ամփոփում 4

ԲԱԺԻՆ 1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 7

Նախաբան 7

1. Ատելության խոսքի սահմանումը միջազգային իրավունքում 8

2. **Արդյո՞ք անհրաժեշտ է օրենքով սահմանել ատելության խոսքը** 14

3. **Ատելության խոսքի սահմանումը** 16

4. **Նախագծի ո՞ր բաժնում է նպատակահարմար ներառել ատելության խոսքի սահմանումը** 23

ԲԱԺԻՆ 2. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 25

1. **Ատելության խոսքի կարգավորումը Քրեական օրենսգրքում** 25

2. **Ատելության խոսքը Քրեական դատավարության օրենսգրքում** 33

ԲԱԺԻՆ 3. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ .. 37

Նախաբան 37

1. **Ատելության խոսքի սահմանումը Քաղաքացիական օրենսգրքում** 39

2. **Ատելության խոսքի սահմանումը Տեսալսողական մեդիայի մասին օրենքում**44

3. **Ատելության խոսքի սահմանումը Զանգվածային լրատվության մասին օրենքում** 46

4. **Ատելության խոսքը վարչական օրենսդրությունում** 47

4.1. Վարչական տույժեր 49

4.2. Լիցենզիայի կասեցման ու դադարեցման վարչական վարույթներ 54

4.3. Քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների գործունեության լուծարում և արգելում 56

Առաջարկություններ 58

ԲԱԺԻՆ 4. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՅՈՒՄ 60

Նախաբան 60

1. Ատելության խոսքի կանխարգելումը, որպես տեղեկատվական անվտանգության հայեցակարգ 62

1.1. Համացանցի վերաբերյալ պաշտոնական հայեցակարգերը 62

1.2. Ինտերնետ կառավարման համաժողովը (ԻՀԿ) և նրա դերակատարումը 64

2. Ատելության խոսքը հեռահաղորդակցության ոլորտում 70

2.1. Իրավական կարգավորումները և դերակատարները 71

2.2. Կարգավորողի միջամտության սահմանները 74

2.3. Ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող կազմակերպությունների դերակատարումը ոլորտում 77

2.4. Կոնտենտի նկատմամբ վերահսկողության սահմանները 79

2.5. Ծառայություններ մատուցող բաժանորդ հարաբերությունները որպես՝ ատելության խոսքի կանխարգելման միջոց 82
2.6. Ատելության խոսքի կանխարգելման գործիքակազմը սոցիալական ցանցերում և ծրագրային հավելվածներում. 85
3. Ատելության խոսքը դոմենային տիրույթում 93
3.1. Դոմենային տիրույթի վերաբերյալ պետական հայեցակարգերը. 94
3.2. Դոմենային տիրույթի դերակատարները և նրանց գործառույթները 96
3.3. Դոմենային տիրույթի կարգավորումները 100
4. Ամփոփում և առաջարկություններ 104
4.1. Ամփոփում 105
4.2. Առաջարկություններ 108

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Միջազգային իրավունքում բացակայում է ատելության խոսքի նույնական կամ միասնական իրավական սահմանում: ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից մինչև այժմ ընդունված սահմանումները տարբերվում են իրենց իրավական բովանդակությամբ: Այդ սահմանումները ընդունվել են տարբեր ժամանակաշրջաններում, ընդհանուր առմամբ վերջին հիսուն տարվա ընթացքում, և յուրաքանչյուրն արտահայտում է իր ժամանակաշրջանի մարտահրավերները: Այդուհանդերձ, Մասնակից Պետությունները, մասնավորապես՝ Եվրոպայի Խորհրդի շրջանակում, փորձում են իրենց ներպետական օրենսդրության մեջ ու պրակտիկայում ամրագրել ատելության խոսքի նորմեր ու դրանք հարմարեցնել միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների հետ: Այդ առումով, ընդհանուր առմամբ, առկա է կոնսենսուս ատելության խոսքի կարևոր հատկանիշների վերաբերյալ:

Վերջին տասնամյակում, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված, կրկին արդիական է դարձել ատելության խոսքի նոր իրավական կարգավորումների փնտրտուքը: Տեղեկատվական նոր, թվային տեխնոլոգիաները ստիպում են շարունակաբար վերանայել գոյություն ունեցող կառուցակարգերը և սկզբունքները: Կարևոր հարցը, որը շրջանառվում է այսօր, այն է, թե արդյոք հնարավոր է ամբողջությամբ կարգավորել ատելության խոսքը և արդյոք հնարավոր է ատելության խոսքի ամբողջական ու վերջնական իրավական սահմանում նախագծել:

Խնդիրը բարդանում է նրանով, որ ատելության խոսքի ցանկացած կարգավորում ուղղակիորեն թե անուղղակիորեն բախվում է տեղեկություններ ու գաղափարներ տարածելու քաղաքացիների իրավունքի և ինֆորմացիայի ազատ հոսքի հանրային շահի հետ՝ նույնիսկ եթե տեղեկությունները անբարյացակամորեն են ընդունվում շատերի կողմից: Քաղաքական խոսքի ազատ ծավալման տեսանկյունից չափազանց կարևոր է, որ անհանգստություն պատճառող, ցնցող, վուլգար ու նույնիսկ վիրավորական խոսքը որոշ հանգամանքների ներքո շարունակի պաշտպանված մնալ պետական մարմինների կամ այլոց միջամտությունից՝ ի շահ հանրության: Այդ իմաստով նույնիսկ, օրինակ, թրոլինգը, ծայրահեղ քննադատական վիրավորական խոսքը կոնկրետ անձի կամ խմբի նկատմամբ կարող է որոշակի հանգամանքների ներքո, փոխհավասարակշռելով այլոց լեգիտիմ շահերի հետ, համարվի իրավաչափ, հետևաբար՝ օրինական: Սակայն դա հնարավոր է միայն կոնկրետ հանգամանքների ներքո, այլ ոչ թե՝ ընդհանրապես ու անվերապահորեն: Այդպիսին է, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումը, որն, օրինակ, հանրային հարթակում հնչեցված առերևույթ հարձակողական բնույթի վիրավորական խոսքը

կարող է քննել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակում՝ փորձելով փոխհավասարակշռել նման խոսքի հանրային նշանակությունը այլոց իրավունքների ու շահերի հետ, եթե նման խոսքը ատելության շարժառիթով ասված խոսք չէ: Հակառակ դեպքում, եթե հրապարակային արտահայտությունը անձի կամ անձանց խմբի որևէ հատկանիշով պայմանավորված անհանդուրժողականության, խտրականություն, ատելություն կամ թշնամանք հրահրող խոսքի հատկանիշներ է պարունակում, որևէ հանգամանքի ներքո չի կարող անցնել ազատ խոսքի պաշտպանության տակ, քանի որ դա ատելության խոսք է: Այսպիսով, խնդիրը ոչ թե ատելության խոսքի ամբողջական սահմանում ունենալու մեջ է, որը գործնականում անհնարին է, այլ նրա, որ սահմանումը հնարավորություն տա տարանջատել ատելության խոսքը օրինական խոսքից՝ այնպես, որ ընդհանուր առմամբ չվնասի ազատ խոսքը:

Սույն հետազոտության մեջ վերլուծվել են ատելության խոսքի տարբեր սահմանումներ ու արդյունքում Իրավահավասարության մասին օրենքի նախագծում առաջարկվել է մի մոդել, որը կարող է ծառայել որպես հովանոց-նորմ կամ ուղեցույց-նորմ ատելության խոսքի քրեաիրավական, վարչաիրավական ու քաղաքացիաիրավական կարգավորումների համար: Այս մոտեցումը բխում է այն մոտեցումից, որ Իրավահավասարության մասին օրենքը նախագծվել է որպես հակախտրականության հատուկ օրենք, որը կոչված է դառնալու ոչ միայն իրավական պաշտպանության միջոց, այլ նաև հակախտրականության իրավական քաղաքականության ուղեցույց: Այդ իմաստով, իրավական նորմը նախագծելիս առաջնորդվել ենք այն մտայնությամբ, որ դա պետք է լինի հակիրճ, պարզ ու լայնորեն սահմանված նորմ, որպեսզի դատարանները հետագայում դրա մեկնաբանությամբ զարգացնեն նախադեպային իրավունք ու դատական պրակտիկա ու այդպիսով ամբողջացնեն հակախտրականության իրավական կառուցակարգը: Կարևոր է հաշվի առնելը, որ ատելության խոսքի նորմը անհրաժեշտ է լինելու կիրառել շարունակ զարգացող ու փոփոխվող միջավայրում ու այդ նպատակով անհրաժեշտ է ունենալ այնպիսի սահմանում, որը դիմանա ժամանակի փորձություններին, կիրառելի լինի զարգացող տեխնոլոգիաների պայմաններում և դրանով հանդերձ շարունակի մնալ ժամանակակից իրավական գործիք: Դրան կարելի է հասնել ոչ թե մանրամասնորեն ձևակերպված, այլ պարզորոշ ու լայն սահմանումներով ձևակերպված նորմի միջոցով, որը դատարանների շարունակական մեկնաբանության արդյունքում կարողանա մնալ ժամանակակից ու <<կենդանի>> իրավական նորմ:

Սակայն մեկ օրենքում ատելության խոսքի նորմ սահմանելով իրավիճակի համակարգային փոփոխության լուծում հնարավոր չէ ապահովել: Ատելության խոսքը պահանջում է համակարգային, համապարփակ լուծում: Այդ նպատակով մանրամասնորեն ուսումնասիրվել են քաղաքացիական և վարչական

օրենսդրությունը և կատարվել օրենսդրական բարեփոխումների լայն առաջարկներ մի շարք օրենքներում:

Որդեգրելով այդ մոտեցումը, սույն հետազոտության մեջ կատարվել է ատելության խոսքի նորմատիվ բազայի քարտեզագրում, առանձին հավելվածով ցուցակագրվել են ատելության խոսքի նորմեր պարունակող օրենսդրական ակտերը, նախագծերը, ենթաօրենսդրական ակտերը, կանոնագրքերը, դատական նախադեպային որոշումները, ընդհուպ՝ սպորտային կազմակերպության վարքագծի կանոնագրքեր և այլ նորմատիվ բնույթի իրավական փաստաթղթեր՝ անկախ դրանց իրավաբանական բնույթից: Քարտեզագրումից բացի երեք առանձին բաժիններով ուսումնասիրվել են կոնկրետ օրենսդրական ակտեր ու կատարվել են համապատասխան առաջարկություններ:

Այդ պատճառով հետազոտությունը բաղկացած է չորս բաժնից: Բաժին 1-ում ուսումնասիրվել է Իրավահավասարության մասին օրենքի նախագիծը և միջազգային համեմատական իրավունքի հիման վրա, այդ թվում նաև ուսումնասիրելով ԵԽ անդամ մի շարք պետությունների օրենսդրությունը, մշակվել է ատելության խոսքի սահմանում օրենքի նախագծում: Բաժին 2-ում ուսումնասիրվել են Քրեական օրենսգիրքը և Քրեական դատավարության օրենսգիրքը և համապատասխան օրենսդրական առաջարկություններ արվել այս երկու օրենսգրքերում: Զուգահեռ ուսումնասիրվել են նաև քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերը, որոնք այժմ ընդգրկված են Ազգային ժողովի օրակարգում, իսկ քրեական օրենսգրքի նախագիծը ընդունվել է առաջին ընթերցմամբ: Բաժին 3-ում ուսումնասիրվել են քաղաքացիական և վարչական օրենսդրությունները: Օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ են կատարվել Քաղաքացիական օրենսգրքում, Տեսալսողական մեդիայի մասին օրենքում և Զանգվածային լրատվության մասին օրենքում: Վարչական օրենսդրության մասով առաջարկություններ են արվել Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում, Կուսակցությունների մասին սահմանադրական օրենքում և Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում:

Ուսումնասիրության նշանակալի մասը վերաբերում է ատելության խոսքի կարգավորմանը համացանցի տիրույթում, որը շարադրվել է Բաժին 4-ում: Ուսումնասիրվել են Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքը, Լիցենզավորման մասին օրենքը, մի շարք ենթաօրենսդրական ակտեր և այլ նորմատիվ բնույթի գերատեսչական փաստաթղթեր: Կատարվել են օրենսդրական բարեփոխումների ընդհարձակ առաջարկություններ: Մշակվել է համացանցում ատելության խոսքի կարգավորման բարեփոխումների հայեցակարգ՝ որդեգրելով **ինքնակարգավորում կարգավորման միջոցով** սկզբունքը, ըստ որի համացանցային բովանդակության կարգավորումը (մշտադիտարկում, նյութի արգելափակում ու

հեռացում) կատարվում է ինքնակարգավորման մարմինների կողմից, սակայն պետական կարգավորող մարմինները իրականացնում են որոշակի սահմանային վերահսկողություն ինքնակարգավորման մեխանիզմների իրավաչափության վերաբերյալ: Նման պայմաններում կարգավորող պետական մարմինները որոշում չեն կայացնում կոնկրետ գործի փաստերի մասին: Դրա փոխարեն պետական մարմինը վերահսկում է, թե արդյոք որոշումներ կայացնելիս կիրառվել են որոշակի ընթացակարգեր և չափանիշներ՝ առանց վեճի էության վերաբերյալ որոշում կայացնելու կամ այդ որոշման կայացմանը որևէ մասնակցություն ունենալու:

Հետազոտությունը կատարելիս ուսումնասիրվել են ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի իրավական փաստաթղթեր՝ բանաձևեր, հանձնարարականներ, զեկույցներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ, Մասնակից Պետությունների օրենսդրական ակտեր: Ուսումնասիրվել է նաև ՀՀ օրենսդրությունը, դատական պրակտիկան, ատելության խոսքի վերաբերյալ միջազգային մարմինների և ՀՀ պետական և ոչ պետական մարմինների հետազոտություններ ու զեկույցներ, Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան և միջանկյալ զեկույցները: Հետազոտության շրջանակներում անցկացվել են հարցազրույցներ ոլորտի մասնագետների հետ, կատարվել են անանուն հարցումներ:

ԲԱԺԻՆ 1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ՆԱԽԱԲԱՆ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման www.e-draft.am միասնական կայքում հրապարակված է Իրավահավասարության մասին օրենքի նախագիծը: Փաստաթուղթը հակախտրականության մասին ինքնուրույն օրենքի նախագծման երրորդ փորձն է: Նախկինում երկու տարբեր նախաձեռնությունների շրջանակներում երկու առանձին նախագծեր են հրապարակվել և ներկայացվել հանրային քննարկման: Երկու անգամ էլ հասարակական տարբեր խմբեր ներկայացրել են կարծիքներ օրենքի անհրաժեշտության, նախագծերի ամբողջականության, դրանցում տարբեր իրավական հասկացությունների՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխանելիության վերաբերյալ: Ինչ վերաբերում է սույն նախագծին, դրա վերաբերյալ մինչ այժմ տրամադրվել են միջազգային փորձագիտական կարծիքներ ԵԱՀԿ-ի և Equal Trust Fund միջազգային անկախ կազմակերպության կողմից:

Սույն կարծիքը նախագծի վերաբերյալ անկախ փորձագիտական եզրահանգում է նախագծում ատելության խոսքի սահմանման նպատակահարմարության մասին: Ուսումնասիրությունը կատարելիս որպես ուղեցույց է ընտրվել Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) Ընդհանուր քաղաքականության Թիվ 15 հանձնարարականը՝ ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ (այսուհետ՝ Թիվ 15 ԸՔՀ): Սա համապարփակ ուղեցույցային փաստաթուղթ է ԵԽ անդամ պետությունների համար՝ օրենսդրությունում ատելության խոսքը սահմանելիս կամ գոյություն ունեցող կառուցակարգերը բարելավելիս: ՌԱԵՀ-ն, որպես Եվրոպայի խորհրդի մարմին, Թիվ 15 հանձնարարականում մեծապես հիմնվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մեկնաբանությունների վրա:

1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Միջազգային իրավունքում շրջանառվում են ատելության խոսքի մի քանի սահմանումներ: Սույն հետազոտության նպատակներից ելնելով, մենք ընտրել ենք առավել կարևոր հինգ սահմանումներ:

Առաջինը Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Ատելության խոսքի վերաբերյալ 1997 թվականի հանձնարարականով ներկայացված սահմանումն է (այսուհետ՝ ՆԿ հանձնարարական, իսկ Նախարարների կոմիտեն՝ ՆԿ), որով առաջին անգամ ամրագրվել է ատելության խոսքի հետևյալ սահմանումը.

> *«Արտահայտվելու բոլոր ձեւերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական **ատելությունը**, այլատյացությունը, հակասեմականությունը կամ **անհանդուրժողականության** վրա հիմնված ատելության այլ ձեւեր, ներառյալ՝ անհանդուրժողականությունը արտահայտված ազգային փոքրամասնությունների, միգրանտների եւ ներգաղթյալ ծագում ունեցող անձանց դեմ ագրեսիվ ազգայնամոլությամբ եւ էթնոցենտրիզմով, **խտրականությամբ** եւ **թշնամանքով**»*[1] [2]:

Սահմանումից բխում է, որ ատելության խոսքը ընդգրկում է ոչ միայն ատելության առերևույթ արտահայտումը, այլ նաև սպառնալիքը, ծաղրը, նվաստացումը,

[1] Ատելության խոսքի վերաբերյալ Նախարարների կոմիտեի Թիվ R (97) 20 հանձնարարականն ուղղված Անդամ Պետություններին:

[2] Տե՛ս նաեւ ատելության խոսքի սահմանումը, որը նշված է ՌԱԵՀ-ի թիվ 15 ԸՔՀ-ի ներածական մասում:

հրահրումը, որոնք կարող են իրականացվել նաև ոչ հրապարակային եղանակով, լատենտային կերպով, առանց վիրավորական, թշնամական արտահայտությունների օգտագործումով՝ նույնիսկ առանց քրեաիրավական հետևանք առաջացնելու, որոնք, սակայն, խտրական են, դրդված ատելության շարժառիթով, հանգեցնում են անհանդուրժողականության՝ թեև առերևույթ թշնամական, ատելության, վիրավորական արտահայտություններ չեն պարունակում: Ատելության տարածումը, հրահրումը, խթանումը կամ արդարացումը կարող են կատարվել նույնիսկ առանց վիրավորական, ցնցող, անհանգստացնող արտահայտությունների կամ բռնության կոչերի: Այդպիսի օրինակ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի* գործով վճռի փաստերը: Վիճահարույց արտահայտությունները, որոնք թուրք քաղաքական գործիչը կատարել էր Լոզան քաղաքի հրապարակում՝ հանրահավաքի ընթացքում, առերևույթ որևէ բռնության կոչ, հրապարակային վիրավորանքներ հայերի նկատմամբ չէին պարունակում: Այդուհանդերձ, Շվեյցարիայի իշխանությունները նրա դեմ հարուցել էին քրեական գործ ցեղասպանության հերքման հիմքով, քանի որ գտել էին, որ հրապարակային արտահայտությունները հավասարազոր էին ատելության խոսքի: [3] Այսպիսով, ատելության խոսքի սահմանումը պարտադիր չէ, որ ներառի բռնության, ատելության հրապարակային կոչերի հատկանիշներ: Նույնիսկ առերևույթ բարյացակամ, ոչ վիրավորական արտահայտությունները կարող են պարունակել ատելության, թշնամության, անհանդուրժողականության, խտրականության բովանդակություն: Հետևաբար, ատելության խոսքի իրավական սահմանումը պարտադիր չէ, որ պարունակի ձևակերպումներ առերևույթ հարձակողական բնույթի, թշնամական խոսքի դրսևորումների դեմ:

[3] Փերինչեքն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ), թիվ 27510/08, 15/10/2015. Հրապարակային իր ելույթում Փերինչեքը նշել է, որ հայերի ցեղասպանություն մասին պնդումները <<միջազգային սուտ է>>, որը հնարել էին Ցարական Ռուսաստանը և Ֆրանսիան առաջին աշխարհամարտի ժամանակ, որպեսզի մասնատեին Թուրքիան, և որ այդ սուտը այժմ տարածում են ԵՄ-ն և Միացյալ Նահանգները, որ Թուրքիայի և Ռուսաստանի արխիվները ցույց են տալիս, որ ցեղասպանություն չի եղել, այլ եղել են էթնիկ և կրոնական հիմքերով բախումներ, որոնք կազմակերպել էին Թուրքիայի քաղաքական թշնամիները, և այլն: Այսինքն, Փերինչեքը առերևույն վիրավորական, բռնության հրապարակային կոչեր չէր արձակել: Այդուհանդերձ, ըստ էության նրա ելույթը ցեղասպանության հերքում էր, սակայն ոչ թե՝ որպես պատմական փաստի, որին նա հանգել էր որպես պատմաբան իր կողմից կատարած հետազոտությունների հիման վրա, այլ առաջնորդված ատելության շարժառիթով՝ զուտ 1915 թվականի դեպքերը որպես ցեղասպանություն հերքելու նպատակով: Ցավոք, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հակառակ որոշումը կայացրեց, քանի որ դատական ստուգման իր շրջանակը նեղացրեց զուտ արտահայտություննեի տեքստային շրջանակի վրա, առանց խորամուղ լինելու կոնտեքստի մեջ, որտեղ կոնտեքստը Փերինչեքի՝ որպես քաղաքական գործչի անցած ճանապարհն էր, նրա նախկինում կատարած արտահայտությունները, նրա գործունեությունը վերջին տասնամյակների ընթացքում, որոնք լի էին հայատյաց արտահայտություններով, գործողություններով, գործունեությամբ, և այլ փաստերով, որոնք բավարար չափով ցույց էին տալիս, որ նրա ելույթի դրդապատճառը հայերի նկատմամբ ունեցած ատելությունն էր, անհանդուրժողականությունը, նախապաշարմունքը, ի վերջո՝ ժխտողականությունը, որոնք ատելության խոսքի օբյեկտիվ հատկանիշներ են:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնելը, որ Նախարարների կոմիտեի հանձնարարականում արտահայտված է ատելության խոսքի մեկ այլ կարևոր սկզբունքային կետ. ատելության խոսքը անհրաժեշտաբար ուղղված է *մարդկանց կոնկրետ խմբին*: Կոնկրետ տվյալ դեպքում Հանձնարարականը ներառում է ատելության խոսքի հասցեատեր խիստ սահմանափակ թվով մարդկանց խմբեր՝ միգրանտներ, ազգային փոքրամասնություններ և փախստականներ: Մինչդեռ, որպես կանոն, ատելության խոսքը ընդգրկում է խտրականության արգելքով պաշտպանվող հատկանիշների լայն շրջանակ՝ ընդհուպ ատելության համընդհանուր արգելքը՝ անկախ որևէ հատկանիշից: Այդուհանդերձ, սահմանումը արտահայտում է հիմնարար մի սկզբունք, ըստ որի ատելության խոսքը պետք է ուղղված լինի մարդկանց կոնկրետ խմբի դեմ: Ատելության խոսքի կարգավորման հիմքում ընկած հիմնական նպատակը մարդկանց կոնկրետ խոցելի խմբերի պաշտպանությունն է, որոնք շարունակաբար ենթարկվել են խտրականության՝ պատմականորեն, շարունակաբար և համակարգված եղանակով: Հետևաբար, հարց է բարձրանում, թե ատելության խոսքի սահմանումը օրենսդրորեն նախագծելիս արդյո՞ք պետք է որպես ուղենիշ ընտրել այն հանգամանքը, որ օրենսդրական նորմը պետք է ուղղված լինի մարդկանց խմբի (էթնիկ, ազգային, ռասայական, սոցիալական, մշակույթային, և այլն) նկատմամբ ատելության արգելքին՝ ինչպես ԵԽ-ն է հակված:

Երկրորդ սահմանումը, որը ցանկանում ենք ներկայացնել, ներկայացված է ՄԱԿ-ի ատելության խոսքի վերաբերյալ ռազմավարական ծրագրում.

> *«Խոսքի միջոցով, գրավոր կամ վարքագծի միջոցով հաղորդակցման ցանկացած տեսակ, որը հարձակողական բնույթ է կրում կամ օգտագործում է նվաստացուցիչ կամ խտրական խոսք՝ ուղղված անձին կամ խմբին՝ այն բանի հիման վրա, թե ովքեր են նրանք, այլ կերպ ասած՝ նրանց կրոնի, էթնիկական պատկանելության, ազգության, ռասայի, մաշկի գույնի, ծագման, սեռի կամ ինքնության այլ գործոնի հիման վրա»*[4]:

Այս սահմանումը ներառում է պաշտպանվող հատկանիշների ավելի լայն ցանկ՝ ռասա, մաշկի գույն, ծագում, սեռ, և այլն, ինչպես նաև սահմանում է արարքի՝ մարդկանց խմբին ուղղված լինելու հատկանիշը, թեև միևնույն ժամանակ սահմանում է, որ ատելության խոսքը կարող է ուղղված լինել նաև կոնկրետ անձի նկատմամբ: Այդուհանդերձ, այս սահմանումը կարգավորում է ուղիղ հակադարձ բնույթի խոսքի տեսակ, քան Նախարարների կոմիտեի սահմանումը. սահմանում է առերևույթ

[4] https://www.un.org/en/genocideprevention/documents/UN%20Strategy%20and%20Plan%20of%20Action%20on%20Hate%20Speech%2018%20June%20SYNOPSIS.pdf (վերջին մուտքը՝ 2020 թվականի հուլիսի 27-ին):

վիրավորական, հարձակողական բնույթի արտահայտություններ և իր շրջանակից դուրս է թողնում առերևույթ չեզոք իմաստ ունեցող արտահայտություններով կառուցված խոսք, որը միևնույն ժամանակ ունակ է տարածել, հրահրել, հարուցել, գեներացնել ատելության խոսք։

Համեմատելով Նախարարների կոմիտեի և ՄԱԿ-ի սահմանումները, գալիս ենք եզրակացության, որ ատելության խոսքի օրենսդրական պատշաճ սահմանումը փնտրելիս առավել կարևոր է ոչ թե այնպիսի սահմանումը գտնելը, որով հնարավոր լինի կարգավորել անօրինական խոսքի բոլոր հնարավոր տեսակները, այլ, որ նման սահմանումը չվնասի ազատ խոսքը՝ նույնիսկ խոսքի այն տեսակը, որը թեև պարունակում է ծայրահեղ անհանգստացնող ու վիրավորական, արժանապատվությունը նվաստացնող խոսք, սակայն որոշ հանգամանքների ներքո կարող է հանրային կարևորություն ունենալ։ Այդպիսի խոսքի տեսակ է, օրինակ, քաղաքական պոլեմիկան, որը հաճախ լի է չափազանցություններով, վիրավորական արտահայտություններով, թիրախավորմամբ, ինտենսիվությամբ, ինչպես օրինակ թրոլինգը, սակայն, միևնույն ժամանակ, իրենց չի ներկայացնում հանրային վտանգավորություն, մինչդեռ կարող է կարևորություն ներկայացնել քաղաքական խոսքի համատեքստում, քանի որ ապահովում է կարևոր իրադարձությունների վերաբերյալ ինֆորմացիայի ազատ հոսքին։

Երրորդը սահմանված է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ) 4-րդ հոդվածում, որի «ա» կետի համաձայն՝ պետություններից պահանջվում է օրենքով պատժելի արարք սահմանել հետևյալը.

i) *ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների ցանկացած տարածում,*
ii) *ռասայական խտրականության հրահրում,*
iii) *ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հիման վրա անձի կամ անձանց դեմ ուղղված բռնարարքների հրահրում>>:*

Այս սահմանման մեջ շեշտը դրված է ոչ թե ատելության խոսքի արտահայտման, այլ ատելության գաղափարների տարածման, խտրականության և բռնության հրահրման վրա։

Չորրորդը սահմանված է Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածում, որի 2-րդ կետով պետություններից պահանջվում է ներպետական օրենքով արգելել «ազգային, ռասայական կամ կրոնական ատելության *ցանկացած քարոզչություն, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում է*»: Այս հոդվածը պետք է դիտարկվի ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածի հետ մեկտեղ, որով նշվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի ազատ

արտահայտվելու իրավունք»: Սրանով ընդգծվում է ավելի վաղ ներկայացված այն տեսակետը, որ ատելության խոսքն օրենսդրորեն արգելելը համատեղելի է ազատ արտահայտվելու իրավունքի հետ: Ինչպես ՌԽՎՄԿ-ի դեպքում էր, այստեղ նույնպես կարեւոր է նշելը, որ ատելության արտահայտման ոչ բոլոր ձեւերն են արգելված, այլ ատելության *քարոզչությունը,* որը *խտրականության*, *թշնամանքի* կամ *բռնության* հրահրում է: Այսպիսով, Դաշնագիրը ատելություն հասկացությունը տրոհում է երեք հասկացությունների. *խտրականություն*, *թշնամանք* և *բռնություն*, իսկ արգելվող գործողությունը՝ *սադրանք* կամ *հրահրում*: Կարեւոր է նկատի ունենալը, որ ՔՔԻՄԴ-ով ուղղակիորեն չի պահանջվում այդ նպատակին հասնելու համար կիրառել քրեական իրավունքը, այլ փոխարենը կարող են կիրառվել քաղաքացիական իրավունքի կամ վարչական իրավունքի կարգավորումներ, եթե դա նպատակահարմար է, բավարար ու համարժեք[5]:

Հինգերորդը, գուցե ամենակարևորը, որի վրա մենք հիմնվում ենք, Եվրոպայի խորհրդի՝ Ռասիզմի և անհանդուրժողականության Եվրոպական հանձնաժողովի Թիվ 15 Ընդհանուր քաղաքականության հանձնարարականում նշված սահմանումն է, որում սահմանված է առավել համապարփակ ու ժամանակակից մոտեցում, քան նախկին երեք միջազգային սահմանումները, և այդ առումով կարող է ապահովել Հայաստանում ստեղծված իրավիճակի համարժեք իրավական արձագանք: Սահմանումը հետևյալն է.

> *Սույն Հանձնարարականի նպատակների համար ատելության խոսքը ենթադրում է արտահայտման մեկ կամ ավելի ձևերի օգտագործում, այսինքն՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ նվաստացման, ատելության կամ անարգման, ինչպես նաև այդ անձանց կամ խմբի նկատմամբ ցանկացած ոտնձգության, վիրավորանքի, բացասական կարծրատիպերի ձևավորման, խարանի կամ սպառնալիքի քարոզչություն, խթանում կամ հրահրում, և վերոնշյալ արտահայտման բոլոր ձևերի ցանկացած արդարացում, որը հիմնված է անձնական հատկանիշների կամ կարգավիճակի ոչ սպառիչ ցանկի վրա, ներառյալ՝ «ռասան», մաշկի գույնը, լեզուն, կրոնը կամ դավանանքը, ազգությունը, ազգային կամ էթնիկ պատկանելությունը, ինչպես նաև ծագումը, տարիքը, հաշմանդամությունը, սեռը, գենդերը, գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը:*

[5] *Մոհամեդ Ռաբբաեն, Ա.Բ.Ս.ն եւ Ն.Ա.-ն ընդդեմ Նիդեռլանդների* [*Mohamed Rabbae, A.B.S and N.A v. The Netherlands*] (2016 թվականի հուլիսի 14), Թիվ 2124/2011 գրություն, 10.4 պարբերություն:

Այս սահմանմամբ կարգավորումը ուղղված է ինչպես անձի, այնպես էլ անձանց խմբի նկատմամբ: Պաշտպանված հատկանիշների ցանկը լայն է՝ ընդհուպ ներառելով համընդհանուր խտրականության արգելքը: Արգելված գործողությունների ցանկը ներառում է ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ գործողություններ՝ հրահրում, խթանում, քարոզչություն, արդարացում:

Վեցերորդը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանումն է: Դատական այս ատյանը աչքի է ընկել նրանով, որ առավելապես նախընտրել է ատելության խոսքի գործերը քննել Եվրոպական կոնվենցիայի 10-րդ, այլ ոչ թե 17-րդ հոդվածի ներքո: Եթե 17-րդ հոդվածը սահմանում է խոսքի բացարձակ արգելք, առանց որևէ վերապահման ու բացառության, 10-րդ հոդվածը թույլ է տալիս վիճահարույցը խոսքը փոխհավասարակշռել այլ լեգիտիմ իրավունքների ու շահերի հետ և գտնել փոխզիջումային տարբերակ, որի արդյունքում <<օրինականացվում է>> ատելության խոսքի երանգներ պարունակող խոսքը: Դա հատկապես կարևոր է քաղաքական խոսքի պարագայում, քանի որ դա մեծ նշանակություն ունի հանրային կյանքում, ժողովրդավարական կառավարման շրջանակում: Եվրոպական դատարանի սահմանումը հետևյալն է.

> *«Պարտադիր չէ, որ ատելության հրահրումը հանդիսանա բռնության կոչ կամ այլ տեսակի հանցավոր արարք: Անձանց նկատմամբ ոտնձգումները նրանց վիրավորելով, ծիծաղի առարկա դարձնելով կամ հասարակական որոշ խմբերի հասցեին վիրավորանքի խոսքեր հնչեցնելով, կարող են բավարար հիմք հանդիսանալ իշխանությունների համար արդարացնելու համար պայքարը ռասիստական հայտարարությունների դեմ ազատ խոսքից անպատասխանատու եղանակով օգտվելու արդյունքում: Այդ կապակցությամբ դատարանը շեշտում է, որ սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունը նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը».*[6]

Եվրոպական դատարանի այս դիրքորոշումը կարևոր է նրանով, որ դատարանը ըստ էության սահմանեց, որ ատելության խոսքը չպետք է դիտել միայն քրեական իրավունքի դաշտում; Մինչ այդ տարածված էր այն մոտեցումը, որ ատելության խոսքը հանցավոր արարք է, որի համար անհրաժեշտ են միայն քրեաիրավական պաշտպանության միջոցներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ապահովեցին խոսքի արտահայտման ու տարածման միջոցների ավելի մեծ

[6] *Վեջդելանդն ու այլոք ընդդեմ Շվեդիայի*, թիվ 1813/07, 9/02/2012, կետ 55:

բազմազանություն, որի արդյունքում առավել կարևորություն ստացան քաղաքացիական ու վարչական, քան քրեական իրավական պաշտպանության միջոցները: Նման միջոցները երբեմն ավելի նպատակահարմար են ու արդյունավետ, քանի որ ավելի պարզ են, գործում են ավելի արագ, ապահովում են գումարային փոխհատուցման առավել արդյունավետ հնարավորություններ և իրավական պաշտպանության ավելի գործնական միջոցներ, քան քրեական պատասխանատվությունը:

Այսպիսով, վերևում ներկայացվեցին ատելության խոսքի հինգ սահմանումների մոդելներ, որոնք ունեն ընդհանուր եզրեր և տարբերություններ: Մեր կողմից առաջարկվում է հիմնվել առավելապես ՌԱԵՀ թիվ ԸՔՀ-ի և եվրոպական դատարանի առաջարկած մոդելների վրա ատելության խոսքի օրենսդրական կարգավորում սահմանելիս: Այդ մասին մանրամասն վերլուծությունը տրամադրվում է ստորև:

2. ԱՐԴՅՈ՞Ք ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Օրենքի նախագծում բացակայում է ատելության խոսքի առանձին սահմանումը: Հարց է բարձրանում, թե արդյոք անհրաժեշտ է ունենալ ատելության խոսքի ինքնուրույն սահմանում օրենքում: Դա մեծամասամբ իրավական քաղաքականության հարց է: Հաշվի առնելով ՀՀ-ում տիրող ընդհանուր իրավիճակը, մասնավորապես, հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում ատելության խոսքի տարածումը և միտումները, առաջարկվում է օրենքով սահմանել ատելության խոսքի ինքնուրույն սահմանում: Դա նախ և առաջ անհրաժեշտ է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի՝ որպես հիմնարար իրավունքի տեսանկյունից:

Եթե քրեական օրենսդրությունում ատելության խոսքը սահմանված է առանձին իրավական դրույթներով (Քր. օր. 226 և 226.2 հոդվածներ), քաղաքացիական և վարչական օրենսդրությունում բացակայում է ատելության խոսքի առանձին սահմանումներ: Դա նշանակում է, որ ատելության խոսքը քաղաքացիական և վարչական իրավունքի օբյեկտ չի հանդիսանում: Դա հանգեցնում է բազմաթիվ խնդիրների իրավակիրառ պրակտիկայում: Մինչև դատարան դիմելը նախ անհրաժեշտ է պարզելը, թե որ կառուցակարգով է առավել նպատակահարմար վիճարկել ատելության խոսքը: Ատելության խոսքը, որպես կանոն ասոցացվում է հանցագործության հետ և դրա նյութահիրավական հիմքերն էլ սահմանված են առավելապես, եթե ոչ բացառապես, ՀՀ քրեական օրենսգրքում: Մասնավորապես, Քրեական օրենսգրքով քրեականացված են ցեղասպանության հերքումը (հոդված 397[1] – ցեղասպանության հերքումը), ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք

հարուցելը (հոդված 226), բռնության կոչը՝ խտրականության համընդհանուր արգելքի հիմքով (հոդված 226.2)։ Սակայն այս հոդվածները ատելության խոսքը սահմանում են սահմանափակ հատկանիշներով՝ **ազգային**, **ռասայական** պատկանելիության և **կրոնական** համոզմունքի հատկանիշերով։ Սահմանադրության 29-րդ հոդվածում խտրականության արգելքով պաշտպանված այլ հատկանիշներով կատարված գործողությունները չեն մտնում նշված հոդվածների դիսպոզիցիայի մեջ։ Այսպիսով, արարքը օբյեկտիվորեն կարող է ներկայացնել հանրային մեծ վտանգավորություն, որի համար անհրաժեշտ է քրեական իրավունքի պատժող, կանխող ու նախականխող ուժը, մինչդեռ դրա իրավական որակումը կարող է քրեաիրավական հարաբերությունների շրջանակից դուրս մնալ։ Պրակտիկայում դա հաճախ է տեղի ունենում։

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ քրեական պատասխանատվությունը միշտ չէ, որ արդյունավետ պաշտպանության միջոց է հանդիսանում։ Նախ, քրեական դատավարությունը ծավալուն է, վարույթը տևում է երկար, հաճախ քաղաքացին շահագրգռված չէ, որ իրավախախտը ենթարկվի քրեական պատասխանատվության, այլ ձգտում է ստանալ նյութական փոխհատուցում կամ համացանցում ատելության բովանդակության արգելափակման ու հեռացման, մինչդեռ քաղաքացիական հայցի հարուցումը քրեական հետապնդման շրջանակում կրկին երկարատև ջանքեր է պահանջում։

Կարևոր հանգամանք է նաև, որ երբեմն ատելության խոսքը հասարակական վտանգավորության աստիճանով չի պահանջում քրեաիրավական ներգործության միջոցներ, սակայն միևնույն ժամանակ պահանջում է վարքագծի կարգավորում հասարակական միջավայրում։ Օրինակ, սոցիալական ցանցում անձի նկատմամբ սեռական բնույթի հայոյանքը ատելության կամ կանխակալ բացասական շարժառիթով կարող է չներգրավել Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը, սակայն կարող է խախտել հասարակական կարգը, հետևաբար նման վարքագիծը կարիք ունի կարգավորման հասարակական կարգի պաշտպանության տեսանկյունից, որն էլ վարչաիրավական կարգավորման առարկա է։

Հաշվի առնելով սոցիալական ցանցի, որպես հաղորդակցության միջոցի բնույթը, մասնավորապես, այդ տիրույթում ինֆորմացիայի տարածման արագությունը սփռվածությունը, լայն մատչելիությունը և ժամանակի ու տարածության մեջ գրեթե անսահմանափակ հասանելիությունը, որում ինֆորմացիայի արխիվացում հասկացություն գրեթե գոյություն չունի, ինչպես նաև արատավորող բնույթի ինֆորմացիայի հեռացման հետ կապված դժվարությունները, իսկ երբեմն էլ անհնարինությունը, քաղաքացիական և վարչական բնույթի իրավական պաշտպանության միջոցները երբեմն ավելի մատչելի ու արդյունավետ են, քան քրեականը։ Առավել արդյունավետ կարող են լինել նաև ինքնակարգավորման

մեխանիզմները, որոնք կիրառում են ցանցային օպերատորները, ինտերնետ ծառայություն մատուցող ընկերությունները և ռեգիստրարները:

Կարևոր հանգամանք է նաև, որ ոչ Քաղաքացիական օրենսգիրքը և ոչ էլ Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը ատելության խոսքի ինքնուրույն, առանձին դրույթ չեն պարունակում: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, որ քաղաքացիները ստիպված են ատելության խոսքից պաշտպանվել Քաղաքացիական օրենսգրքում վիրավորանքի ու զրպարտության համար նախատեսված իրավական կառուցակարգով՝ սահմանված Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով: Սակայն այս հոդվածը կառուցված է բացառապես վիրավորանքից ու զրպարտությունից իրավական պաշտպանություն հայցելու համար՝ որոշակիորեն հաշվի առնելով նաև լրատվամիջոցների շահերը: Վիրավորանքը և զրպարտությունը ատելության խոսք չեն: Այդ պատճառով 1087.1 հոդվածը իր ծավալուն դրույթներով, բազմիցս մեկնաբանված դատարանների կողմից, չի կարող ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն ատելության խոսքի դեմ:

Այսպիսով, ատելության խոսքի քաղաքացիաիրավական և վարչաիրավական պաշտպանության միջոցներ ունենալու համար առաջարկվում է Իրավահավասարության մասին օրենքի նախագծում սահմանել ատելության խոսքի առանձին, ինքնուրույն դրույթ:

3. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ատելության խոսքի դրույթը հակախտրականության օրենքում կարող է հանդիսանալ հովանոց-նորմ քրեական, քաղաքացիական և վարչական օրենսդրությունում: Ավելին, այն կարող է հանդիսանալ ուղեցույց-նորմ ճյուղային իրավունքում ատելության խոսքի կարգավորման համար, որպեսզի արտահայտի իրավունքի այդ ոլորտում հիմնական մարտավարական ուղղությունները: Ներկայումս, այդ դերակատարումը ստանձնել է Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը, որը, ինչպես արդեն նշել ենք, չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, սահմանված է պաշտպանված հատկանիշների նեղ շրջանակով, կարգավորում է միայն թշնամություն հարուցող խոսքը, որի արդյունքում կարգավորումից դուրս են մնում ատելության խոսքի մի շարք այլ դրսևորումներ, ինչպես օրինակ խտրականության, անհանդուրժողականության, բռնության հրահրումը և տարածումը: Այդուհանդերձ, այս հոդվածը ուղեցույցային է և ըստ այդմ կանխորոշում է ներկա իրավական քաղաքականությունը՝ հատկապես դատական պրակտիկան ու նախադեպային իրավունքը ՀՀ իրավական համակարգում: Վստահաբար կարելի է ասել, որը 226-րդ հոդվածի նեղ շրջանակն է պատճառը, որ

ատելության խոսքի քրեաիրավական պրակտիկան չի զարգանում, իսկ եղած սահմանափակ պրակտիկան էլ չի համապատասխանում միջազգային իրավունքի պահանջներին։ Նոր քրեական օրենսգրքի նախագծում ատելության խոսքի կարգավորումը նկատելիորեն բարելավված է, որը ամենայն հավանականությամբ շտկումներ կմտցնի դատաիրավական պրակտիկայում։ Այդուհանդերձ, առաջարկվում է հատուկ օրենքում ատելության խոսքը սահմանել առանձին հոդվածով, որպեսզի ատելության խոսքը կարգավորվի էքսպլիսիտ եղանակով, այլ ոչ թե ենթադրաբար (implied)՝ հակախտրականության նորմերի ընդհանուր կոնտեքստում։

Ատելության խոսքի մոդելը սահմանելիս առաջնորդվել ենք այն գաղափարով, որ սույն օրենքով անհրաժեշտ է ունենալ հնարավորին պարզ ու լայն սահմանում, որպեսզի դրանք մանրամասնորեն, կոնկրետ հանգամանքներում այնուհետև մեկնաբանվեն դատարանների կողմից՝ ինչպես վիրավորանքի և զրպարտության գործերով ստեղծված դատական նախադեպային իրավունքը և իրավակիրառ պրակտիկան։

Ատելության խոսքի մոդելը սահմանելի որպես համեմատական եզր օգտվել ենք ինչպես միջազգային իրավունքի վերը նշված աղբյուրներից, այնպես էլ ԵԽ անդեմ պետությունների ներպետական օրենսդրական կարգավորումներից։ Առավելապես ուսումնասիրվել են Սերբիայի, Ռումինիայի և Մոնտենեգրոյի օրենսդրական կարգավորումները ինչպես քաղաքացական, այլապես էլ վարչական օրենսդրությունում։

Առաջարկում ենք ատելության խոսքի հետևյալ սահմանումը հատուկ օրենքում։

Ատելության խոսքը

> *Անձի կամ անձանց խմբի վերաբերյալ հաղորդակցված խոսքի ցանկացած տեսակ, հրապարակային կամ ոչ հրապարակային եղանակով, որը հրահրում է անհանդուրժողականություն, խտրականություն ատելություն կամ թշնամություն՝ պայմանավորված սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի, ազգային փոքրամասնությանը պատկանելիության, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքի վրա։*

Նախ, այս սահմանումը նախագծված է բավականաչափ լայն, որպեսզի հանդիսանա հովանոց-նորմ ատելության խոսքի կարգավորման համար օրենսդրության երեք ճյուղերում՝ քրեական, վարչական և քաղաքացիական օրենսդրության համար։ Ըստ այդմ, այս սահմանումը ընդգրկում է ինչպես քրեական,

այնպես էլ քաղաքացիական և վարչական պատասխանատվության համար անհրաժեշտ օբյեկտիվ հատկանիշները։

Երկրորդ, հաշվի առնելով, որ սկզբունքորեն անհնարին է սահմանել ատելության խոսքի այնպիսի ձևակերպում, որն ընդգրկի վերը նշված բոլոր վեց մոդելների ամենակարևոր սկզբունքները և հատկանիշները, որոշեցին, ինչպես նշվեց վերևում, որ առավել նպատակահարմար կլինի օրենքով սահմանել ատելության խոսքի հնարավորինս լայն, հակիրճ և հստակ սահմանում, որը հետագայում դատարանները շարունակաբար կմեկնաբանեն՝ աստիճանաբար կառուցելով նախադեպային իրավունք և դատական պրակտիկա։ Այդպիսի զարգացում ունեցավ 2010 թվականին ընդունված Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը, որի՝ դատարանների կողմից շարունակական ու հետևողական մեկնաբանության արդյունքում 2020 թվականի դրությամբ արդեն ստեղծվեց վիրավորանքի ու զրպարտության կուռ ու համապարփակ, կայացած իրավական կառուցակարգ։ Ակնկալվում է, որ ակտիվ իրավակիրառ պրակտիկայի արդյունքում, 3-4 տարում կարելի է հասնել ատելության խոսքի համապարփակ օրենսդրության և դատական պրակտիկայի ձևավորմանը, որը կհանդիսանա կանխատեսելի, իրավական որոշակիության վրա հիմնված իրավական կառուցակարգ։

Ատելության խոսքի և իրավաչափ խոսքի միջև հիմնական ջրբաժանը ատելության շարժառիթն է: Հենց ատելության շարժառիթի ներկայությունը կամ բացակայությունն է, որ խոսքը բաժանում է Կոնվենցիայի 10 և 17-րդ հոդվածների միջև, ՀՀ Սահմանադրության 42 և 77-րդ հոդվածների միջև։ Հիշենք, որ անհանգստություն պատճառող, ցնցող, վիրավորական ու նույնիսկ վուլգար խոսքը կարող է անցնել ազատ խոսքի պաշտպանության տակ՝ որոշակի հանգամանքների ներքո։ Օրինակ, քաղաքական ծայրահեղ խոսքը, որը լի է ծայրահեղություններով, վիրավորական գնահատող դատողություններով, անձի թիրախավորմամբ ու հաղորդակցման այլ ծայրահեղ բնույթի տեսակներով, ինչպիսին է, օրինակ, թրոլինգը, ատելության խոսք չի համարվում, եթե բացակայում է ատելության դրդապատճառը, որը բացահայտվում է անձի կամ անձանց խմբի կոնկրետ հատկանիշների հիմքով խտրականություն, թշնամանք, անհանդուրժողականություն հարուցելու մտադրությամբ։ Այսպիսով, իրավակիրառ պրակտիկայում սույն հոդվածը կիրառելիս առաջին խնդիրը, որը պետք է լուծել, արարքի մեջ ատելության շարժառիթի առկայության հիմնավորումն է։ Այդ մեթոդաբանության վրա է հիմնված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը. նույնիսկ վիրավորական բնույթի <<էմոցիոնալ արձագանքը>> ինչ-ինչ դեպքերի կամ մարդկանց որոշ խմբերի արարքների նկատմամբ դեռ բավարար չէ արարքը ատելության խոսք սահմանելու համար, եթե դա արվել է առանց ատելության շարժառիթի՝ անձի կամ անձանց խմբի կոնկրետ հատկանիշի

հիմքով։[7] Այդ մոտեցումն է նաև ամրագրված ՌԱԵՀ-ի թիվ 15 ԸՔՀ-ի նախաբանում, ըստ որի *<<արտահայտվելու տարբեր ձևերը, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են, չպետք է զուտ այդ հիմքով համազոր լինեն ատելության խոսքին>>։* Այսպիսով, անձի կամ անձանց խմբի կոնկրետ հատկանիշով պայմանավորված ատելության շարժառիթն է, որ խոսքի տեսակը վերածում է ատելության խոսքի։ Իրավակիրառ պրակտիկայում հիմնական դժվարությունը կայանում է ատելության շարժառիթի փնտրտուքի ու հիմնավորման մեջ։ Եթե ատելության շարժառիթի առկայությունը չի հիմնավորվում, արտահայտությունը չի որակվում որպես ատելության խոսք, այլ կարող է անցնել ազատ խոսքի պաշտպանության տակ ու պաշտպանվել մրցակցող այլ իրավաչափ շահերով՝ որպես լեգիտիմ խոսք, որքան էլ որ դա հակասական հնչի։

Տվյալ դեպքում ձևակերպման նախնական տարբերակում մենք բառացիորեն շեշտել էինք ատելության առկայությունը որպես շարժառիթ՝ անձի կամ անձանց խմբի վերաբերյալ հայտարարություններ անելիս։ Սակայն հետագայում որոշեցին հրաժարվել դրանից, քանի որ այն հանգամանքը, որ հոդվածում սահմանված են պաշտպանված հատկանիշները, արդեն իսկ արտահայտում է անհանդուրժողականության, թշնամության և այլ գործողությունների ու արարքների կանխակալ բացասական դրդապատճառը՝ այդ հատկանիշներով պայմանավորված նախապաշարմունքի առկայությունը։ Ատելության շարժառիթի բառացի առկայությունը չգտանք նաև տարբեր երկրների համապատասխան օրենսդրական կարգավորումներում։

Որպես կանոն, ատելության խոսքի սահմանումները հիմնված են հինգ բաղադրատարրերի վրա. հաղորդակցման ձևը (հրապարակային, գրավոր, բանավոր, պատկերի կամ ձայնի միջոցով, և այլն), գործողությունը (հրահրել, խթանել, քարոզել, աջակցել, խրախուսել, և այլն), գործողության օբյեկտը (անհանդուրժողականություն, խտրականություն, բռնություն, թշնամություն), գործողության թիրախը (անձի և/կամ անձանց խումբ) և պաշտպանված հատկանիշները, որպես արարքի սուբյեկտիվ հատկանիշ կամ դրդապատճառ (սեռ, ռասա, ազգություն, մաշկի գույն, տարիք, և այլն)։ Ներկայացնենք երեք օրինակ՝ Սերբիայի, Մոնտենեգրոյի և Ռումինիայի ազգային օրենքներից.

«Խտրականության արգելքի մասին» Սերբիայի օրենքի 11-րդ հոդվածում ատելության խոսքը սահմանված է հետևյալ կերպ.

[7] Սավվա Տերենտևն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 10692/09, 28/08/2018

Արգելվում է արտահայտել գաղափարներ, տեղեկություններ կամ կարծիքներ՝ հրահրելով խտրականություն, ատելություն կամ բռնություն անձի կամ անձանց խմբի դեմ՝ նրանց անձնական հատկանիշների հիմքով, ինչպես նաև հանրային կամ այլ հրապարակումներում, հավաքներում կամ հանրային տարածքներում՝ գրառումներ կամ խորհրդանիշներ գրելու կամ ցուցադրելու կամ որևէ այլ կերպ։

Այս սահմանման մեջ նշվում է հաղորդակցման ձևը (գաղափարներ, տեղեկություններ, կարծիքներ), գործողությունը (հրահրելը), գործողության օբյեկտը (ատելություն, բռնություն), գործողության թիրախը (անձ կամ անձանց խումբ) և պաշտպանված հատկանիշները (նրանց հատկանիշների հիմքով)։ Հատկանիշների ցանկը չի սահմանվում, քանի որ օրենքի այլ հոդվածում դրանք նշված են բաց ցանկի տեսքով։ Ի հավելումն, այս հոդվածում մասնավորեցված է հրապարակային տարածքների նշումը (հրապարակներ, հավաքներ կամ հանրային տարածքը), քանի որ հոդվածի հիմնական առարկան ատելության խոսքի կարգավորումն է հասարակական վայրերում։

Ռումինիայի «Խտրականության դեմ պայքարի մասին» օրենքում առանձին հոդվածով սահմանված է սահմանված է հրապարակային եղանակով ատելության խոսքի կարգավորումը, որը հետևյալն է.

<<...ազգայնա-շովինիստական բնույթի ցանկացած հասարակական վարքագիծ, ռասայական կամ ազգային պատկանելիության հիմքով ատելության ցանկացած հրահրում, կամ ցանկացած վարքագիծ, որի նպատակն է անձի արժանապատվությունը վնասելը կամ թշնամական, նվաստացնող, ստորացնող կամ վիրավորական միջավայր ստեղծելը, որն իրականացվում է անձի, անձանց խմբի կամ համայնքի հանդեպ՝ ռասայի, ազգության, էթնիկ պատկանելիության, կրոնի, սոցիալական ծագման կամ անբարյացակամորեն ընդունվող խմբի պատկանելու, հավատքի, սեռի, սեռական կողմնորոշման հիմքով հանդիսանում է իրավախախտում՝ բացառությամբ, եթե նման արարքները չեն մտնում քրեական իրավունքի շրջանակի մեջ։[8]

Ինչպես տեսնում ենք, այս հոդվածում նույնպես առկա են հաղորդակցման եղանակը (հասարակական վարքագիծ), գործողությունը (հրահրում, վնասել, միջավայր ստեղծել), գործողության օբյեկտը (թշնամական, ստորացնող, վիրավորական), թիրախը (անձ և անձանց խումբ) և պաշտպանված հատկանիշների

[8] Նույն տեսում. հոդված 15։

բաց ցանկ։ Հոդվածի վերջում հատուկ շեշտվում է քրեաիրավական տիրույթից դուրս գործողությունների բնույթը, քանի որ հոդվածը սահմանված է բացառապես որպես վարչաիրավական բնույթի արարքների կարգավորման նպատակով։

Երրորդը Մոնտենեգրոյի հակախտրականության մասին 2014 թվականի օրենքում 2017 թվականին որպես պրիմ հոդված ավելի ուշ ավելացված հետևյալ դրույթն է.

> *Ատելության խոսքը գաղափարների, հայտարարությունների, տեղեկությունների և կարծիքների արտահայտման ցանկացած եղանակ է, որը տարածում, հարուցում, խրախուսում և արդարացնում է անձի կամ անձանց խմբի նկատմամբ խտրականություն, ատելություն կամ բռնություն նրանց անձնական հատկանիշների, այլատյացության, ռասայական ատելության, հակասեմիտիզմի կամ անհանդուրժողականության՝ այդ թվում ազգայնականության, խտրականության և փոքրամասնությունների նկատմամբ ատելության եղանակով արտահայտված անհանդուրժողականության հիմքով։*

Այս հոդվածը կարելի է համարել ատելության խոսքի առավել ամբողջական ու հստակ սահմանում, որում սահմանված են հաղորդակցման եղանակները (գաղափարներ, հայտարարություններ, տեղեկություններ ու կարծիքները), գործողությունը (տարածում, հարուցում, խրախուսում և արդարացում), օբյեկտը (խտրականություն, այլատյացություն, բռնություն), թիրախը (անձ կամ անձանց խումբ), և պաշտպանված հատկանիշները (անձնական հատկանիշները)։ Ուշադրություն դարձնենք, որ այստեղ ատելության շարժառիթը բառացիորեն սահմանված է փոքրամասնությունների առումով, որը մասնավոր դեպք է։

Այսպիսով, կարևոր չէ հոդվածում նշել ատելության շարժառիթի առկայությունը, քանի որ իմպլիսիտ կերպով սահմանվում է, որ պաշտպանված հատկանիշների դրդապատճառով անհանդուրժողականության, խտրականության և թշնամական գործողությունների դրդապատճառը ատելության շարժառիթն է։

Հաջորդ կարևոր գաղափարը, որը ներառված է հոդվածում, դա ատելության խոսքի չորս կարևոր օբյեկտներն են (որի մասին նշվեց վերևում). խտրականությունը, անհանդուրժողականությունը, թշնամանքը և բռնությունը։ Սրանք հարձակողական բնույթի կամ չեզոք եղանակով արտահայտված կամ տարածված խոսքի հետևանքներն են։ Առաջին հայացքից կարող է թվալ, որ սրանք ընդամենը հոմանիշներ են։ Սակայն, իրավաբանորեն դրանք տարբեր հասկացությունն են և ներառում են տարբեր արարքներ, գործողություններ, մտադրություններ։ Թշնամանքը և բռնությունը առավել շատ արարքը տեղափոխում են քրեաիրավական տիրույթ՝ որպես հանրային մեծ վտանգավորություն ներկայացնող արարքներ, որոնց պետք է արձագանքել քրեական պատասխանատվության ու պատժի եղանակով, մինչդեռ խտրականությունը և

անհանդուրժողականությունը կարող են համարժեքորեն կարգավորվել նաև վարչական և քաղաքացիական բնույթի իրավական պաշտպանության միջոցներով: **Թշնամանքը ատելությունից տարբերվում է նրանով, որ երկրորդը չեզոք հոգեվիճակ է, մտածողություն, մինչդեռ թշնամանքը՝ ակտիվ գործողություն: Խտրականությունը անհանդուրժողականությունից տարբերվում է նրանով, որ անհանդուրժողականությունը նույնպես իրավիճակ է, աշխարհայացք, հոգեվիճակ կամ մտածողություն, իսկ խտրականությունը անհավասար վերաբերմունք է, արարքի հետևանք, գործողություն**, որը պարտադիր չէ, որ արտահայտվի վերաբերմունքի տարբերությամբ:

Միջազգային իրավունքում մեր կողմից վկայակոչված հինգ մոդելներում իրավախախտման վերը նշված օբյեկտները սահմանված են որպես ինքնուրույն հասկացություններ, այլ ոչ թե հոմանիշներ: ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարականը սահմանում է չորս առանձին հասկացություններ. ատելություն, անհանդուրժողականություն, խտրականություն և թշնամանք: ՌԽՎՄԿ-ն տարանջատում է ատելությունը, խտրականությունը և բռնությունը: ՔՔՄԴ-ն տարանջատում է խտրականություն, թշնամանք և բռնություն հասկացությունները: ՌԱԵՀ-ը և ՄԻԵԴ-ը առավելապես շեշտը դնում են ոչ թե ատելության և բռնության, այլ դրանց առավել մեղմ իրավական հետևանքների վրա. նվաստացում, անարգում, վիրավորանք, բացասական կարծրատիպեր, խարան, սպառնալիք, որոնք վրա են հասնում խոսքի միջոցով: Այսպիսով, խտրականությունը, անհանդուրժողականությունը, թշնամությունը և բռնությունը նախագծով սահմանված են որպես ատելության, կանխակալության, նախապաշարմունքի շարժառիթի չորս հետևանքներ:

Ինչ վերաբերում է կոնկրետ գործողություններին, որոնք հանգեցնում են նշված չորս հետևանքների, նշված վեց մոդելները նշում են այնպիսի գործողություններ, ինչպիսին են *հարուցելը, հրահրելը, սադրելը, տարածելը, քարոզելը, խթանելը, արդարացնելը:* Եթե հոմանիշները համադրենք, կստացվեն չորս հիմնական գործողություններ. հարուցելը հրահրելը, տարածելը և արդարացնել: ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում օգտագործվում է հարուցել եզրը, որը հավաքական հասկացություն է և ներառում է մնացած երեք գործողությունները, թեև իրավական որոշակիության տեսանկյունից խորհուրդ է տրվում դրանք սահմանել առանձին-առանձին: Մենք որոշեցինք օգտագործել այս եզրը, որպես հավաքական հասկացություն, որն իր մեջ կարող է ներառել վերը նշված բոլոր գործողությունները (հարուցել, հրահրել, սադրել, խրախուսել, տարածել, քարոզել, խթանել, և այլն) որոնք հանգեցնում են խտրականության, անհանդուրժողականության, թշնամանքի և բռնության: Ավելի կոնկրետ՝ առաջարկված նախագծում օգտագործվում է <<հաղորդակցված խոսքի ցանկացած տեսակ>> արտահայտությունը, որն իր իմաստով չի շեղվում վերը նշված

սահմանումից, իսկ բովանդակային իմաստով, կրկին, կարող է ներառել վերևում քննարկված բոլոր տեսակի գործողությունները: Իսկ հարցը, թե արդյոք սույն արտահայտությունը ներառում է նշված գործողությունները, դոկտրինալ մեկնաբանության առարկա է, որը պետք է կատարեն դատարանները՝ առաջին հերթին Սահմանադրական դատարանը և Վճռաբեկ դատարանը, որոնք անհրաժեշտության դեպքում պետք է մեկնաբանեն հոդվածի բոլոր կարևոր եզրերը դրանց իրավական որոշակիություն և կանխատեսելիություն հաղորդելու համար:

Ինչ վերաբերում է <<խոսքի ցանկացած տեսակ>> եզրին, դա նույնպես լայն մեկնաբանության առարկա է: Դատելով բովանդակությունից, դա ներառում է բանավոր, գրավոր, պատկերի, ձայնի, նշանի միջոցով հաղորդակցության, էլեկտրոնային, տեսալսողական կրիչների, մեդիայի միջոցով հաղորդակցության եղանակներ: ՌԱԵՀ թիվ 15 ՔՔՀ-ի հանձնարարականի 11-րդ կետում **«արտահայտում»** հասկացությունը սահմանված է հետևյալ կերպ. *<<ցանկացած ձևով, այդ թվում՝ էլեկտրոնային լրատվամիջոցներով խոսք և հրապարակում, ինչպես նաև դրանց տարածումը և պահպանումը: Ատելության խոսքը կարող է արտահայտվել գրավոր կամ բանավոր խոսքի կամ այլ ձևերով, օրինակ՝ պատկերներ, նշաններ, խորհրդանշաններ, նկարներ, երաժշտություն, բեմադրություններ կամ տեսանյութեր: Այն նաև ներառում է որոշակի վարքագծի օգտագործում, ինչպես օրինակ՝ ժեստեր՝ գաղափարը, ուղերձը կամ կարծիքը հաղորդելու համար>>:*

Հաշվի առնելով վերը նշվածը, կարծում ենք <<հաղորդակցված խոսքի ցանկացած տեսակ>> արտահայտությունը համապատասխանում է միջազգային իրավունքի վերը նշված պահանջներին և ընդգրկում է խոսքի տարածման բոլոր եղանակները՝ նույնիսկ հաղորդակցության ժամանակակից եղանակներով:

Եվ վերջին հարցը, որին կուզենային անդրադառնալ, այն է, որ առաջարկված մոդելը որպես՝ ատելության խոսքի թիրախ շեշտադրում է և՛ անձին, և՛ անձանց խմբին: Հատկապես կարևոր է, որ օրենքը շեշտադրում է մարդկանց խումբ հասկացությունը, քանի որ ատելության խոսքի հանրային վտանգավորությունը հիմնականում կայանում է մարդկանց խմբի, հատկապես խոցելի խմբի թիրախավորումը:

Այսպիսով, ատելության խոսքի առաջարկվող մոդելը Իրավահավասարության մասին օրենքում համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին, և չի հակասում ՀՀ սահմանադրաիրավական երաշխիքներին:

4. ՆԱԽԱԳԾԻ Ո՞Ր ԲԱԺՆՈՒՄ Է ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ՆԵՐԱՌԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հարցը, թե նախագծի ո՞ր բաժնում է նպատակահարմար սահմանել ատելության խոսքի դրույթը կախված է այն հանգամանքից, թե ատելության խոսքը ընկալվում է որպես երևույթ, թե գործողության տեսակ:

Օրենքում սահմանված են խտրականության հետևյալ տեսակները. ուղղակի խտրականություն, անուղղակի խտրականություն, խտրականության հրահրում, հետապնդում, սեգրեգացիա, վիկտիմիզացիա, զուգորդված (ասոցացված) խտրականություն և հաշմանդամություն ունեցող անձանց խելամիտ հարմարեցումներ չտրամադրելը, որը նույնպես սահմանված է խտրականության առանձին տեսակ: Խտրականության տեսակը որոշվում է գործողության բնույթով ու այդ պատճառով դա որևէ տրամաբանական, բովանդակային կապ չունի պաշտպանվող հատկանիշի հետ: Խտրականության ցանկացած տեսակ կարող է դրսևորվել պաշտպանվող հատկանիշից յուրաքանչյուրի հիմքով, որից չի փոխվում խտրականության տեսակը: Օրինակ, այն, որ անուղղակի խտրականությունը դրսևորվում է տարիքի, մաշկի գույնի, ազգության կամ քաղաքացիության հիմքով, որևէ կերպ չի ձևափոխում խտրականության անուղղակի բնույթը, քանի որ բոլոր դեպքերում էական է դրա հատկանիշը՝ տվյալ դեպքում կարգավորման չեզոք բնույթը: Ատելության խոսքի համար նույնպես էական չէ, թե արդյոք դա դրսևորվել է սեռի, ռասայի, գենդերային ինքնության հիմքով, թե ոչ: Բոլոր նման դեպքերում արարքը շարունակվում է համարվել ատելության խոսք: Հետևաբար, ատելության խոսքը օրենքում որպես խտրականության ինքնուրույն տեսակ սահմանելով որևէ հակասություն չի ստեղծում պաշտպանվող հատկանիշների հետ:

Այդուհանդերձ, իր բնույթով խտրականության տեսակը արտահայտում է պաշտպանվող հատկանիշի հիմքով արարքի, գործողության բնույթը, այլ ոչ թե՝ որպես ինքնուրույն երևույթ: Մինչդեռ ատելության խոսքը երևույթ է, այլ ոչ թե գործողության տեսակ: Ըստ այդմ, ատելության խոսքը ինքնուրույն նյութաիրավական հիմք է, քանի որ արտահայտում է երևույթ, այլ ոչ թե արարքի բնույթ, ուղղություն, դինամիկա: Հետևաբար, ատելության խոսքը որպես՝ խտրականության տեսակ սահմանելով արհեստականորեն նեղացվում է դրա՝ որպես երևույթի բովանդակությունը, որից էապես կտուժի դրա կարգավորման իրավական բովանդակությունը: Խտրականության գործերով քննության մեթոդաբանության մեջ խտրականության տեսակը գնահատվում է որպես գործողության եղանակ, այլ ոչ թե՝ ավարտուն երևույթ, և կազմում է խտրականության գնահատման հերթական քայլերից մեկը, մինչդեռ ատելության խոսքը ինքնուրույն նյութաիրավական սահմանմամբ օժտված երևույթ է, որը պետք է բացահայտվի դրա նյութաիրավական սահմանմամբ:

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է օրենքում սահմանել առանձին ենթաբաժին խտրականության առավել լուրջ դրսևորումների մասին, և դրանում սահմանել խտրականության առանձին երևույթների սահմանումները, որոնք

համարվում են հանրորեն առավել վտանգավոր, որոնց նկատմամբ բախվող լեգիտիմ շահերի փոխհավասարակշռման թեստը չի կիրառվում, այլ կերպ ասած՝ դրանք անցնում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածի դաշտ և չեն պաշտպանվում կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Դրանք են, բացի ատելության խոսքից, պաշտպանվող հատկանիշներից որևէ մեկի հիմքով, օրինակ, ցեղասպանության հերքումը, բռնության կոչը, փառաբանումը, պատերազմի հանցագործությունների խրախուսումը, ռասայական գերազանցության հրահրումը, և այլ նմանատիպ արարքներ, որոնք ազատ խոսքի պաշտպանության տակ չեն անցնում, ինչպես, օրինակ, ցնցող, անհանգստություն պատճառով, վուլգար, վիրավորական խոսքը, որոնք որոշակի հանգամանքների ներքո և որոշակի համատեքստում կարող են իրավաչափ խոսքի տեսակ համարվել: Այդպիսի օրինակ է Մոլդովայի հակախտրականության օրենքը, որն ունի առանձին ենթաբաժին խտրականության առավել լուրջ բնույթի դրսևորումների մասին:

ԲԱԺԻՆ 2 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քրեական օրենսդրության մեջ ատելության խոսքի կարգավորումը դիտարկվել է երկու օրենսդրական ակտերում. Քրեական օրենսգրքում և Քրեական դատավարության օրենսգրքում: Հետազոտվել են նաև Ազգային ժողովի օրակարգում ընդգրկված քրեական նոր օրենսգրքի և դատավարական նոր օրենսգրքի երկու նախագծերը, որոնցից առաջինը այս պահի դրությամբ ընդունվել է առաջին ընթերցմամբ:

1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Քրեական օրենսգիրքը սահմանում է ատելության շարժառիթով հանցագործությունների մի շարք տեսակներ հանցագործության հիմնական և որակյալ հանցակազմերի հիմքերով:

Հիմնական հանցակազմով սահմանված են ատելության շարժառիթով հետևյալ հանցագործությունները. մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելը (հոդված 143), ազգայնական, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը (հոդված 226), բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը (հոդված 226.2), ապարտեիդի կամ ռասայական խտրականության վրա հիմնված, անձի արժանապատվությունը ստորացնող, ոչ մարդասիրական և նվաստացնող այլ գործողությունների

պրակտիկայի կիրառումը զինված ընդհարումների ժամանակ (390-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ), մարդկության դեմ ուղղված հանցագործություններ (հոդված 392), ցեղասպանություն (հոդված 393), ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը (հոդված 393.1), ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը (հոդված 397.1):

Բացի նշվածից, քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 63-րդ հոդվածը սահմանում է հանցագործության լրջության աստիճանը ծանրացնող որակյալ հատկանիշների ցանկ, որում ներառված են նաև հանցագործության այնպիսի շարժառիթներ, ինչպիսին են ազգային, ռասայական և կրոնական ատելությունը: Խտրականության այս երեք հատկանիշները որպես՝ ատելության շարժառիթներ և որակյալ հատկանիշներ սահմանված են նաև օրենսգրքի մի շարք հոդվածներում, ինչպիսին են սպանությունը (հոդված 104), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (հոդված 112), դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը (հոդված 113), ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը (հոդված 119), գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (հոդված 185), դիակը կամ թաղման վայրերն անարգելը (հոդված 265):

Նշվածներից 265-րդ հոդվածը կարելի է առանձնացնել որպես ատելության խոսքի հիմնական հոդված, որը, փաստորեն, հանդիսանում է ատելության խոսքի մոդելը ՀՀ իրավական ողջ իրավական համակարգում, քանի որ վարչական և քաղաքացիական օրենսդրությունում բացակայում են ատելության խոսքի սահմանումները: Հետևաբար, այս հոդվածի բովանդակությամբ ու շրջանակներով են պայմանավորված իրավունքի այդ ոլորտի (ատելության խոսքի) զարգացումները ՀՀ իրական համակարգում՝ օրենսդրության մեջ և դատահիրավական պրակտիկայում: Բացի 226-րդ հոդվածից, ատելության խոսքի հատկանիշներ են պարունակում նաև 226.2, 393.1 և 397.1 հոդվածները, քանի որ այս հոդվածներով սահմանված հանցակազմերի օբյեկտիվ հատկանշների թվում ատելության շարժառիթով խոսքն է, խոսքի տարածումը, գաղափարների ու տեղեկությունների հրապարակային եղանակով տարածումը: Այդուհանդերձ, նշված երկու հոդվածներից անհրաժեշտ է առանձնացնել առաջին երկուսը՝ 226 և 226.2 հոդվածները, քանի որ 393.1 և 397.1 հոդվածները վերաբերում են կոնկրետ հանցագործության՝ ցեղասպանության հրահրման և հերքմանը, որը ատելության խոսքի լայն հասկացության դրսևորումներից մեկն է:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ հետազոտության կատարման պահին Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել էր քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որը ներառում է ատելության խոսքի վերաբերյալ երկու հոդվածներ, 314 և 315 հոդվածները, որոնց բովանդակությունը նման է Քրեական օրենսգրքի 226 և 226.2-

րդ հոդվածների բովանդակությանը, ինչպես նաև 198-րդ հոդվածը, որն էլ նման է Քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի բովանդակությանը։

Հաշվի առնելով վերը նշվածը, մեր հետազոտությունում վերլուծել ենք հիմնականում Քրեական օրենսգրքի 226 և 226.2 հոդվածները։ Հաշվի ենք առել նաև նոր քրեական օրենսգրքի նախագծում նշված հոդվածների բովանդակությունը՝ կատարելով համեմատական վերլուծություն։

Ընդհանուր առմամբ, 226 և 226.2-րդ հոդվածների միջև կա մի էական տարբերություն։ 226-րդ հոդվածը, որն ընդունվել է 2003 թվականին օրենսգրքի հետ միասին, արտահայտում է օրենսդրի պահպանողական մոտեցումը հակախտրականության կոնցեպտին։ Հոդվածը ատելության խոսքի հանցակազմը սահմանում միայն երեք պաշտպանված հատկանիշներով՝ ազգայինն, ռասայական և կրոնական հիմքերով։ Դրանով հոդվածը հակասության մեջ է մտնում Սահմանադրության 29-րդ հոդվածի հետ, որը խտրականության հիմքերը սահմանում է բավականաչափ լայն՝ ընդհուպ մինչև խտրականության համընդհանուր արգելքը, որը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 12 արձանագրության պահանջից, որը վավերացվել է ՀՀ-ի կողմից։ Սահմանադրական այս մոտեցումն ամրագրվել է 226.2 հոդվածում, որն ընդունվել է 2020 թվականի ապրիլին և արտահայտում է ժամանակակից մոտեցումները հակախտրականության կարգավորումներում։ Այսպիսով, **Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը չի համապատասխանում միջազգային սկզբունքներին և ՀՀ Սահմանադրությանը, քանի որ դրանում խտրականության արգելքով պաշտպանված հատկանիշները սահմանված են նեղ, երեք հիմքերով, մինչդեռ պետք է այդ հիմքերը ընդլայնվեն** ու ամրագրեն առնվազն ամենաշատ օգտագործվող պաշտպանված հատկանիշները (որոնք առնվազն տասն են) կամ էլ խտրականության համընդհանուր արգելքի սկզբունքը։ Այդ մասին նշվել է նաև ՌԱԵՀ-ի 2016 թվականի Հայաստանի մասին զեկույցում, որում ՌԱԵՀ-ը առաջարկել է ՀՀ իշխանություններին ընդլայնել 226-րդ հոդվածի պաշտպանված հատկանիշների ցանկը։[9]

Համեմատության համար նշենք, որ քրեական նոր օրենսգրքի նախագծի 314-րդ հոդվածում սահմանված են ազգային, էթնիկական, ռասայական, քաղաքական, գաղափարախոսական, կրոնական հատկանիշները, որին այնուհետև հետևում է <<այլ սոցիալական խումբ>> սահմանումը՝ բխեցված Սահմանադրության 29-րդ հոդվածից։ Անկասկած է, որ նախագծի հեղինակները դրանով կատարում են ՌԱԵՀ-ի վերը նշված 2016 թվականի զեկույցի պահանջը, նշված վերևում, որով ՀՀ իշխանություններին պարտավորեցվել է 226 հոդվածի նեղ ու փակ ցանկը բացել և դրանում ներառել ավելի

[9] ՌԱԵՀ-ի զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ փուլ)՝ ընդունված 2016 թվականի հունիսի 28-ին։

մեծ թվով հատկանիշներ՝ հատկապես շեշտադրելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, քանի որ վիճակագրության համաձայն այս երկու հատկանիշների հիմքով ատելության խոսքը նկատելիորեն տարածված է ՀՀ-ում: Նախագծի հեղինակները դրա փոխարեն 314-րդ հոդվածում սահմանել են <<այլ սոցիալական խումբ>> անորոշ հասկացությունը՝ ակնարկելով, որ իրավակիրառ պրակտիկայում նախաքննական մարմինները և դատարանները կարող են այդ արտահայտության շրջանակում դիտարկել նաև սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես՝ պաշտպանված հատկանիշներ: Այդուհանդերձ, անորոշ է, թե արդյոք խտրականության արգելքով պաշտպանված այլ հատկանիշները նույնպես կարող են ներառվել <<այլ սոցիալական խումբ>> հասկացության ներքո: Օրինակ, տարիքի, առողջության հիմքով ատելության խոսքի զոհերը պարտադիր չէ, որ հասարակության մեջ կազմեն որոշակի սոցիալական խումբ, որպեսզի օգտվեն 314-րդ հոդվածի պաշտպանությունից: Հետևաբար, **առաջարկվում է 226-րդ հոդվածում պաշտպանված հատկանիշները շարադրել այնպես, ինչպես նշված է Սահմանադրության 29-րդ հոդվածում կամ դրա փոխարեն շարադրել 314-րդ հոդվածի սահմանումը ու ավելացնել <<կամ անձնական բնույթի այլ հանգամանքներից>> արտահայտությունը:** Նոր քրեական օրենսգրքի ընդունվելու դեպքում առաջարկվում է 314-րդ հոդվածում ավելացնել <<կամ անձնական բնույթի այլ հանգամանքներից>> արտահայտությունը:

Ըստ էության, ներկա պահին **գործող օրենքում և նոր օրենքի նախագծում սահմանված են պաշտպանված հատկանիշների երեք տարբեր շրջանակներ՝** Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում, նախագծի 314 և 315-րդ հոդվածներում: 315-րդ հոդվածում պաշտպանված հատկանիշները ամբողջությամբ կրկնօրինակում են սահմանադրության 29-րդ հոդվածի սահմանումը: Գործող օրենսգրքի 226.2 հոդվածում նույն մոտեցումն է ցուցաբերվել: Պաշտպանված հատկանիշների երեք տարբեր ցանկերը ցույց են տալիս այս հարցում միասնական քաղաքականության բացակայություն: Այս խնդրի վրա նույնպես պետք է ուշադրություն դարձնի Օրենսդիրը:

Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը չափազանց լայն է՝ տարածվելով և հրապարակային, և ոչ հրապարարակային արտահայտություններ վրա: Հիմնական հանցակազմով սահմանված է ոչ հրապարակային եղանակով ատելության խոսքը, իսկ հրապարակային եղանակով տարածված խոսքը սահմանված է որպես որակյալ հանցակազմ: ՌԱԵՀ-ի թիվ 15 ՔՔԸ-ում, որը վերաբերում է ատելության խոսքի կարգավորմանը, հանձնաժողովը առաջարկում է ատելության խոսքի սահմանումը սահմանափակել հրապարակային հայտարարություններով: Թեև ատելության խոսքը սկզբունքորեն կարող է ներառել և հրապարակային, և ոչ հրապարակային եղանակով ասված խոսքը, այդ արարքի իրավական բովանդակությունը հիմնականում

վերաբերում է հրապարակային եղանակով ատելություն, թշնամություն, խտրականություն և անհանդուրժողականություն հարուցելուն, դրդելուն՝ հատկապես, եթե խոսքը վերաբերում է ատելության խոսքի քրեաիրավական կարգավորմանը:[10] Այս հանցակազմի վտանգավորությունը, ինչպես շեշտել է ՌԱԵՀ-ը, դրա հրապարակային բնույթի մեջ է: Հենց խոսքի հրապարակային բնույթն է, որ հարուցում է ատելություն ու թշնամություն, բռնության կոչեր, ժխտողականության, ցեղասպանության հրահրման, և այլ ռասիստական հանցավոր արարքների: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նոր քրեական օրենսգրքի նախագծում 226-րդ հոդվածով սահմանված հանցագործությունը արտահայտված է 314-րդ հոդվածով, որի կառուցվածքը վերը նշվածի առումով նման է 226-րդ հոդվածին՝ հիմնական հանցակազմով սահմանված է ատելության խոսքը բոլոր հանգամանքներում, իսկ ԶԼՄ-ներով և հրապարակային եղանակով կատարված հանցագործությունը՝ որպես որակյալ հատկանիշ: Այսինքն, նոր օրենսգիրքը այս խնդիրը նույնպես չի լուծում: Հետևաբար, **226-րդ հոդվածը անհրաժեշտ է կոնկրետացնել ու սահմանել, որ այդ հոդվածը կիրառելի է միայն հրապարակային եղանակով տարածված խոսքի առնչությամբ**: Եթե նոր քրեական օրենսգրքի նախագիծը ընդունվի, առաջարկվում է նույնաբնույթ փոփոխություն կատարել նախագծի 314-րդ հոդվածում:

Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում օգտագործված է <<հարուցել>> եզրը: Նույն բառն օգտագործվում է նաև նոր քրեական օրենսգրքի նախագծի 314-րդ հոդվածում, որը 226-րդ հոդվածի համարժեք հոդվածն է նոր օրենսգրքում: Միջազգային աղբյուրներում, որոնցից վեցի վրա մենք հիմնվում ենք ու որոնք ներկայացված են Երկրորդ փաստաթղթում, օգտագործվում են ատելության խոսքի արտահայտման վեց բայեր՝ հրահրել, խթանել, սադրել, քարոզել, տարածել և արդարացնել: Որոշ փաստաթղթերում օգտագործվում են նաև այս բառերի հոմանիշները, օրինակ՝ հրահրել բառի փոխարեն երբեմն օգտագործվում է դրդել բառը, բայց բովանդակային իմաստով այս վեց արտահայտություններով է սահմանափակվում ատելության խոսքի բայական կազմը, որոնք արտահայտում են և՛ ակտիվ, և՛ պասիվ բնույթի գործողություններ: Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում Օրենսդիրը օգտագործել է <<հարուցել>> բառը: Այդ բառի ամենամոտ իմաստային տարբերակը մեր նշած ցանկում հրահրել բառն է, սակայն անգլերեն լեզվով բոլոր վեց աղբյուրներում օգտագործվում է incite (incitement) բառը, որի համարժեք թարգմանությունը հայերեն լեզվում հրահրել բառն է: Հարուցել բառի անգլերեն թարգմանությունը to incite (incitement) բառը չէ: Վերջինը ենթադրում է առավել ակտիվ, հարձակողական բնույթի գործողություն, քան հարուցելն է: Հարուցել բառը նշանակում է ինչ-որ բան սկսել, զարկ տալ, նախաձեռնել, սկիզբ դնել կամ ինչ-որ բանի սկիզբ հանդիսանալ, պասիվ կամ

[10] ՌԱԵՀ թիվ 15 Ընդհանուր Քաղաքականության Հանձնարարական: Կետ 20:

ակտիվ եղանակով, ու դրա համարժեք իմաստը անգլերեն լեզվում to cause բառն է: Ամենայն հավանականությամբ 2003 թվականի Օրենսդիրը ընտրել է <<հարուցել>> բառը, որպեսզի հոդվածում սահմանի խստության նվազագույն աստիճանի գործողություն, որպեսզի մեր նշած բոլոր վեց գործողությունները կլանվեն այդ հասկացությամբ: Սակայն մյուս կողմից, չափազանց ցածր շեմը կարող է լրջորեն վնասել ազատ խոսքը, քանի որ անբարյացակամորեն ընկալվող կամ ընդունվող ցանկացած խոսք ատելության խոսք կամ բռնության կոչ չպետք է համարվի՝ ինչպես բազմիցս նշվում է մեր հետազոտության մեջ: Դա է պատճառը, որ ՄԱԿ-ի ռազմավարական ծրագրի սահմանման մեջ նշվում է հարձակողական բնույթի խոսքի մասին ու այդ պատճառով անգլերեն բոլոր տեքստերում օգտագործվում են to incite կամ incitement (հրահրել կամ հրահրում) բառերը: Նման մոտեցում է սահմանված նաև ՌԱԵՀ թիվ 15 ԸՔՀ-ի նախաբանում (պրեամբուլա), ըստ որի փաստաթղթի հեղինակները առաջարկում են ընդունել, որ ատելության խոսքը *<<կարող է օգտագործվել հրահրելու մտադրությամբ, կամ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ այն ունի հրահրող ազդեցություն այլոց վրա>>:* Այս իմաստով նշենք, որ իրավական փաստաթղթի նախաբանը համարվում է փաստաթղթի բաղկացուցիչ մաս ու թեև չունի նորմատիվ բնույթ, սակայն արտահայտում է փաստաթղթով հետապնդվող քաղաքականության ընդհանուր ուղենիշ: Հաշվի առնելով դա, **առաջարկվում է 226-րդ հոդվածում հարուցել բառը փոխարինել հրահրել բառով՝ որպես միջազգային աղբյուրների առավել համահունչ բառ,** ինչպես նաև այն պատճառով, որ դրանով բարձրանում է ատելության խոսքի հանցակազմի նվազագույն շեմը, որով էլ առավել մեծ պաշտպանություն է ստանում ազատ խոսքը: Նոր քրեական օրենսգրքի ընդունվելու դեպքում նույնաբնույթ փոփոխություն առաջարկվում է կատարել 314-րդ հոդվածում:

Իրավական որոշակիության պահանջից ելնելով, առաջարկվում է 226-րդ հոդվածում առանձին սահմանել <<տարածել>> եզրը: **Ռասայական** խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (ՌԽՎՄԿ) 4-րդ հոդված տարանջատում է *հրահրում* և *տարածում* հասկացությունները. i) *ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների ցանկացած տարածում, ii) ռասայական խտրականության հրահրում, iii) ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հիման վրա անձի կամ անձանց դեմ ուղղված բռնարարքների հրահրում:* Ինչպես տեսնում ենք, ՄԱԿ-ի կոնվենցիան տարբերակում է ռասայական խտրականության կամ բռնության հրահրումը գաղափարների տարածումից: Ի տարբերություն դրա, Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը նշում է ռասայական գերազանցությանը եւ թշնամանք հրահրելուն ուղղված գործողությունները, սակայն ուղղակիորեն չի քրեականացնում այդ գաղափարները *տարածելը*: Կարելի է պնդել, որ 226-րդ հոդվածում «ուղղված գործողությունները»

արտահայտությունը սկզբունքորեն կարող է ներառել նաև տարածելու գործողությունները: Այդուհանդերձ, դատահիրավական պրակտիկայում, որն, ի դեպ, մեծ չէ, հանդիպել են դեպքեր, երբ դատարանները 226-րդ հոդվածը մեկնաբանել են որպես *տարածելը* չընդգրկող, որի արդյունքում քրեական գործը կարճվել է: Ուստի, իրավական որոշակիությունից ելնելով նախընտրելի կլիներ, որ հոդվածում առանձին սահմանվեր նաև <<տարածում>> եզրը: Դա հատկապես կարևոր է համացանցի և թվային այլ տեխնոլոգիաների առումով, որոնք դժվար կարգավորվող են, օրինակ, Telegram բջջային հավելվածը, որի միջոցով մասսայաբար տարածվել են զինված հակամարտության և պատերազմական գործողությունների մասին ատելության խոսք պարունակող նյութեր: Նման դեպքերի համար անհրաժեշտ է ունենալ բավարար նյութաիրավական հիմքեր քրեական հետապնդման ենթարկելու համար ոչ միայն նրանց, ովքեր տեղադրում են, այլ նաև նրանց, ովքեր տարածում են նման նյութեր:

Նշենք, որ այս խնդիրը չի լուծվում նաև նոր քրեական օրենսգրքի նախագծի 314-րդ հոդվածում, որում նույնպես սահմանված է հավաքական իմաստ պարունակող <<հարուցել>> եզրը և չի մասնավորեցված <<տարածել>> եզրը: **Այսպիսով, առաջարկվում է 226-րդ հոդվածում սահմանել ոչ միայն ատելության խոսք հարուցելը, այլ նաև տարածելը՝ որպես ինքնուրույն հանցակազմ: Նոր քրեական օրենսգրքի ընդունվելու դեպքում նույն փոփոխությունը առաջարկվում է կատարել քրեական օրենսգրքի նախագծի 314-րդ հոդվածում:**

Մեր մատնանշած միջազգային իրավունքի աղբյուրներից երեքում խտրականությունը նույնպես սահմանված է որպես ատելության խոսքի օբյեկտիվ հատկանիշ: ՔՔԻՄԴ 20-րդ հոդվածում ատելության *քարոզչությունը սահմանվում է որպես, թշնամանքի, բռնության և խտրականության հրահրում:* ՌԽՎՄԿ 4-րդ հոդվածում պետություններից պահանջվում է օրենքով պատժելի արարք համարել ոչ միայն ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, այլ նաև ռասայական խտրականության հրահրումը, իսկ ՄԱԿ-ի ռազմավարական ծրագրում ատելության խոսքը սահմանված է որպես հարձակողական բնույթի, նվաստացուցիչ և խտրական խոսք: ՌԱԵՀ-ի թիվ 7 ԸՔՀ-ի համաձայն՝ առաջարկվում է ԵԽ Անդամ Պետություններին քրեականացնել դիտավորությամբ ու հրապարակային եղանակով *բռնության*, *թշնամության* և *խտրականության* հրահրումը: Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում սահմանված է *թշնամանքը* և ռասայական գերազանցությունը, իսկ նախագծի 314-րդ հոդվածում՝ *ատելությունը*, *անհանդուրժողականությունը* և *թշնամանքը*: Ատելությունը և թշնամանքը հոմանիշներ չեն: Նմանապես, անհանդուրժողականությունը և խտրականությունը նույնպես հոմանիշներ չեն. անհանդուրժողականությունը մտածելակերպ է, այլոց նկատմամբ վերապահում, հարգանքի բացակայություն, իսկ խտրականությունը վերաբերմունքի տարբերություն է: Անհանդուրժողականություն և

խտրականություն հրահրելը տարբեր արարքներ են: Օրինակ, եթե հանրահավաքում կոչ է արվում, որ էմիգրանտները երկրից հեռանան, քանի որ նրանք օտարազգիներ են, դա քսենոֆոբիա է՝ անհանդուրժողականության կոչ, իսկ եթե կոչ է արվում էմիգրանտներին չտրամադրել նպաստ որպեսզի նրանք անհավասար սոցիալ-տնտեսական վիճակում հայտնվեն, դա անհավասար վերաբերմունքի՝ խտրականության կոչ է: Վերջինը ատելության խոսքի ավելի նուրբ, առերևույթ ատելություն չպարունակող, դժվար նշմարելի գործողություն է: Այս իմաստով հիշենք Փերինչեքի գործի փաստերը, մասնավորապես՝ հանրահավաքում արտասանած նրա ճառը, որը բռնության, ատելության կոչ առերևույթ չէր պարունակում, սակայն այդ կոչը Փերինչեքի մոտ երկու տասնամյակ տևողությամբ գործունեության համատեքստում դիտարկելիս ատելության քողարկված շարժառիթը տեսանելի էր դառնում: Հետևաբար, քրեական օրենսդրությունը պետք է դատավորներին, ինչպես նաև նախաքննական մարմիններին, հնարավորություն տա ատելության խոսքի նման նուրբ դրսևորումները նույնպես քրեական հետապնդման ենթարկել:

Հաշվի առնելով վերևում նշված նկատառումները, առաջարկվում է օրենսգրքի 226-րդ հոդվածում կամ նոր օրենսգրքի նախագծի 314-րդ հոդվածում **ի հավելումն <<ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք>> արտահայտությունների սահմանել նաև <<խտրականություն>> հարուցելը:**

Քրեական օրենսգրքի 226.2 հոդվածում սահմանված է հրապարակային եղանակով <<բռնություն գործադրելու>> հանցակազմը: Նույն ձևակերպումը պահպանվել է նաև նախագծի 315-րդ հոդվածում (Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը): <<Բռնություն գործադրելը>> որպես՝ հանցագործության օբյեկտիվ հատկանիշ ավելի նեղ իմաստ ունի, քան <<բռնություն հրահրելը>>, քանի որ կարելի է անձին/անձանց հրապարակայնորեն հրահրել կատարել բռնություն առանց նրան/նրանց բռնություն գործադրելու կոչ անելու: Այդպիսի օրինակներ կարելի է բերել նաև Հայաստանում տեղի ունեցած բազմաթիվ դեպքերից՝ հատկապես հանրահավաքներում ելույթների զգուշորեն ընտրված բառերի ու արտահայտությունների համակցությունից և ընդհանուր համատեքստից:[11] Հաճախ բռնություն հրահրելու մտադրությամբ հրապարակային ճառ արտասանելիս դրանց հեղինակները իրենց խոսքը համեմում են չեզոք, հարձակողական բնույթ չունեցող արտահայտություններով, որպեսզի խուսափեն պատասխանատվությունից: Մինչդեռ, օրենքը պետք է հնարավորություն տա նման արարքները նույնպես սահմանել որպես **հանցագործություն: Առաջարկվում է գործող**

[11] Օրինակ, 2016 թվականի հուլիսյան դեպքերին մեծամասամբ նպաստեցին հանրահավաքայի ճառերը, որոնք թեև արտաքուստ բռնություն գործադրելու կոչեր չէին պարունակում, սակայն քողարկված կերպով դրդում էին մարդկանց բռնություն գործադրել ոստիկանների նկատմամբ:

օրենսգրքում կամ նախագծում փոխարինել <<բռնություն գործադրել>> արտահայտությունը <<բռնություն հրահրել>> արտահայտության հետ, որպեսզի հնարավոր լինի քրեորեն հետապնդելի արարք սահմանել նաև առերևույթ բռնություն գործադրելու կոչ չպարունակող արտահայտությունները, որոնք, սակայն, քողարկված կերպով հրահրում են բռնություն։

2. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Համակարգչային հանցագործությունների հետ կապված քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս, որտեղ հանցագործությունը կապված է համացանցով անօրինական կոնտենտի շրջանառության հետ, օրինակ՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելը (հոդված 263), շորթում՝ անձի լուսանկարները համացանցով հրապարակելու եղանակով (հոդված 182), անառակաբարո գործողություններ կատարելը էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ (հոդված 142), առաջանում է անհրաժեշտություն տվյալ համացանցային կոնտենտը հեռացնելու կամ տվյալ հասցեն արգելափակելու վերաբերյալ։ Նման անհրաժեշտությունը օբյեկտիվորեն ծագում է նաև ատելության խոսքի հանցակազմով հարուցված քրեական գործի քննության ընթացքում։ Եթե համացանցում տարածվում է ատելության խոսք և դրա հիմքով հարուցվում է քրեական գործ, քննության շահերից ելնելով անհրաժեշտություն է կասեցնել տվյալ բովանդակության հրապարակումը մինչև քրեական գործի լուծումը։ Այդ նպատակով դատավարական համապատասխան միջոցը խափանման միջոցն է։ Սակայն Քրեական դատավարության օրենսգիրքը խափանման միջոցը սահմանում է միայն անձի՝ կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ։ Տեսալսողական բովանդակության նկատմամբ խափանման միջոց կիրառելու օրենսդրական հիմքերը բացակայում են։ Պրակտիկայում նման հարցերը լուծվում են սերվերի առգրավման եղանակով։ Քրեական գործի քննության ընթացքում վարույթ իրականացնող մարմինները սովորաբար կայացնում են սերվերը առգրավելու մասին որոշում ու առգրավում կատարելիս համացանցում ինքնաբերաբար արգելափակվում կամ հեռացվում է նաև բովանդակությունը։ Սակայն վարույթային այս եղանակը իր օրինական հիմքերով (նպատակներով ու պայմաններով) չի համապատասխանում բովանդակությունը ժամանակավոր կասեցնելու քննության օբյեկտիվ անհրաժեշտությանը։ Առգրավման դատավարական նպատակը հարուցված քրեական գործի համար անհրաժեշտ առարկաներ և փաստաթղթեր առգրավելն է, որպեսզի դրանք հետազոտվեն որպես ապացույցներ։ Իսկ ատելության բովանդակության արգելափակման կամ կասեցման նպատակը պետք է լինի ժամանակավոր արգելանքի՝ որպես խափանման միջոցի

կիրառումը, որպեսզի ենթադրաբար հանցագործության տարրեր պարունակող բովանդակության տարածումը հանրային տիրույթում կասեցվի, մինչև գործով վերջնական որոշումը կայացնելը։ Համեմատության համար նշենք, որ նման միջոցը (արգելանքի միջոց) լայնորեն կիրառվում է քաղաքացիական դատավարությունում համացանցում տարածված վիրավորանքի ու զրպարտության բովանդակության վերաբերյալ, ու նման որոշումները կայացնում են դատարանները դատավարության մասնակցի միջնորդության հիման վրա։

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը այս առումով մեկ քայլ առաջ է արել։ Նախագծում սահմանված են ժամանակավոր միջոցների մի շարք նոր համակարգեր, որոնք բացակայում են գործող օրենսգրքում և կարող են օրինական հանդիսանալ ինտերնետ կոնտենտի նկատմամբ ժամանակավոր արգելանքի միջոցներ մշակելիս։ Նախագծում սահմանված են իրավաբանական անձի նկատմամբ գույքի ապահովման միջոց կիրառելու նոր ընթացակարգ (հոդված 445), որը նման է քաղաքացիական օրենսգրքում գույքի նկատմամբ արգելանք կիրառելու ընթացակարգին։ Նախագծի 131-րդ հոդվածում նաև սահմանված է գույքի արգելադրման նոր ընթացակարգը, որի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն գույքը կարող է արգելադրվել, եթե ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց։ Սա մոդել է, որի օրինակով կարելի է սահմանել նաև ինտերնետ բովանդակության արգելադրման ընթացակարգ քրեական դատավարությունում։

Հաշվի առնելով վերը նշվածը, **առաջարկվում է քրեական դատավարության օրենսդրությունում սահմանել համացանցի անօրինական բովանդակության ժամանակավոր արգելափակման և/կամ ժամանակավոր հեռացման դատավարական ընթացակարգ։** Ընթացակարգի նպատակը պետք է լինի ինտերնետ բովանդակության նկատմամբ ժամանակավոր արգելանքի կիրառումը, մինչև քրեական գործի լուծումը՝ ինչպես խափանման միջոցները քրեական դատավարությունում կամ հայցի ապահովման միջոցները քաղաքացիական դատավարությունում և վարչական դատավարությունում, որոնք ժամանակավոր միջանկյալ միջոցներ են՝ կանխելու որոշակի գործողություն կամ պարտավորեցնելու կատարելու որոշակի գործողություն։

Առաջարկվող կառուցակարգը պետք է սահմանի արգելանք կիրառող մարմնի իրավասությունները։ Այդ մարմինը կարող լինել նախաքննական մարմինը (օրինակ՝ քննիչը) կամ դատարանը։ Կարծում ենք, որ ավելի նպատակահարմար կլինի, որ այդ իրավասությունը տրվի քննիչին, սակայն քննիչի որոշումը պետք է ենթակա լինի վիճարկման Քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով կամ նոր օրենսգրքի նախագծով սահմանված նույնանման ընթացակարգով սահմանված կարգով։

Հաշվի առնելով, որ խնդրո առարկա հարցը առնչվում է տեղեկություններ ու գաղափարներ տարածելու ազատության հիմնարար իրավունքին, առաջարկվում է, որ օրենսգրքում սահմանվի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաչափության սկզբունքը, որը նաև ՀՀ սահմանադրաիրավական երաշխիք է Սահմանադրության 78-րդ հոդվածի հիմքով: Այսպիսով, ինտերնետ կոնտենտի նկատմամբ ժամանակավոր արգելանք կիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմինը (քննիչը, դատախազը, դատարանը) իր որոշումը պետք է հիմնավորի նաև համաչափության ընդհանուր սկզբունքի ներքո՝ փոխհավասարակշռելով հանրային ու մասնավոր շահերը: Հանրային շահերը տվյալ դեպքում ներառում են այնպիսի իրավաչափ նպատակներ, ինչպիսին են հանցավորության դեմ պայքարը, հասարակական կարգի պաշտպանությունը, այլոց իրավունքները, իսկ մասնավոր շահերը ներառում են ինտերնետ բովանդակության հեղինակի առանց միջամտության գաղափարներ ու տեղեկություններ տարածելու հիմնարար իրավունքը Սահմանադրության 42-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո:

Հաջորդ հարցը, որը նույնպես կարևոր է քննարկել, այն է, թե որ իրավասու մարմինը պետք է իրականացնի ինտերնետ բովանդակությունը արգելափակելու կամ հեռացնելու մասին ժամանակավոր արգելքի կամ արգելադրման որոշումը: Այս հարցը քննարկվում է նաև հինգերորդ բաժնում, որը վերաբերում է համացանցի կառավարմանը: Այստեղ ընդհանուր առմամբ ներկայացվում է համացանցի կառավարման հետևյալ մոդելը: Բովանդակության նկատմամբ առաջնային վերահսկողությունը իրականացնում է օգտատերը, ով ֆիզիկական կամ իրավաբանական անձ է և շահագործում է ինտերնետ կայքը դոմեյն ռեգիստրարի հետ կնքած քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա: Դոմեյն ռեգիստրարը իրավաբանական անձ է, ով իրավունքի ունի քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա արգելափակել դոմեյնը, որի արդյունքում դադարում է կայքի գործունեությունը: Ռեգիստրարը չունի տեխնիկական հնարավորություն հեռացնելու համացանցում տեղադրված նյութը: Հետևաբար, եթե որոշման առարկան ողջ կայքի ժամանակավոր արգելափակումն է, ապա որոշումը նպատակահարմար է ծանուցել ռեգիստրարին, իսկ եթե որոշման առարկան ատելության խոսք պարունակող կոնկրետ բովանդակության, նյութի մեջ է, ապա նպատակահարմար է որոշումը ծանուցել ֆիզիկական անձ օգտատիրոջը: Եթե օգտատերը հրաժարվում է կատարել կամ չի կատարում որոշումը, ապա ռեգիստրարը կարող է դադարեցնել նրա հետ կնքած քաղաքացիաիրավական պայմանագիրը կամ ծառայությունների մատուցումը, որի արդյունքում կարգելափակվի նաև ինտերնետ կայքը: Դրանից հետևում է, որ ռեգիստրարները պետք է իրենց պայմանագրերում նախատեսեն համապատասխան դրույթ նման որոշումները կատարելու պարտավորության մասին: Նման դրույթը

կարելի է սահմանել ատելության խոսքի արգելքի վերաբերյալ պայմանագրի այլ դրույթների հետ միասին։

Տեխնիկական հնարավորությունները ցանցի օպերատորներին նույնպես տալիս են հնարավորություն հեռացնելու կոնկրետ նյութ։ Այս մասին նույնպես խոսվում է ինտերնետ կառավարման վերաբերյալ բաժնում։ Սակայն միջանկյալ միջոցի կիրառման նպատակից և ողջ համակարգի առարկայից ելնելով կարծում ենք, որ նպատակահարմար չէ ցանցի օպերատորներին ներգրավել այս գործընթացում։

Այսպիսով, **առաջարկվում է քրեական դատավարության օրենսգրքում սահմանել ինտերնետ բովանդակության ժամանակավոր հեռացման կամ արգելափակման միջանկյալ միջոց կիրառելու ընթացակարգ,** նման նոր քրեական օրենսգրքի նախագծով սահմանված գույքի արգելադրման կամ ապահովման ընթացակարգերին։

Առաջարկություններ.

- Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում կամ նախագծի 314-րդ հոդվածում անհրաժեշտ է ընդլայնել պաշտպանված հատկանիշների շրջանակը՝ սահմանելով կամ խտրականության արգելքով պաշտպանված հատկանիշների առավել տարածված տեսակները կամ խտրականության համընդհանուր արգելքի սկզբունքը։
- Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը անհրաժեշտ է կոնկրետացնել ու սահմանել, որ հոդվածը կիրառելի է միայն հրապարակային եղանակով տարածված խոսքի առնչությամբ։ Նույն մոտեցումը առաջարկվում է կիրառել նաև նախագծի 314-րդ հոդվածի առնչությամբ։
- Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում <<հարուցել>> եզրը փոխարինել <<հրահրել>> եզրով։ Նույն մոտեցումը ցուցաբերել նաև նախագծի 314-րդ հոդվածի առնչությամբ։
- Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում սահմանել <<տարածել>> եզրը որպես՝ ինքնուրույն հանցավոր արարք։ Նույն մոտեցումը ցուցաբերել նաև նախագծի 314-րդ հոդվածի առնչությամբ։
- 226-րդ հոդվածում կամ նոր օրենսգրքի նախագծի 314-րդ հոդվածում ի հավելումն <<ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք>> արտահայտությունների սահմանել նաև <<խտրականություն>> եզրը։
- Առաջարկվում է գործող օրենսգրքի 226.2 հոդվածում կամ նախագծի 315-րդ հոդվածում փոխարինել <<բռնություն գործադրելու>> արտահայտությունը <<բռնություն հրահրելու>> արտահայտության հետ, որպեսզի հնարավոր լինի քրեորեն հետապնդելի արարք սահմանել նաև առերևույթ բռնություն գործադրելու կոչ չպարունակող արտահայտությունները, որոնք, սակայն, քողարկված կերպով հրահրում են բռնություն։

- Առաջարկվում է Քրեական դատավարության օրենսգրքում կամ նոր օրենսգրքի նախագծում սահմանել համացանցի անօրինական բովանդակության/նյութի ժամանակավոր արգելափակման և/կամ հեռացման դատավարական ընթացակարգ: Այս շրջանակում առաջարկվում է մշակել իրավական կառուցակարգ՝ սահմանելով որոշում կայացնող մարմնի իրավասությունները, որոշում կայացնելու ընթացակարգերը և բողոքարկման ընթացակարգերը:

ԲԱԺԻՆ 3. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

Ռասայական խտրականության վերացման կոմիտեն Թիվ 35 ընդհանուր մեկնաբանության մեջ սահմանել է հետևյալը.

> *«Որպես նվազագույն պահանջ և առանց հետագա միջոցներին խոչընդոտելու, ռասայական խտրականության դեմ համապարփակ օրենսդրությունը, ներառյալ՝ քաղաքացիական, վարչական, ինչպես նաև քրեական իրավունքը, բացարձակ անհրաժեշտություն է ռասիստական բնույթի ատելության խոսքի դեմ արդյունավետորեն պայքարելու համար»*:[12]

ՌԱԵՀ թիվ 15 ԸՔՀ-ի 8-րդ հանձնարարականով նույնպես սահմանվել է, որ ատելության խոսքը կարող է կարգավորվել քաղաքացիական և վարչական օրենսդրությունում.

> *Առաջարկվում է հստակեցնել քաղաքացիական և վարչական բնույթի պատասխանատվության շրջանակը և կիրառելիությունը ատելության խոսքի օգտագործման դեպքում, որը նպատակաուղղված է կամ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ ուղղված է հրահրելու բռնություն, ահաբեկում, թշնամանք կամ խտրականություն ատելության խոսքով թիրախավորված անձանց նկատմամբ՝ միաժամանակ հարգելով արտահայտվելու և կարծիքի ազատության իրավունքը>>:*

[12] Ռասայական խտրականության վերացման կոմիտե: Ընդհանուր մեկնաբանություն թիվ 35: CERD/C/GC/35, 26 սեպտեմբերի 2013, կետ 9:

Այսպիսով, ՌԱԵՀ-ը ատելության խոսքի կարգավորումը չի դիտարկում բացառապես քրեական օրենսդրության համատեքստում: Ինչպես բազմիցս նշվել է, ատելության խոսքի դեմ պայքարը օրենսդրական եղանակով կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե ցուցաբերվի համապարփակ մոտեցում ու բարեփոխվի ոչ թե մեկ, այլ մի շարք օրենքներ: ՌԱԵՀ-ը այդ միաստով առաջարկում է օրենսդրությամբ ամրագրվել նաև քաղաքացիական և վարչական բնույթի իրավական պաշտպանության միջոցներ:

8-րդ հանձնարարականի համատեքստում ՌԱԵՀ-ը առաջարկում է սահմանել նյութական և ոչ-նյութական վնասի դիմաց քաղաքացիական կամ վարչական պատասխանատվության հիմքեր համացանցի օգտատերերի, ինտերնետ ծառայություն մատուցողների, վեբ հարթակների և հոսթինգի, առցանց միջնորդ ծառայությունների, սոցիալական մեդիա հարթակների, բլոգ էջերի մոդերատորների և համանման գործառույթ իրականացնող այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից խախտումների համարի: Պատասխանատվությունը կարող է ներառել ընդհուպ կարգավորող մարմինների լիցենզիայի կասեցում կամ դադարեցում վարչական ակտի տեսքով կամ վարչական պատասխանատվության ենթարկելը վարչական տույժի եղանակով՝ որպես վնասի դիմաց իրավական պաշտպանության միջոց: Ի հավելումն, ՌԱԵՀ-ը առաջարկում է նաև սահմանել կառուցակարգեր ատելության խոսք պարունակող նյութերը համացանցում ժամանակավորապես կամ մշտապես արգելափակելու ու հեռացնելու, ատելության խոսք հրապարակող կայքերը արգելափակելու ուղղությամբ, ինչպես նաև հատուկ ընթացակարգեր հանրությանը ատելության խոսք հրապարակող համացանցային էջերի, կայքէջերի մասին տեղեկացնելու ուղղությամբ: Նման բնույթի իրավական պաշտպանության միջոցները կարող են նախատեսել և՛ քաղաքացիաիրավական բնույթի միջոցներ, ինչպես օրինակ՝ դատարանի կողմից համացանցում տեղադրված նյութի ժամանակավոր արգելափակման մասին հայցի ապահովման միջոցի մասին որոշում կայացնելը, և՛ վարչաիրավական բնույթի միջոցներ, օրինակ՝ տվյալ էլեկտրոնային հարթակի կամ կայքի գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու կամ արգելափակելու, կամ ցանցի օպերատորի, ինտերնետ ծառայություններ մատուցող կազմակերպության լիցենզիան կասեցնելու կամ արգելափակելու մասին վարչական ակտեր կայացնելը: Այսպիսով, ՌԱԵՀ-ի առաջարկությունները քաղաքացիական և վարչական բնույթի իրավական պաշտպանության միջոցների մասին հիմնականում վերաբերում են համացանցի տիրույթում ատելության խոսքի օգտագործմանը, տարածմանը: Նշենք, որ համացանցի տիրույթին ՌԱԵՀ-ն անդրադառնում է մասամբ նաև 7-րդ հանձնարարականով՝ առցանց զանգվածային լրատվության միջոցների ընդհանուր համատեքստում: Վարչաիրավական միջոցներին ՌԱԵՀ-ը անդրադառնում է նաև 9-րդ հանձնարարականում, որը վերաբերում է հիմնականում քաղաքական

կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությանը: Մասնավորապես, ՌԱԵՀ-ը առաջարկում է վարչական պատասխանատվության ու իրավական պաշտպանության միջոցներ կիրառել քաղաքական կուսակցությունների և այլ կազմակերպությունների արգելման և լուծարման, այդ կազմակերպությունների կողմից իրենց անդամների ռասիստական բնույթի հրապարակային արտահայտությունների մասով անգործության ցուցաբերման համար: ՌԱԵՀ-ը առաջարկում է նաև վարչական պատասխանատվության միջոցներ կիրառել հանրային միջավայրում ատելության խոսքի տարածման համար, օրինակ, սպորտային միջոցառումների ժամանակ ատելության խոսքի հրապարակային կոչերի համար: Կան երկրներ, որոնք հատուկ այս միջավայրում ատելության խոսքի համար վարչական պատասխանատվություն սահմանող նորմերի ունեն:

Համացանցում ատելության խոսքի կարգավորումներին մանրամասն անդրադառնում ենք Բաժին 4-ում, իսկ այս բաժնում մենք կներկայացնենք մեր ուսումնասիրությունները քաղաքացիական և վարչական օրենսդրությունում առաջարկվող փոփոխությունների մասով: Այդ իմաստով ուսումնասիրել ենք Քաղաքացիական օրենսգիրքը, Տեսալսողական մեդիայի մասին ՀՀ օրենքը, Զանգվածային լրատվության մասին օրենքը, Վարչարարության և վարչական վարույթի մասին օրենսգիրքը և Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը:

1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Քաղաքացիական օրենսգրքում բացակայում է ատելության խոսքի և, ընդհանրապես, հակախտրականության վերաբերյալ որևէ նորմ: Եթե հայցվորները ցանկանում են դատարանում վիճարկել, որ հրապարակային հայտարարության արդյունքում ենթարկվել են խտրական վերաբերմունքի, նրանք որևէ հաջողության չեն հասնի, քանի որ դատարանները ստիպված կլինեն մերժել նման դիմումները նյութաիրավական հիմքի բացակայության պատճառաբանությամբ: Որքան էլ որ տարօրինակ է, դատարանների նման որոշումները անօրինական չեն, թեև իրավաչափության տեսանկյունից խնդրահարույց են: Միակ բացառությունը կարող է կազմել գենդերային ինքնության և գենդերային հատկանիշի հիմքով ատելության խոսքի համար իրավական պաշտպանության միջոց հայցելը Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի (Գենդերային օրենքի) 6-րդ հոդվածի 5-րդ մասի հիմա վրա, որը սահմանում սեռի հատկանիշով պայմանավորված վիրավորական և նվաստացուցիչ հրապարակային հայտարարություն անելու արգելքը, ներառյալ՝

զանգվածային լրատվության միջոցներով: Կարելի է վկայակոչել նաև նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը՝ գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը ՋԼՄ-ներով, քանի որ ատելության խոսքի օբյեկտիվ հատկանիշներից է նաև կարծրատիպերի վկայակոչումը ատելության, թշնամության, բռնության, խտրականության և անհանդուրժողականության հրապարակային կոչերով կամ հաղորդակցության ցանկացած եղանակով՝ այդ թվում նաև ոչ հրապարակային եղանակով: Մնացած այլ պաշտպանված հատկանիշների հիմքով (ռասա, ազգություն, քաղաքացիություն, էթնիկ պատկանելիություն, տարիք, առողջական վիճակ և այլն) իրավական պաշտպանության միջոցները բացակայում են, քանի որ բացակայում են նման հատկանիշներով ատելության խոսքի նյութահիրավական հիմքերը քաղաքացիական օրենսգրքում:

Այս բացը կարող է լրացնել Իրավահավասարության մասին օրենքը, որի ընդունվելու դեպքում այս օրենքը կարող է քաղաքացիահիրավական հարաբերություններում վկայակոչվել որպես իրավական պաշտպանության օրենսդրական հիմք՝ պայմանով, որ դրանում ամրագրվի ատելության խոսքի սահմանումը: Սակայն մյուս կողմից, անորոշ է, թե արդյոք Քաղաքացիական օրենսգիրքը կարող է կազմել հակախտրականության մասին օրենսդրության բաղկացուցիչ մաս: Իրավահավասարության մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածում սահմանված է, որ Իրավահավասարության ապահովման մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքից, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքից, այլ օրենքներից, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավական ակտերից: Վերջին արտահայտությունները (այլ օրենքներ և այլ իրավական ակտեր) անորոշ են ու բաց, սակայն կարող են ներառել նաև Քաղաքացիական օրենսգիրքը: Նպատակահարմար կլինի այդ ցանկում ավելացնել Քաղաքացիական օրենսգիրքը, որպեսզի օրենսգրքում մեր կողմից առաջարկվող նոր դրույթները հնարավոր լինի կիրառել Իրավահավասարության մասին օրենքի հետ: Հակառակ դեպքում Քաղաքացիական օրենսգիրքը կարող է կիրառվել որպես ինքնուրույն իրավական պաշտպանության միջոց, եթե դրանում ամրագրվեն ատելության խոսքի ինքնուրույն նորմեր:

Քանի որ սույն նախաձեռնությամբ առաջարկվում է Իրավահավասարության մասին օրենքում ավելացնել ատելության խոսքի սահմանում՝ որպես խտրականության առավել լուրջ տեսակ, կրկնությունից խուսափելու համար առաջարկվում է Քաղաքացիական օրենսգրքում սահմանել այնպիսի նորմ, որը լրացնի Իրավահավասարության մասին օրենքում ատելության խոսքի սահմանումը կամ հնարավոր լինի դրանք կիրառել միասին՝ միմյանց փոխլրացնելով: Այդ նպատակով

մենք օգտվում ենք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հայտնի նախադեպային դրույթից, որով դատարանը, ըստ էության սահմանեց, որ Կոնվենցիայի Անդամ պետությունները կարող են ունենալ նաև ատելության խոսքի քաղաքացիաիրավական կարգավորումներ՝ ի տարբերություն տարածված այն կարծիքի, որ ատելության խոսքը բացառապես քրեաիրավական կատեգորիա է: Այդ սահմանումը ներկայացրել ենք նաև Բաժին 1-ում, որը հետևյալն է.

> *«Պարտադիր չէ, որ ատելության հրահրումը հանդիսանա բռնության կոչ կամ այլ տեսակի հանցավոր արարք: Անձանց նկատմամբ ոտնձգումները նրանց վիրավորելով, ծիծաղի առարկա դարձնելով կամ հասարակական որոշ խմբերի հասցեին վիրավորանքի խոսքեր հնչեցնելով, կարող են բավարար հիմք հանդիսանալ իշխանությունների համար արդարացնելու համար պայքարը ռասիստական հայտարարությունների դեմ ազատ խոսքից անպատասխանատու եղանակով օգտվելու արդյունքում: Այդ կապակցությամբ դատարանը շեշտում է, որ սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունը նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը»:*[13]

Եվրոպական դատարանի այս սահմանումը համահունչ է ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի Թիվ 35 Մեկնաբանության վերը նշված դրույթին: Դատարանի այդ սահմանումից բխում է, որ անձին կամ անձանց խմբին հրապարակային եղանակով վիրավորելը, ծաղրելը, եթե դա արվում է պաշտպանվող հատկանիշներից որևէ մեկի հիմքով, օրինակ՝ ռասա, սեռ, էթնիկ պատկանելիություն, ազգություն, տարիք, և այլն, կարող է ձեռք բերել ատելության խոսքի հատկանիշներ: Ի տարբերություն այս մոտեցման, օրենսգրքի 1087.1 հոդվածում, որը սահմանում է հրապարակային եղանակով վիրավորանքի ու զրպարտության հիմքերը, խտրականության պաշտպանվող հատկանիշներ սահմանված չեն: Դա իրավաչափ է, քանի որ պաշտպանվող հատկանիշների առկայությունը կարևոր չէ վիրավորանքի ու զրպարտության դեպքում: Սակայն նույն վիրավորանքը և զրպարտությունը ձեռք են բերում խտրականության հատկանիշներ, եթե դրանք ուղեկցվում են պաշտպանվող հատկանիշներով՝ որպես արարքի դրդապատճառներ: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ռասիզմ եզրը միջազգային իրավունքում լայնորեն է մեկնաբանվում և չի սահմանափակվում բացառապես ռասայի հատկանիշով խտրականության, անհանդուրժողականության դրսևորումները: Պատմական, մշակութային,

[13] *Վեջդելանդն ու այլոք ընդդեմ Շվեդիայի*, թիվ 1813/07, 9/02/2012, կետ 55:

քաղաքական, տնտեսական և հանրային կյանքում այլ ընդհանրություններ ունեցող սոցիալական խմբի նկատմամբ շարունակական թիրախավորումները, թշնամանքի, բռնության ու խտրականության հրահրումները նույնպես կարող են անցնել ռասիզմ հասկացության տակ։

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը լրացնել դրույթով կամ դրույթներով, ըստ որոնց հոդվածով սահմանված արարքները, վիրավորանքը և զրպարտությունը՝ պայմանավորված անձի կամ անձանց խմբի *սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի, ազգային փոքրամասնությանը պատկանելիության, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով,* հանգեցնում են առավել խիստ պատասխանատվության, քան 1087.1 հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները։ Նման կարգավորմամբ տարանջատվում են վիրավորանքը և զրպարտությունը նույնաբնույթ այնպիսի արարքներից, որոնք նույնպես վիրավորանք ու զրպարտություն են, սակայն՝ կատարված պաշտպանված հատկանիշների շարժառիթով։ Դա որակապես փոխում է արարքի բնույթը՝ դրա վտանգավորությունը, դրան պատասխանատվության առավել խիստ միջոցով արձագանքելու անհրաժեշտությունը։ Օրինակ, առաջարկում ենք 1087.1 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ավելացնել հետևյալ դրույթները .

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը ... :

2) վիրավորանքը՝ պայմանավորված սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի, ազգային փոքրամասնությանը պատկանելիության, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով, հանգեցնում է օրենքով սահմանված առավել խիստ պատասխանատվության։

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը ... :

3) զրպարտությունը՝ պայմանավորված սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի, ազգային փոքրամասնությանը պատկանելիության, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով, հանգեցնում է օրենքով սահմանված առավել խիստ պատասխանատվության։

Համապատասխանաբար, 1087.1 հոդվածի 7-րդ և 8-րդ մասերում առաջարկում ենք ավելացնել հետևյալ դրույթները.

7. Վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

…

4) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել՝ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կատարված արարքի համար:

8. Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

…

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել՝սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված արարքի կատարման համար:

Կարող է հարց բարձրանալ, թե արդյոք Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում վիրավորանքի զրպարտության դրույթների ներքո ատելության խոսքի դրույթներ ավելացնելով հնարավոր է կարգավորել ատելության խոսքի բոլոր դրսևորումները քաղաքացիաիրավական հարաբերություններում: Այս հարցին կարելի է պատասխանել հետևյալ կերպ. *ոչ, եթե Իրավահավասարության մասին օրենքում չսահմանվի ատելության խոսքի ընդհանուր դրույթ, որը կարող է լրացնել 1087.1 հոդվածի դրույթները բոլոր այլ հնարավոր դեպքերի առումով:* Սակայն, հաշվի առնելով, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում ատելության խոսքի դրսևորումները հիմնականում տեղի են ունենում հրապարակային վիրավորանքի, ծաղր ու ծանակի տեսքով, կարծում ենք, որ 1087.1 հոդվածում առաջարկվող կարգավորումները վիրավորանքի ու զրպարտության հիմնական հասկացությունների ներքո բավարար հիմք կհանդիսանան բոլոր հնարավոր արարքները Քաղաքացիական օրենսգրքով կարգավորելու համար: Դա բխում է նաև <<վիրավորանք>> հասկացության մեկնաբանություններից, որոնք արվել են Վճռաբեկ դատարանի որոշումներով 2012 թվականից ի վեր: Ըստ Վճռաբեկ դատարանի, և՛ վիրավորանքի, և՛ զրպարտության համար նախապայման է, որ արտահայտությունը իր բնույթով լինի արատավոր: Արատավոր եզրը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

> *«Արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրուծանակի,*

ունակ է անձին վերածել ատելության կամ արհամարհանքի առարկայի կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից»:[14]

Այս նախադեպային դրույթը իր մեջ պարունակում է Եվրոպական դատարանի վերը նշված սահմանման բոլոր էական տարրերը. հայտարարության հրապարակային բնույթը, անձին ծաղրուծանակի ենթարկելը որպես՝ արարքի օբյեկտիվ հատկանիշ, ատելության տարրի առկայությունը որպես՝ դրդապատճառ, որը արհամարհանքի հետ միասին խտրականության և անհանդուրժողականության դրսևորումներ են, և արարքի խստության աստիճանը, որը կարող է հանգեցնել ընդհուպ անձի ինքնամեկուսացմանը: Այս սահմանումը նկարագրում է անձի իրավունքների ոտնձգության այնպիսի լրջություն, որը բավարար չէ քրեական հետապնդման համար, սակայն բավարար է քաղաքացիական պատասխանատվության համար:

Հոդված 1087.1-ի իմաստով վիրավորանքը ունի երեք, իսկ զրպարտությունը՝ չորս վավերապայմաններ, որոնք սահմանված են օրենքով և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Վիրավորանքի դեպքում արտահայտությունը պետք է արված լինի հրապարակայնորեն, դիտավորությամբ, իր բնույթով լինի արատավորող և չհամապատասխանի իրականությանը: Եվ վիրավորանքի, և զրպարտության դեպքում խոսքի արատավորող բնույթը անհրաժեշտ պայման է: Վերևում նշեցինք, որ <<արատավոր>> եզրի մեկնաբանության մեջ մտնում են քաղաքացիաիրավական իմաստով ատելության խոսքի անհրաժեշտ տարրերը: Նշանակում է քաղաքացիաիրավական բնույթի ատելության խոսքը բոլոր դեպքերում վիրավորանքի և զրպարտության իրավական սահմանման շրջանակներում է: Սա ևս մեկ հիմք է պնդելու համար, որ վերևում առաջարկվող դրույթները համահունչ են հոդված 1087.1-ի առարկայի, դրանով սահմանված արարքների օբյեկտիվ հատկանիշների հետ և որևէ հակասություն 1087.1 հոդվածի դրույթների կամ հոդվածի ողջ առարկայի հետ չեն առաջացնում:

Այսպիսով, Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը կարող է օրենսգրքում ատելության խոսքի օրենսդրական պլատֆորմ հանդիսանալ, եթե վիրավորանքի և զրպարտության իրավական սահմանումներին ավելացվի նույն արարքների որակյալ հատկանիշները՝ *սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի և այլ պաշտպանված հատկանիշների հիմքով:*

2. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ

[14] ՀՀ վճռաբեկ դատարանի 14.05.2014թ թիվ ԱՎԴ/0179/02/13 գործով որոշումը Անիկ Դավթյանի գործով. էջ 9, պարբ. 4:

Տեսալսողական մեդիայի մասին օրենքը կարգավորում է հեռուստառադիոընկերությունների գործունեությունը, ինչպես նաև մալուխային ցանցով տեսալսողական ծառայություններ մատուցող օպերատորների գործունեությունը: Օրենքը չի կարգավորում համացանցի ոլորտը, հետևաբար համացանցային հեռուստատեսությունը[15] այս օրենքի ոլորտից դուրս է մնում:

Օրենքը ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսին ու փոխարինել է 2000 թվականին ընդունված Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը: Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը, որի 7-րդ մասը վերաբերում է ատելության խոսքի արգելքին՝ հետևյալ ձևակերպմամբ. *<<Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնք հետապնդում են ազգային, ռասայական, սեռային և կրոնական հատկանիշներով խտրականություն քարոզելու նպատակ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն>>:* Թեև հոդվածի գոյությունը այս օրենքում ինքնին ողջունելի է, սակայն հոդվածը թերի է, քանի որ խտրականության արգելքը սահմանում է միայն չորս պաշտպանված հատկանիշներով՝ ազգություն, ռասա, սեռ և կրոն: Ստացվում է, որ, օրինակ, հաշմանդամության հիմքով անհանդուրժողականություն քարոզող տեսալսողական նյութը այս հոդվածի կարգավորման տակ չի անցնում: Հայտնի չէ, թե ինչ նկատառումով է Օրենսդիրը հակախտրականության շրջանակները սահմանել այդ աստիճան նեղ: Որևէ օբյեկտիվ հիմք այդ իմաստով հնարավոր չէ ներկայացնել, եթե Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում է խտրականության համընդհանուր արգելքը ու ավելի լայն պաշտպանված հատկանիշների ցանկ: Հաշվի առնելով այդ թերությունը, առաջարկվում է դրույթը շտկել, **առաջին, սահմանելով խտրականության համընդհանուր արգելքի սկզբունքը, որը Սահմանադրությամբ սահմանված է <<անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանք>> արտահայտությամբ, երկրորդ, սահմանելով տասը առավել լայնորեն տարածված և առավել լուրջ բնույթի խախտումների հանգեցնող պաշտպանված հատկանիշները, որոնք են ռասայի, ազգության, էթնիկ պատկանելիության, մաշկի գույնի, քաղաքացիության, սեռի, տարիքի, հաշմանդամության, լեզվի և գույքային դրության հատկանիշները:**

Հոդվածի իրավական ուժը մեծացնելու նպատակով, սակայն ոչ ավելի քան պահանջվում է քաղաքացիական օրենսդրության շրջանակում, առաջարկում ենք հոդվածը համալրել ատելության խոսքի այլ հատկանիշներով նույնպես, օրինակ, խտրականության հետ ավելացնել նաև <<անհանդուրժողականության>>

[15] Հաճախ հեռուստատեսային ընկերությունները նախընտրում են որոշ հեռուստատեսային հաղորդումներ հեռարձակել, օրինակ, Youtube.com սոցիալական ցանցով, ու այս հարթակը չի կարող կարգավորվել ՀՌՀ-ի կողմից:

արտահայտությունը: Ինչպես արդեն նշվել է վերևում, խտրականություն և անհանդուրժողականություն եզրերը հոմանիշներ չեն, դրանց իրավական բովանդակությունը տարբեր է. առաջինը ենթադրում է տարբերակված վերաբերմունք, անհավասար պայմաններ, որոնք ենթադրում են կոնկրետ գործողություններ, արարքներ, պրոակտիվ քայլեր, որոշակի հարձակողական իրավիճակ, իսկ երկրորդը՝ պասիվ իրավիճակ, աշխարհայացք, մտահորիզոն: Իր բնույթով անհանդուրժողականությունը ներառում է ատելության խոսքի առավել նուրբ, զգուշավոր դրսևորումները, որոնք առերևույթ նշմարելի չեն, չեն պարունակում բռնության, թշնամության կամ ատելության արտահայտություններ, սակայն տարածում, քարոզում և հրահրում են խտրականություն, թշնամություն և նույնիսկ բռնություն:

3. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Որքան էլ որ զարմանալի է, Զանգվածային լրատվության մասին օրենքում ատելության խոսքի վերաբերյալ դրույթ չկա: Մինչդեռ, ատելության խոսքի տարածման մեջ լրատվամիջոցները էական դերակատարում ունեն՝ հատկապես հաշվի առնելով, որ լրատվամիջոցները լայնորեն օգտվում են սոցիալական ցանցերում խոսքի շրջանառությունից: Օրենքի 7-րդ հոդված, որը սահմանում է լրատվության ոլորտում խոսքի ազատության սահմանումները, տրամադրում է որոշ աղոտ ու սահմանային կարգավորումներ: Հոդվածի 1-ին մասը սահմանում է <<քրեորեն պատժելի արարքներ քարոզող>> տեղեկատվության տարածումը: Որքան էլ որ սա անորոշ կարգավորում է, այդուհանդերձ, տեսականորեն կարող է կիրառվել Քրեական օրենսգրքի 226, 226.2, 393, 393.1, 397.1-րդ հոդվածների, ինչպես նաև ատելության շարժառիթով հանցագործության հանցակազմ պարունակող բոլոր դրույթների առնչությամբ: Ստացվում է, որ 7-րդ հոդվածի 1-ին մասը բլանկետային նորմ է, քանի որ չի կարող կիրառվել ինքնուրույն, այլ դրա կիրառության համար անհրաժեշտ է Քրեական օրենսգրքի որևէ հոդվածով սահմանված արարքի կատարում: Այլ կերպ ասած, 7-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերի առկայության դեպքում պետք է հարուցվի կամ արդեն պետք է հարուցված լինի քրեական գործ: Գործնականում սա կարող է դժվարություններ ստեղծել: Այդուհանդերձ, այս հոդվածի հիմնական թերությունը դրա նեղ շրջանակն է ու իրավական անորոշությունը: Հոդվածը կիրառելի է բացառապես քրեական օրենսդրությամբ կարգավորվող ատելության խոսքի նկատմամբ: Վարչական ու քաղաքացիական պատասխանատվության հանգեցնող ատելության խոսքի նկատմամբ հոդվածը չի կարող կիրառվել: Դա ուղղակիորեն պայմանավորված

է հոդվածի բովանդակությամբ։ Նման նեղ շրջանակը, բնականաբար, չի կարող բավարարել ներկա պահանջներին։ Հիշենք, որ օրենքն ընդունվել է 2004 թվականին, երբ W2.0 փոխակտիվ ինտերնետը դեռ նոր էր ստեղծվում և սոցիալական ցանցերը որպես երևույթ նոր էին ծավալվում համացանցում։ Ատելության խոսքի հիմնական չափաբաժինը այսօր ստեղծվում է օգտատերերի կողմից, ովքեր ոչ միայն ինֆորմացիայի սպառող են, ինչպես W 1.0 ինտերնետի դեպքում, այլ նաև ինֆորմացիա արտադրող՝ գեներացնելով մեծ քանակության համացանցային նյութ (user generated content)։ Դրա մեծ մասը ոչ քրեական բովանդակությամբ ատելության խոսք է, որը խախտում է անձանց քաղաքացիական իրավունքները կամ հասարակական կարգը։ Հետևաբար, 7-րդ հոդվածի 1-ին մասը պետք է փոփոխվի ու լայնացվի՝ ներառելու համար այնպիսի խոսք, որը, օրինակ, լրատվամիջոցի կողմից քարոզում է անհանդուրժողականություն՝ առանց բռնության ու թշնամության կոչերի, որոնք Քրեական օրենսգրքի 226.2 հոդվածի հատկանիշներ են։ 7-րդ հոդվածի 1-ին մասը հաջորդ թերությունը, ինչպես նշվեց, դրա անորոշ ձևակերպման մեջ է։ Բացակայում են խտրականության պաշտպանված հատկանիշները, ինչպես նաև այդ հատկանիշների հիմքով անհանդուրժողականություն, խտրականություն, ատելություն, թշնամություն և բռնություն քարոզելու, հրահրելու, տարածելու, արդարացնելու գործողությունների սահմանումները՝ ըստ վերը նշված միջազգային իրավունքի աղբյուրների։

Այսպիսով, 7-րդ հոդվածի 1-ին մասը պետք է փոփոխվի, դրանում, առաջին, պետք է ավելացվեն ատելության խոսքի հատկանիշներ, երկրորդ,, հոդվածի շրջանակը պետք է ընդլայնվի ու ներառի ոչ միայն քրեական, այլ նաև քաղաքացիական ու վարչական պատասխանատվության հանգեցնող նվազ լրջության ատելության խոսքի դրսևորումները։

4. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարչական իրավունքը կարող է արդյունավետ դերակատարում ունենալ ատելության խոսքի տարածումը զսպելու համար, երբ ատելության խոսքի ծանրության աստիճանը, հանրային վտանգավորությունը չեն պահանջում քրեաիրավական բնույթի պատժի ու ներգործության միջոցներ, մինչդեռ հասարակական շահը պահանջում է ապահովել պատշաճ իրավական արձագանք։ Համացանցի սփռվածությունը և հասանելիությունը հասել են այնպիսի մասշտաբների, որ այդ հարթակում տարածված խոսքը, անկասկած, ձեռք է բերում հասարակական ծավալներ ու գոյանում է նման խոսքը կարգավորելու հասարակական անհրաժեշտություն։ Բացի այդ, վարչական բնույթի իրավական պաշտպանության միջոցները, օրինակ՝ ընթացակարգերը, իրավական համակարգը չեն ծանրաբեռնում

այնպես, ինչպես՝ քրեականը։ Վարչարարության իրավական ընթացակարգերը գործում են արագ, դրանք ավելի պարզ են ու դինամիկ և որպես իրավական պաշտպանության միջոց հաճախ ավելի նպատակահարմար են, քան քրեական կամ քաղաքացիականը։ Եվ վերջապես, հաշվի առնելով, որ ատելության խոսքը կարող է որոշակի հանգամանքների ներքո փոխհավասարակշռվել այլ մրցակցող լեգիտիմ շահերի ու իրավունքների հետ, վարչական կառուցակարգերը թույլ են տալիս փոխհավասարակշռում անել ավելի արդյունավետ կերպով, քան՝ քրեականը։ Օրինակ, վարչարարությունը և վարչական վարույթը հնարավորություն են տալիս, որ իրավական պաշտպանության միջոցները կիրառվեն կենտրոնանալով ոչ թե պատժելու, այլ կարգավորման վրա։ Ուստի, երբեմն ավելի նպատակահարմար է պատժելու փոխարեն հանրորեն դրսևորվող վարքագիծը/գործողությունները կարգավորելը, ու դա նպատակահարմար է անել խախտված իրավունքի վերականգնման միջոցի կիրառումով, օրինակ՝ պահանջելով անձին կամ կազմակերպությանը հեռացնել կամ արգելափակել ատելություն պարունակող համացանցային նյութը, և/կամ տարածել հայտարարություն առ այն, որ տվյալ հարթակը տարածել է ատելության խոսք՝ որպես հասարակական պարսավանքի միջոց, կամ հրապարակայնորեն ներողություն խնդրելը անփութության արդյունքում ատելության խոսք տարածելու համար, և այլ վարչաիրավական միջոցներ, որոնց նպատակն է հանրային միջավայրում վարքագծի կարգավորումը, այլ ոչ թե պատժելը։

Վարչական օրենսդրության ներգրավվածությունը ատելության խոսքի կարգավորման գործում պայմանավորված չէ բացառապես վարչական պատասխանատվության գործիքներ կիրառելու անհրաժեշտությամբ։ Իրավական համակարգում գործում են վարչական մարմիններ, որոնք լիցենզավորում, , մշտադիտարկում, վերահսկում են տեղեկությունների ու գաղափարների տարածման տարբեր հարթակներ, համակարգեր, կառուցակարգեր։ Դրանք են, օրինակ, Հեռուստատեսության և Ռադիոյի հանձնաժողովը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը և, որոշ վերապահումներով, Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունը։ Այս մարմինները իրենց որոշումները կայացնում են վարչարարությամբ ու վարչական ակտերի ընդունմամբ, որոնց շրջանակներում առաջանում է անհրաժեշտություն կիրառել վարչական իրավախախտումների օրենսդրության, վարչարարության, վարչական վարույթի նորմեր, օրինակ՝ հեռուստատեսային հաղորդումների լիցենզիան, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիան կամ համացանցային ծառայությունների մատուցման լիցենզիան կասեցնելիս կամ չեղարկելիս։ Նման ընթացակարգերը շոշափում են Վարչական իրավախախտումների մասին օրենքը, Վարչարարության և վարչական վարույթի մասին օրենքը, Լիցենզիայի մասին օրենքը, Տեսալսողական մեդիայի մասին օրենքը և այլ իրավական ակտեր, որոնք անհրաժեշտ

է, որ համալրված լինեն ատելության խոսքի մասին նորմատիվ դրույթներով, որ հնարավոր լինի դրանք վկայակոչել ու դրանց վրա հիմնվել համապատասխան վարչական ակտերում: Ավելին, կազմակերպությունների գործունեության թույլտվությունը, կասեցումը և դադարեցումը նույնպես կայացվում է վարչական ակտերի միջոցով, որոնցում վկայակոչվում են վարչական օրենսդրության դրույթներ: Հետևաբար, անհրաժեշտ է վարչական օրենսդրությունը համալրել ոլորտի կարգավորման համար անհրաժեշտ ատելության խոսքի նորմերով:

ՌԱԵՀ-ի թիվ 15 ԸՔՀ-ի 8-րդ հանձնարարականում լայնորեն անդրադարձ է արվում վարչական օրենսդրության բարելավման անհրաժեշտության վրա: Ինչպես քաղաքացիական օրենսդրության, այնպես էլ վարչական օրենսդրության առումով 8-րդ հանձնարարականում առաջարկվում է կարգավորումները ուղղել ատելության խոսքի հեղինակների, ինտերնետ ծառայություն մատուցողների, վեբ հարթակի և հոսթինգի, առցանց միջնորդների, սոցիալական մեդիա հարթակների, բլոգ էջերի մոդերատորների և համանման գործառույթ իրականացնող այլ անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ կառուցակարգեր սահմանելու ուղղությամբ: Բաժին 4-ում մանրամասնորեն ուսումնասիրված են նշված ոլորտները: Դրանում ներկայացված են բոլոր կարգավորումների մանրամասն նկարագրությունը, ըստ որի ինֆորմացիայի հոսքը դրանց մի մասի կողմից կարգավորվում է քաղաքացիաիրավական նորմերով (օրինակ՝ ինտերնետ ռեգիստրարի և օգտատիրոջ միջև քաղաքացիաիրավական պայմանագրի կնքումը), իսկ մյուս մասը՝ վարչարարությամբ և վարչական օրենսդրությամբ: Վերջինի օրինակ են ցանցային օպերատորների և ինտերնետ ծառայություններ մատուցողների լիցենզավորումը պետական կարգավորողի կողմից, ՀՌՀ-ի կողմից հեռուստաընկերությունների նկատմամբ վարչական տույժերի կիրառումը ատելության խոսքի համար, և այլն: 8-րդ հանձնարարականով առաջարկվում է սահմանել այլ իրավական պաշտպանության միջոցներ նույնպես, սակայն նախընտրում ենք դրանց անդրադառնալ ստորև նշված համապատասխան բաժիններում:

4.1. ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ

Ինչպես նշվեց վերևում, համացանցի համատարած մատչելիությունը և համացանցի աշխարհագրական սփռվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ համացանցում տարածվող ցանկացած խոսք հրապարակային հայտարարություն է: Վիրավորանքի և զրպարտության գործերով դատարանները սահմանել են կայուն հաստատված նախադեպային իրավունք, ըստ որի առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կամ նրա հաղորդակցմամբ տարածված խոսքը հրապարակային

հայտարարություն է, որից բխեցվել է, որ համացանցում տարածված խոսքը <<հասանելի է բոլորին>> ռեժիմով ինքնին հրապարակային հայտարարություն է։[16] Քանի որ համացանցում տարածված խոսքը հրապարակային խոսք է, նշանակում է այդ տիրույթում անձի կամ անձանց խմբի նկատմամբ հրապարակային արտահայտությունը հասարակական վարքագիծ է, որը կարիք ունի կարգավորման, եթե դա խախտում է հասարակական կարգը՝ բնակիչների անդորրը, հասարակական բարոյականության նորմերը, համակեցության կանոնները։ Օրինակ, սոցիալական էջում կամ էլեկտրոնային որևէ այլ հարթակում տեղադրված սեռական բնույթի հայոյանքը իրավաբանորեն կարող է սահմանվել որպես հասարակական կարգի խախտում, քանի որ ունի հանրային մատչելիություն և սփռվածություն։ Ավելին, այդ խոսքը մնում է հանրային հարթակում երկար ժամանակ՝ ի տարբերություն հանրային վայրում դրսևորած հակահասարակական վարքագծի, որը տևում է շատ կարճ, մի քանի րոպե, ու տեսանելի է միայն այդ տեղանքում գտնվող սահմանափակ թվով անձանց։ Մինչդեռ, համացանցը չունի արխիվ հասկացությունը, համացանցում չկա անցյալ ու ներկա հասկացությունները, ինչպես տպագիր մամուլի դեպքում, երբ մի քանի օր շարունակ հանրային հարթակներում հասանելի թերթը այնուհետև տեղափոխվում է արխիվ ու դառնում անհասանելի բնակիչների համար։ Մինչդեռ, համացանցում նախկինում հրապարակված ցանկացած նյութ կարելի է հաշված վայրկյանների ընթացքում կրկին դարձնել մատչելի ու վերահրապարակել, տարածել ավելի մեծ ծավալներով (օրինակ՝ share անելու եղանակով)։ Համացանցում մեկ անգամ հանրային եղանակով տարածված նյութը ընդմիշտ մնում է հրապարակային ու գրեթե անհնարին է նման նյութը ամբողջությամբ հեռացնել գլոբալ ցանցից։ Այս ամենը թույլ է տալիս ամենայն վստահությամբ ասել, որ **անձի կամ անձանց խմբի վերաբերյալ համացանցում տարածված ատելության խոսքը հասարակական վարքագիծ է և որպես այդպիսին, նույնիսկ եթե չունի քրեաիրավական բովանդակություն, կարիք ունի կարգավորման, եթե խախտում է հասարակական կարգը**։ Սրանով հանդերձ պետք է հիշել, որ վարչական պատասխանատվության նպատակը ոչ թե պատժելն է, այլ հասարակական վարքագիծ դաստիարակելը, կարգավորելը, նոր իրավախախտումներ կատարելը կանխելը։ Օրինակ, եթե տղամարդը հանրային բանավեճի կոնտեքստում սեռական բնույթի հայոյանքներով լի տեքստ է տեղադրում սոցիալական ցանցի իր էջում կին պաշտոնատար անձի հասցեին, վերջինիս կամ նրա ընտանիքի լուսանկարի ուղեկցությամբ կամ առանց դրա, ապա նման արարքը

[16] <<Մեկ երրորդ անձ>> չափանիշի մասով տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով որոշման 8-րդ էջի վերջում և 9-րդ էջի սկզբում, ինչպես նաև 9-րդ էջի 2-րդ պարբերության ձևակերպումը։ <<Հասանելի է բոլորին>> չափանիշի մասին տե՛ս Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը թիվ ԵԱԴԴ/0074/02/12 քաղաքացիական գործով, էջ 8, 2-րդ պարբերություն։

հակահասարակական վարքագիծ է և շոշափում է ոչ միայն պաշտոնատար անձի անձնական, մասնավոր, քաղաքացիական իրավունքները (օրինակ՝ արժանապատվության նկատմամբ հարգանքը), այլ նաև հասարակական համակեցության կանոնները, հասարակական բարոյականության նորմերը, քանի որ, առաջին, նման տեքստը հասանելի է բոլորին, երկրորդ, տարածվել է հանրային բանավեճի շրջանակներում, երրորդ, չի կարող անմիջապես հեռացվել և կարող է անկանոն կերպով տարածվել՝ այդպիսով շարունակելով խախտել հասարակական կարգը՝ հանգեցնելով անդառնալի հասարակական հետևանքի: Հետևաբար, ատելության խոսքը համացանցով կարիք ունի կարգավորման վարչահիրավական եղանակով:

Ատելության խոսքի կարգավորումը վարչահիրավական բնույթի նորմատիվ ակտերով կիրառվում է մի շարք պետություններում: Ռումինիայի «Խտրականության դեմ պայքարի մասին» օրենքում առանձին հոդվածով սահմանված է խտրականությունը, որը բաղկացած է բազմաթիվ դրույթներից ու բավականին ծավալուն է:[17] Դրանից բացի, առանձին հոդվածով սահմանված է հրապարակային եղանակով ատելության խոսքի կարգավորումը, որը հետևյալն է.

> *Կառավարության սույն որոշման ներքո՝ ազգայնա-շովինիստական բնույթի ցանկացած հասարակական վարքագիծ, ռասայական կամ ազգային պատկանելիության հիմքով ատելության ցանկացած հրահրում, կամ ցանկացած վարքագիծ, որի նպատակն է անձի արժանապատվությունը վնասելը կամ թշնամական, նվաստացնող, ստորացնող կամ վիրավորական միջավայր ստեղծելը, որն իրականացվում է անձի, անձանց խմբի կամ համայնքի հանդեպ՝ ռասայի, ազգության, էթնիկ պատկանելիության, կրոնի, սոցիալական ծագման կամ անբարյացակամորեն ընդունվող խմբի պատկանելու, հավատքի, սեռի, սեռական կողմնորոշման հիմքով հանդիսանում է իրավախախտում՝ բացառությամբ, եթե նման արարքները չեն մտնում քրեական իրավունքի շրջանակի մեջ:[18]*

Այս սահմանումը, ըստ էության, քրեական իրավունքից դուրս ատելության խոսքի կարգավորումն է՝ վարչական իրավունքի միջոցով: Ըստ այս սահմանման, ատելության խոսքը հասարակական վարքագիծ է, ատելության հրահրում, կամ ցանկացած խոսք, որն իրենից ներկայացնում է անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգություն,

---

[17] Կառավարության Թիվ 137/2000 որոշում. խտրականության բոլոր ձևերի կանխարգելման ու տույժի ենթարկելու մասին. հոդված 2:

[18] Նույն տեսում. հոդված 15:

եւ որը կարող է ստեղծել վախեցնող, թշնամական, նվաստացնող կամ վիրավորական միջավայր, կամ ցանկացած վարքագիծ, որն արտահայտվում է հրապարակայնորեն եւ ունի որոշակի խմբերի դեմ ատելություն հրահրելու, արժանապատվություն խախտելու կամ թշնամական միջավայր ստեղծելու հատկանիշներ: Կարեւոր է նշել, որ օրենքը ներառում է ինչպես հրապարակային, այնպես էլ ոչ հրապարակային խոսքը: Եվ ամենակարևորը. սահմանված է հստակ տարբերակում քրեական իրավախախտումների, որոնք ունեն շատ ավելի բարձր շեմ, եւ այս նվազ ծանր իրավախախտումների միջեւ, որոնք ավելի հեշտ է ապացուցել, եւ որոնց համար սահմանված են առավել նվազ խստության տույժեր և, որպես այդպիսին՝ առավել նվազ միջամտություն անձի հիմնարար իրավունքներին:

«Խտրականության արգելքի մասին» Սերբիայի օրենքի 11-րդ հոդվածում սահմանված է ատելության խոսքի հետևյալ սահմանումը.

> *Արգելվում է արտահայտել գաղափարներ, տեղեկություններ կամ կարծիքներ՝ հրահրելով խտրականություն, ատելություն կամ բռնություն անձի կամ անձանց խմբի դեմ՝ նրանց անձնական հատկանիշների հիմքով, ինչպես նաև հանրային կամ այլ հրապարակումներում, հավաքներում կամ հանրային տարածքներում՝ գրառումներ կամ խորհրդանիշներ գրելու կամ ցուցադրելու կամ որևէ այլ կերպ:*

Հոդվածի օբյեկտը նույնպես **հասարակական վայրերում**՝ հավաքներում, հանրային տարածքում, հասարակական հրապարակումներում ատելության խոսքի տարածումն է, որում հասարակական վայրը արտահայտված է և՛ ֆիզիկական, և՛ էլեկտրոնային/թվային միջավայրը՝ այսինքն կիբերտարածքը:

Մոնտենեգրոյի «Հասարակական կարգի եւ խաղաղության մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ որեւէ մեկին ազգային, ռասայական կամ կրոնական կամ էթնիկ ծագման կամ անձնական բնույթի այլ հատկանիշների հիմքով վիրավորելը զանցանք է: Սա շատ հստակորեն հակադրվում է ատելության խոսքի քրեական նորմին, որը հիմնված է ատելություն եւ բռնություն հրահրելու արարքի վրա[19]:

Այսպիսով, իմ մի բերելով վերը նշվածը, այդ թվում նաև համեմատական իրավունքի վերը նշված օրինակները, առաջարկվում է ատելության խոսքի կարգավորումը ներմուծել Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք և սահմանել վարչական տույժի նյութահիրավական հիմքեր: Անհրաժեշտ է որոշել զանցանքի օբյեկտիվ հատկանիշները: Որպես ուղեցույց, առաջարկվում է հիմնվել

[19] Մոնտենեգրոյի քրեական օրենսգիրք, հոդված 370:

վերը նշված երեք երկրների օրինակների և Թիվ 15 ՔՔՀ-ի մեկնաբանությունների վրա և առաջնորդվել հետևյալ քայլերով.

Առաջին, արարքի հիմնական հատկանիշը անհրաժեշտ է սահմանել արարքի **հասարակական բնույթը**՝ հասարակական միջավայրը, որը պետք է ներառի ֆիզիկական միջավայր (փողոց, հրապարակ, մարզադաշտ, և այլն), իրադարձություն (հանրահավաք, երթ, սպորտային իրադարձություն), էլեկտրոնային փոխակտիվ հաղորդակցության հարթակ (որտեղ վերջնական օգտագործողները գեներացնում են կոնտենտ (համացանց, սոցիալական ցանց, այլ բջջային հավելվածներ, որոնցում ինֆորմացիան հոսում է <<հասանելի է բոլորին>> ռեժիմով) և տեսալսողական մեդիա հարթակներ։

Երկրորդ, անհրաժեշտ է սահմանել արարքի թիրախը։ Որպես կանոն թիրախը անձն է կամ անձանց խումբը։

Երրորդ, անհրաժեշտ է սահմանել գործողության տեսակը։ Որպես կանոն, ատելության խոսքի սահմանումներում օգտագործվում է *քարոզելը, սադրելը, հրահրելը, խթանելը, արդարացնելը և տարածելը*։ Որպես հավաքական եզր, առաջարկվում է օգտագործվել *հրահրել* տերմինը, որը, ի տարբերություն քրեական օրենսդրության մեջ օգտագործվող *հարուցել* տերմինի, պարունակում է արարքի հարձակողական բովանդակություն, որն էլ ատելության խոսքի հիմնական հատկանիշ է։

Չորրորդ, անհրաժեշտ է սահմանել գործողության օբյեկտների ցանկը։ Քրեական օրենսդրության մեջ սահմանված են *անհանդուրժողականություն*, *խտրականություն*, *բռնություն* և *թշնամանք* եզրերը։ Վերջին երկուսը հանրային վտանգավորության առավել մեծ աստիճան ունեն, քան պահանջվում է վարչական օրենսդրությամբ։ Հետևաբար, պետք է դիտարկել ատելության խոսքի հանրային առավել նվազ վտանգավորության օբյեկտներ, ինչպիսին են, օրինակ, ծաղր ու ծանակը, վիրավորանքը, նվաստացումը, անհանդուրժողականությունը։ Կարելի է դիտարկել նաև դրանց համադրությունը՝ ինչպես առաջարկվում է ՌԱԵՀ-ի թիվ 15 ՔՔՀ-ում՝ *նվաստացում*, *ատելություն*, *անարգանք*, *վիրավորանք*, *կարծրատիպ*, *խարան*, *սպառնալիք*, և այլն։ Եվ վերջինը, անհրաժեշտ է բոլոր վերը նշված հատկանիշները ամրագրել պաշտպանված հատկանիշներով՝ որպես արարքի դրդապատճառ, որն էլ հենց վիրավորական,անբարյացակամ խոսքը վերածում է ատելության խոսքի։

Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում ատելության խոսքի սահմանումը առաջարկում ենք ներառել Գլուխ 13-ում՝ <<Հասարակական կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ>> բաժնում։

4.2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Թիվ 15 ՔՔՀ-ի 8-րդ հանձնարարականի բ-կետի համաձայն՝ Մասնակից Պետություններին առաջարկվում է ապահովել լիազորություններ՝ դատարանի թույլտվությամբ կամ դատարանի հաստատմամբ, պահանջելու համար ատելության խոսքի հեռացում ցանցում հասանելի նյութերից և ատելության խոսք օգտագործող ինտերնետային կայքերի արգելափակում: Նույն հանձնարարականի գ) կետի համաձայն, առաջարկվում է սահմանել իրավասություններ, որ դատարանի թույլտվությամբ կամ դատարանի հաստատմամբ զանգվածային լրատվամիջոցներից (ներառյալ՝ ինտերնետ ծառայություն մատուցողներից, առցանց միջնորդներից և սոցիալական մեդիա հարթակներից) պահանջվի հրապարակել հաստատում առ այն, որ իրենց կողմից հրապարակված նյութը պարունակել է ատելության խոսք: Այսպիսով, հանձնարարականով առաջարկվում է համացանցային ծառայությունն իրականացնող ընկերությունների համար սահմանել համացանցում ատելության խոսքի արգելափակման ու համացանցից ատելության խոսքի հեռացման պոզիտիվ իրավական պարտավորություններ:

Համացանցային ծառայությունների կազմակերպումը ՀՀ-ում իրականացվում է հինգ հարթակներում. պետական կարգավորող մարմին (Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով), ցանցի օպերատոր, ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցող (ISP), դոմեն ռեգիստրարներ և բաժանորդներ: Հանձնաժողովը տրամադրում է լիցենզիա ցանցի օպերատորներին և ինտերնետ հասանելիության ծառայություն մատուցող ընկերություններին և վերահսկում է նրանց կողմից լիցենզիայի պայմանների կատարումը: Վերջիններն ապահովում են ցանցի շահագործումը: Դոմեն ռեգիստրարները քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա վերջնական օգտագործողներին տրամադրում են դոմեն, որպեսզի վերջիններս կարողանան օգտվել համացանցից՝ սպառելով կամ գեներացնելով կոնտենտ (տե՛ս Հավելված 1 – Ատելության խոսքի քարտեզագրում):

Այս կառուցակարգերում վարչական օրենսդրությունը, 8-րդ հանձնարարականի առումով, կարող է կիրառվել Հանձնաժողովի կողմից ցանցի շահագործման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման լիցենզիաների տրամադրումով, կասեցումով և չեղարկումով: Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն կամ ինտերնետ ծառայություն մատուցող ընկերությունների լիզենզիայի կասեցման կամ դադարեցման հիմքերը, որոնց թվում սահմանված է նաև հետևյալ հիմքը. *7) եթե կասեցումը կամ դադարեցումն անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ հանրային շահի նկատառումներով:* Նման լայն հիմքը չի ապահովում իրավական

որոշակիություն, այդուհանդերձ, տեսականորեն դա կարող է հիմք հանդիսանալ կասեցնելու համար ատելության խոսք տարածող իրավաբանական անձի լիզենզիան, քանի որ դա անհրաժեշտ է հանրային շահի նկատառումներով: **Առաջարկում ենք օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ կետը բարեփոխել ու ավելացնել ատելության խոսքի վերաբերյալ դրույթներ <<հանրային շահի նկատառումներով>> եզրի ներքո:** Նպատակահարմար է ավելացնել ատելության խոսքի դրույթներ 7-րդ կետի ներքո կամ 12-րդ հոդվածի որևէ այլ դրույթի ներքո՝ լիցենզիայի կասեցումը և/կամ դադարեցումը ատելության խոսքի տարածման հիմքով հիմնավորելու համար: Կարգավորող մարմինը որպես հիմք կարող է ընդունել ցանցի օպերատորի կամ համացանցի հասանելիության ծառայություններ մատուցող ընկերության կողմից իր պարտականությունները թերի կատարելը, որի արդյունքում քաղաքացին զրկվել է իրավական պաշտպանության միջոցից կամ ատելության խոսքի տարածումը չի նախականխվել:

Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի 12-րդ հոդվածը զուրկ է որոշակիությունից ու հստակությունից: Սակայն այս հոդվածի կարգավորումը կարելի է դիտարկել Լիցենզավորման մասին օրենքի հետ համակցությամբ: Ցանցի օպերատորները և ինտերնետ ծառայություններ մատուցողները գործում են լիցենզիայի հիման վրա: Հետևաբար, նրանց գործունեությունը կարգավորվում է և՛ Լիցենզիայի մասին օրենքով, և Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքով: Լիցենզավորման մասին օրենքի 35-րդ հոդվածը սահմանում է օպերատորի և ծառայություններ մատուցողի լիցենզիայի կասեցման այնպիսի հիմքեր, ինչպիսին են լիցենզիայի պահանջների ու պայմանների խախտումները, որոնք ուղղակի սպառնալիք են հանգեցրել *հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հասարակական բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին ու բարի հանբավին:* Սրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին կամ մի քանիսը միասին կարող են ատելության խոսքի տարածման համար լիցենզիան կասեցնելու բավարար իրավական հիմք(եր) հանդիսանալ: Այլ բան է, որ պրակտիկայում դրանք գրեթե չեն կիրառվում, քանի որ բավարար չափով հստակություն, մանրամասնություն չունեն, խիստ ընդհանրական են: Բացի դրանից, Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքով հստակորեն չեն կարգավորված կոնտենտի կարգավորման ուղղությամբ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի, ցանցային օպերատորների և ծառայություններ մատուցողների իրավասությունների շրջանակները: Այդուհանդերձ, կարծում ենք, որ ցանցի օպերատորները կարող են կիրառել <<ծանուցել ու հանել>> ընթացակարգը ցանցում ատելության խոսք տարածող IP հասցեատիրոջ նկատմամբ: Այդ մասին մանրամասնորեն խոսվում է Բաժին 4-ում: Մենք այստեղ հակիրճ նշենք, որ ցանցի օպերատորը իրավասու է արգելափակել իր ցանցում ատելության խոսք տարածող

օգտատիրոջ IP հասցեն կամ նրան ուղարկել գրություն առ այն, որ նա խախտում է ցանցի շահագործման կանոնները և պարտավոր է հեռացնել տվյալ կոնտենտը իր էջից: **Ցանցի օպերատորը կարող է գործել իր նախաձեռնությամբ, կամ քաղաքացիների բողոքների հիման վրա՝ որպես պոզիտիվ պարտավորություն, սահմանված լիցենզիայի պայմանագրով:** Կարծում ենք, որ ցանցի օպերատորի պարտականությունները լիցենզիայի ներքո պետք է սահմանափակվեն IP հասցեատիրոջը ծանուցում ուղարկելով՝ այդպիսով ապահովելով <<ծանուցել ու հանել>> (Notice and Take Down) ընթացակարգի կիրարկումը: Հասցեատիրոջ կողմից նյութը չհեռացնելու դեպքում ցանցի օպերատորը պարտավոր է ձեռնարկել համապատասխան գործողություններ, որոնց չկատարելը կարող է հանգեցնել կարգավորող մարմնի կողմից տույժի նշանակմանը, լիցենզիայի կասեցմանը կամ դադարեցմանը՝ էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի 12-րդ հոդվածի կամ Լիցենզավորման մասին օրենք 35-րդ հոդվածի հիմքով:

Ինչ վերաբերում է ռեգիստրար-օգտատեր տիրույթում կոնտենտի կարգավորման առարկային, քանի որ սա քաղաքացիաիրավական հարաբերություն է և չի ներառում վարչարարություն, այս բաժնում դրան չենք անդրադառնում: Այդ մասին մանրամասնորեն խոսվում է Բաժին 4-ում:

4.3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄ և ԱՐԳԵԼՈՒՄ

Թիվ 15 ԸՔՀ-ի 7-րդ հանձնարարականով Մասնակից Պետություններին առաջարկվում է օրենքներով նախատեսել քաղաքական կուսակցությունների և այլ կազմակերպությունների գործունեության արգելում կամ դրանց լուծարում, եթե այդ կազմակերպությունները, նրանց անդամները օգտագործում են ատելության խոսք, որը նպատակաուղղված է կամ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ ուղղված է հրահրելու բռնության, ահաբեկման, թշնամանքի կամ խտրականության գործողություններ ատելության խոսքով թիրախավորված անձանց նկատմամբ: Հանձնարարականի բացատրական մասում նշվում է, որ այս հանձնարարականի սահմանումը պայմանավորված է մշտադիտարկման արդյունքներով, ըստ որի ավելի հաճախակի են դարձել քաղաքական կուսակցությունների անդամների կողմից ատելության խոսքի օգտագործումը և կուսակցության կողմից նրանց նկատմամբ վարչական կամ կարգապահական բնույթի պատասխանատվության չենթարկելը:

Ուշադրություն դարձնենք, որ հանձնարարականը սահմանում է այնպիսի դեպքերի արգելքը, երբ ատելության խոսքի նպատակն է, կամ ողջամտորեն կարելի է

ակնկալել, որ այն կարող է հրահրել բռնության, ահաբեկման, թշնամանքի կամ խտրականության գործողություններ: Հետևաբար, վարչական վարույթի ընթացքում անհրաժեշտություն կլինի հաստատել, որ կան հիմնավոր ապացույցներ առ այն, որ այդպիսի մտադրություն գոյություն ունի, կամ որ կա վերոնշյալ գործողությունների կատարման անմիջական հավանականություն: Ավելին, երբ ատելության խոսքն օգտագործվել է կուսակցության կամ կազմակերպության անդամի կողմից ելույթներում կամ այլ վարքագծում, ի տարբերություն ավելի ֆորմալ քաղաքական փաստաթղթերի կամ ելույթների, անհրաժեշտ կլինի նաև հաստատել, որ դա արվել է կուսակցության կամ կազմակերպության անունից, և որ նրանք ներկայացրել են այն հստակ մոտեցումը, որին աջակցում և որը պաշտպանում է կուսակցությունը կամ կազմակերպությունը: Շատ հաճախ դա վերաբերում է կուսակցության կամ կազմակերպության ղեկավարների ելույթներին և հրապարակային վարքագծին:

ՀՀ կուսակցությունների մասին սահմանադրական օրենքը ատելության խոսքը սահմանում է բավականին նեղ: Եթե 4-րդ հոդվածի 2-րդ մասը կուսակցության գործունեության սկզբունքը սահմանում է իրավահավասարությունը՝ պաշտպանված հատկանիշների վկայակոչումով (սեռ, ռասա, ազգություն, քաղաքացիություն, և այլն), ապա 9-րդ հոդվածի 1-ին մասը կուսակցության գործունեության արգելքը սահմանափակում է բացառապես սահմանադրական կարգի բռնի տապալման կամ սահմանադրական կարգը տապալելու նպատակով բռնության կիրառման հիմքերով: **Առաջարկում ենք սույն հոդվածը համալրել ատելության խոսքի համապատասխան դրույթով, քանի որ ցանկացած կուսակցության գործունեություն անհամատեղելի է Սահմանադրության 77-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11 և 17-րդ հոդվածների երաշխիքների հետ, եթե կուսակցությունը քարոզում է թշնամություն, բռնություն, խտրականություն և անհանդուրժողականություն անձի կամ անձանց խմբի որևէ հատկանիշներով: Առաջարկում ենք ատելության խոսքի դրույթներ ավելացնել նաև նույն օրենքի 33-րդ հոդվածում:** Նման դրույթների ավելացումը հնարավորություն կտա համապատասխան վարչարարության կիրառմամբ լուծարել կամ արգելել կուսակցության գործունեությունը, ինչպես նաև վարչական պատասխանատվություն սահմանել կուսակցության նկատմամբ (որը գործող օրենսդրությամբ հնարավոր չէ ու այդ իմաստով անհրաժեշտ է նույնպես քննարկել Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու հնարավորության հարցը: Այս իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել, որ նոր քրեական օրենսգրքի նախագծով սահմանվում է քրեական պատասխանատվություն իրավաբանական անձանց նկատմամբ, որի հնարավորությունը բխում է 2016 թվականի սահմանադրական փոփոխություններով):

Ի հակադրումը կուսակցությունների մասին օրենքի, Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 32-րդ հոդվածը կազմակերպության գործունեության արգելքի հիմք է սահմանում, եթե կազմակերպությունը գործունեության ընթացքում իրականացրել է սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ ատելություն բորբոքելու կամ բռնություն կամ պատերազմ քարոզելու գործողություն: Թեև ատելություն բորբոքելու և բռնություն քարոզելու գործողությունները ատելության խոսքի տարրեր են, սակայն առանց պաշտպանված հատկանիշների համակցության դրանք չեն համապատասխանի ատելության խոսքի բովանդակությանը: Հետևաբար, **առաջարկում ենք 32-րդ հոդվածը լրացնել պաշտպանված հատկանիշների հիմքով թշնամանք, խտրականություն և անհանդուրժողականություն հրահրելու սահմանումներով**:

Նույնանման մոտեցում պետք է ցուցաբերվի նաև այլ տեսակի կազմակերպությունների մասին օրենքներում, եթե դրանցում սահմանված են կազմակերպությունների գործունեության արգելման նման հիմքեր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը համալրել հետևյալ դրույթներով.

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը ... :

2) վիրավորանքը՝ պայմանավորված սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի, ազգային փոքրամասնությանը պատկանելիության, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով, հանգեցնում է օրենքով սահմանված առավել խիստ պատասխանատվության:

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ զրպարտությունը ... :

3) զրպարտությունը՝ պայմանավորված սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, լեզվի, կրոնի, ազգային փոքրամասնությանը պատկանելիության, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով, հանգեցնում է օրենքով սահմանված առավել խիստ պատասխանատվության:

Համապատասխանաբար, 1087.1 հոդվածի 7-րդ և 8-րդ մասերում առաջարկում ենք ավելացնել հետևյալ դրույթները.

7. Վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

…

4) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել՝ սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կատարված արարքի համար:

7. Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

…

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել՝ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված արարքի կատարման համար:

- Տեսալսողական մեդիայի մասին օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկվում է սահմանել խտրականության համընդհանուր արգելքի սկզբունքը՝ ըստ Սահմանադրության 29-րդ հոդվածի:
  Երկրորդ, առաջարկում ենք այս դրույթում սահմանել տասը առավել լայնորեն տարածված և առավել լուրջ բնույթի խախտումների հանգեցնող պաշտպանված հատկանիշները, որոնք են ռասայի, ազգության, էթնիկ պատկանելիության, մաշկի գույնի, քաղաքացիության, սեռի, տարիքի, հաշմանդամության, լեզվի և գույքային դրության հատկանիշները:
  Երրորդ, առաջարկվում է նույն հոդվածում <<խտրականություն>> եզրի հետ ավելացնել նաև <<անհանդուրժողականություն>> եզրը:

- Զանգվածային լրատվության մասին օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում պետք է սահմանվեն ատելության խոսքի հատկանիշներ, երկրորդ, հոդվածի շրջանակը պետք է ընդլայնվի ու ներառի ոչ միայն քրեական, այլ նաև քաղաքացիական ու վարչական պատասխանատվության հանգեցնող նվազ լրջության ատելության խոսքի դրսևորումները:

- Առաջարկվում է Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում սահմանել ատելության խոսքի համար պատասխանատվության հիմքեր՝ հաշվի առնելով արարքի հասարակական բնույթը (վայրը, իրադարձությունը, բովանդակությունը, և այլն: Վարչական

իրավախախտումների մասին օրենսգրքում ատելության խոսքի սահմանումը առաջարկվում է ներառել Գլուխ 13-ում՝ <<Հասարակական կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ>> բաժնում:


- Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ կետը անհրաժեշտ է բարեփոխել ու <<հանրային շահի նկատառումներով>> եզրի ներքո ավելացնել ատելության խոսքի վերաբերյալ համապարփակ դրույթներ:

- Կուսակցությունների մասին սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը և 33-րդ հոդվածը համալրել ատելության խոսքի համապարփակ դրույթներով:

- Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 32-րդ հոդվածը լրացնել պաշտպանված հատկանիշների հիմքով թշնամանք, խտրականություն և անհանդուրժողականություն հրահրելու սահմանումներով:

ԲԱԺԻՆ 4. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ



Համացանցի մասնակի քարտեզը 2005 թվականի դրությամբ

Համացանցում ատելության խոսքի վերաբերյալ սույն հետազոտությունը արձանագրում է այն իրավական ուղիները, որոնց օգնությամբ կարելի է նախաձեռնել ատելության խոսքի կարգավորման գործընթացի վերաբերյալ բարեփոխումներ կարգավորման և ինքնակարգավորման տարբեր մեխանիզմներով՝ շեշտը դնելով վերջինի վրա: Այս ուղղությամբ է այսօր զարգանում միջազգային իրավունքը, ինչպես նաև ԵԽ Մասնակից Պետությունների ներպետական իրավունքում վերջին զարգացումները: Եթե ինտերնետի զարգացման նախնական փուլում՝ անցած դարի 90-ական թվականներին շեշտը դրվում էր կարգավորման վրա, իսկ երկրորդ փուլում, երբ

զարգացան սոցիալական ցանցերը և ինտերնետը, շեշտը դրվում էր ինքնակարգավորման վրա, ներկա զարգացումներում նախանշվում են ինքնակարգավորման ու կարգավորման մեխանիզմների զուգամիտման միտումեր՝ կոնտենտի հեռացման, արգելափակման ու ֆիլտրման առաջնահերթությունը թողնելով ինքնակարգավորման դերակատարներին ու մեխանիզմներին, իսկ կարգավորման (պետական) մեխանիզմներին նախանշելով թույլ վերահսկողության գործառույթներ՝ առանց կոնտենտի առաջնային միջամտության հնարավորության:

Այս իմաստով լավ օրինակ է Գերմանիայի **NetzDG օրենքը,** որով սահմանում է երկու տեսակի պարտականություններ, առաջինը՝ բողոքների քննության վերաբերյալ պետական մարմնին հաշվետվություն ներկայացնելու պարտականություն, երկրորդը՝ բողոքների քննության արդյունավետ եւ թափանցիկ ընթացակարգեր ապահովելու պարտականություն: Առաջինով պահանջվում է, որ սոցիալական ցանցերի օպերատորները, որոնք տարեկան ստանում են ատելության խոսքի ավելի քան 100 բողոք, կիսամյակային հաշվետվություններ ներկայացնեն այն մասին, թե ինչպես են իրենք քննել անօրինական կոնտենտի վերաբերյալ բողոքները: Օրենքում նախանշվում են 9 տարբեր մեթոդական պահանջներ, որոնք պետք է պարունակեն հաշվետվությունները, օրինակ՝ անօրինական նյութի վերաբերյալ բողոքներ ներկայացնելու մեխանիզմների նկարագրություն, կոնտենտը հեռացնելու կամ արգելափակելու որոշման չափորոշիչներ, նյութի հեռացման կամ արգելափակման հանգեցնող բողոքների քանակը, և այլ պարամետրեր: Երկրորդով պահանջվում է ներկայացնել բողոքները քննելու և կոնտենտը հեռացնելու մեխանիզմների թափանցիկությունը և արդյունավետությունը: Այսպիսով, միայն ինտերնետ ծառայություն մատուցող մասնավոր ընկերություններն են իրավասու ընդունել ու քննել բողոքներ, և կայացնել կոնտենտը հեռացնելու կամ արգելափակելու մասին որոշումներ, իսկ պետական իրավասու մարմինը հաշվետվությունների հիման վրա ստուգում են, թե արդյոք այդ ընթացակարգերը արդյունավետ են: Սա կարգավորման ու ինքնակարգավորման համակարգի լավ օրինակ է, քանի որ դա չի ազդում ամենակարևորի՝ ինֆորմացիայի ազատ հոսքի վրա, իսկ թիրախում բացառապես ատելության խոսքն է:

Այս ուսումնասիրության նպատակն է պարզել արդյո՞ք առկա են մեխանիզմներ ատելության խոսքի կարգավորման համար, եթե ոչ՝ այդ նպատակով ինչը՞ պետք փոխել կամ բարելավել, իսկ եթե այո՝ արդյո՞ք դրանք արդյունավետորեն են գործում:

Հետազոտության առաջին մասում հետազոտել ենք պետության կողմից նախկինում ընդունված տեղեկատվության անվտանգության վերաբերյալ մշակված հայեցակարգերը, դրանց հիման վրա ստեղծված կառուցակարգերը, կատարված քայլերը և դրանց արդյունքները:

Այնուհետև արձանագրել ենք ոլորտի դերակատարներին, նրանց իրավասությունները և գործառույթները: Հետազոտության ամփոփման մեջ ներկայացրել ենք գործնական առաջարկություններ ատելության խոսքը համացանցում կարգավորելու ուղղությամբ:

1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1.1. ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

Հայաստանում տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների և սկզբունքների վերաբերյալ ընդունվել են մի շարք պաշտոնական հայեցակարգեր: Հանրապետության նախագահի կողմից դեռևս 2009 թվականին ընդունված «Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրությամբ [20] հաստատվել է տեղեկատվական անվտանգության հայեցակարգը: Կառավարությունը հիշյալ որոշմամբ պարտավորվել է ապահովել հայեցակարգով նախատեսված ծրագրերի մշակումը և հաստատումը:

Որպես հայեցակարգի առաջին բաղադրիչ ներառվել է տեղեկատվության ստացման և օգտագործման ոլորտում **մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը**, որի նպատակով պետությունը նպատակադրվել է **կանխարգելել սոցիալական, ռասայական, ազգային կամ կրոնական ատելությանը նպաստող քարոզչական գործունեությունը**: Անդրադարձ է կատարվել սպառնալիքներին, մասնավորապես՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին ուղղված սպառնալիք է նշվել զանգվածային տեղեկատվության ոլորտում անհատի և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումը: Անհրաժեշտ ենք համարում նշելը, որ այս առաջին հայեցակարգի ընդունումը հաջորդեց 2008 թվականի մարտի 1-ի դեպքերից հետո ստեղծված քաղաքական ու հասարակական ճգնաժամին, երբ 20 օրով սահմանվեց արտակարգ իրավիճակ մայրաքաղաք Երևանում, որի ժամանակ իշխանությունների կողմից առաջին անգամ տեղի ունեցավ աննախադեպ ծավալով ու բնույթով միջամտություն տեղեկատվական տեխնոլոգիաների ու հարթակների գործունեությանը, և նոր իշխանությունները խնդիր դրեցին բարձրացնել իրենց նկատմամբ հանրային վստահությունը: Այս իմաստով զարմանալի չէ, որ առաջին

[20] «Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ նախագահի կարգադրություն, ընդունված 2009թ. հունիսի 26-ին, թիվ ՆԿ-97-Ն հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=52559.

քայլը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն էր:

Հաջորդ հայեցակարգը ընդունվել է Հանրապետության նախագահի կողմից 2017 թվականին [21] «Տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգի» մասին փաստաթղթով: Փաստաթղթի 21-րդ կետում սահմանվել է տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրները, որոնցից են նաև **սոցիալական, ռասայական, ազգային և կրոնական ատելության հրահրմանը** նպաստող քարոզչական գործունեության կանխարգելումը և հակազդումը: Հայեցակարգային այս ձևակերպումը, անկասկած, ներառում է ատելության խոսքի միջազգային կարգավորման կարևոր ելակետային հիմքերը ՝ ռասայի, ազգության կրոնի հիմքով ատելության հրահրումը:

Կառավարության կողմից 2014թ. օգոստոսի 14-ին ընդունվել է արձանագրություն՝ «Ինտերնետ կառավարման սկզբունքներին հավանություն տալու մասին»[22], որում Կառավարությունը ինտերնետ կառավարման ոլորտում նախանշել է թվով 17 սկզբունքներ: Նախանշված սկզբունքներից 5-րդը վերաբերում է ինտերնետում մարդու իրավունքների պաշտպանության սատարմանը, որն իր մեջ ներառում է երեք մոտեցման նկարագրեր.

1) Ինտերնետում կարծիքների ազատ արտահայտման իրավունքի, ինչպես նաև միավորումներ ստեղծելու իրավունքների ապահովում՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների, միջազգային համաձայնագրերի և կոնվենցիաների վրա:
2) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցչի ներգրավում՝ Ինտերնետ կառավարման աշխատանքներում,
3) Ինտերնետում պետություն-հանրություն համագործակցության սատարում՝ ուղղված ազգամիջյան գժտություն սերմանելու, սահմանադրական կարգի տապալմանը ուղղված հանրային կոչեր, պոռնկագրության, ահաբեկչության և թրաֆիկինգի քարոզման բացառմանը:

Կառավարությունը հայկական ինտերնետ միջավայրի անվտանգության ապահովման աջակցությունը նույնպես դիտարկել է որպես ինտերնետ կառավարման սկզբունք, որի նկարագրերի համաձայն սահմանվել է Էլեկտրոնային հաղորդակցության ենթակառուցվածքների տնօրինողների, ծառայություններ

[21] «Տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգ», ընդունված՝ 2017թ. հոկտեմբերի 23 թիվ ՆԿ-146-Ա, հասանելի է՝ https://bit.ly/35WncYD

[22] «Ինտերնետ կառավարման սկզբունքներին հավանություն տալու մասին» Կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի թիվ 34 արձանագրությունը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=92456

մատուցողների, տվյալների շտեմարանների տնօրինողների մասնագիտական կարողությունների բարձրացման աջակցություն, որը նպատակ ունի նաև պետական-մասնավոր հատվածի համագործակցությամբ միջոցներ ձեռնարկել կանխելու **ահաբեկչությունը, սահմանադրական կարգի տապալմանն ուղղված հանրային կոչերը, պոռնկագրությունը, թրաֆիքինգը, ազգամիջյան գժտության քարոզումը,** ինչպես նաև ՍՊԱՄ-ի (SPAM) (անանուն, չպահանջված զանգվածային էլեկտրոնային հաղորդակցություն), խարդախության նպատակներ հետապնդող էլեկտրոնային հաղորդագրությունների և վնասաբեր ծրագրերի տարածումը հայկական դոմենային տիրույթում:

Վերոգրյալ հայեցակարգերում և արձանագրությունում ատելության խոսքի ձևակերպումները ամբողջական չեն և չեն ընդգրկում դրա իրական շրջանակները, դրանք իրավական նորմատիվ փաստաթղթեր չեն, այլ՝ հայեցակարգեր ու այդ իմաստով հիշյալ սահմանումները կարող էին դառնալ ելակետային համացանցում ատելության խոսքի կարգավորման համար:

Պետությունը ինտերնետ կառավարման սկզբունքների արձանագրմանը զուգահեռ որոշել էր դրա իրագործման քաղաքականությունը և հանձն է առել ներգրավել հասարակության լայն զանգվածներին՝ ինտերնետ կառավարման գործընթացում: Պետությունը նպատակադրվել էր նաև ձևավորել և զարգացնել որոշումից բխող քաղաքականության արդյունավետ իրականացումը ապահովող ենթակառուցվածքներ:

Այսպիսով, վերը նշվածը ցույց է տալիս, որ առնվազն 2009 թվականից պետական մարմինները ինտերնետ կառավարման բնագավառում նախաձեռնել են հայեցակարգեր մշակելու ու ներդնելու հետևողական գործընթացներ, ու մարդու իրավունքների պաշտպանությունը ու, հատկապես, ատելության խոսքի կարգավորումը այդ հայեցակարգերում կարևոր նշանակություն են ձեռք բերել:

1.2. ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ (ԻՀԿ) և ՆՐԱ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ

Ինտերնետ կառավարման գործառույթները կանոնակարգելու նպատակով ստեղծվել է «**ՀՀ Ինտերնետ կառավարման համաժողով»** միջգերատեսչական խումբը (ստորև՝ ԻԿՀ)[23]: ԻԿՀ-ի կազմը հաստատվել է Վարչապետի որոշման հիման վրա[24]:

[23] Ինտերնետ կառավարման համաժողով, ինտերներնետային կայք՝ https://igf.am/

[24] ՀՀ ինտերնետ կառավարման համաժողով միջգերատեսչական խմբի կազմը հաստատելու մասին Վարչապետի որոշում՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=78756.

ԻԿՀ-ն ունի թվով 9 գործառնություններ, դրանք են.

1) *Կազմակերպել քննարկումներ՝ Միջազգային Ինտերնետ Կառավարման Համաժողովի վերապահված գործառույթների, ինտերնետ կառավարման սկզբունքների և ինտերնետի զարգացման հետևանքով ստեղծվող նոր մարտահրավերների շրջանակներում: Քննարկումների արդյունքում առաջացած մոտեցումների ձևավորում՝ կառավարության որոշումների նախագծերի ներգրավում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատանքային ծրագրերում, հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով, առաջարկել այլ իրավական ակտերի նախագծեր:*
2) *Միջազգային Ինտերնետ Համաժողովի քարտուղարության հետ համագործակցություն՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության ԻԿՀ արդիական մոտեցումները, կազմակերպել քննարկումներ այդ մոտեցումների տեղայնացման և դրանց ողջամիտ կիրառման համար ներկայացնել առաջարկություններ՝ իրավական ակտեր մշակելու կամ դրանցում փոփոխություններ կատարելու համար:*
3) *Կազմակերպել Ինտերնետին վերաբերող այլ միջազգային և միջպետական մարմինների կողմից առաջարկվող մոտեցումների շուրջ հանրային քննարկումներ՝ ձևավորելով առաջարկություններ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումների վերաբերյալ, ներկայացնել այդ որոշումները այն միջազգային կամ տարածաշրջանային մարմիններում, որտեղ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը հանդիսանում է մասնակից:*
4) *Այլ միջազգային կամ տարածքային միավորումներում քննարկվող հարցերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացնել Հայաստանի Հանրապետության ԻԿՀ դիտողությունները և առաջարկությունները:*
5) *Աջակցել Հայաստանի Հանրապետության ԻԿՀ-ի կողմից առաջարկվող ներկայացուցիչների մասնակցությունը Միջազգային Ինտերնետ Կառավարման Համաժողովում՝ ապահովելով հասարակական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների կողմից համաձայնեցված, ներկայացման համար պարտադիր, պետական քաղաքականությունից բխող ուղեցույցներով:*
6) *Աջակցել համաշխարհային առաջատար փորձի փոխանակման, ակադեմիական, գիտական և տեխնիկական ուղղվածություն ունեցող*

կենտրոնների ներկայացուցիչների կողմից այդ լավագույն փորձի ներդրմանը:

7) *Տրամադրել խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության բոլոր գերատեսչություններին արտերկրներում Ինտերնետի վերաբերյալ առկա զարգացումների և հիմնական զարգացման ուղղությունների վերաբերյալ:*

8) *Ինտերնետի զարգացման հետ համընթաց նոր ծագող հարցերի մասին հրապարակային տեղեկատվության տրամադրում Հայաստանի Հանրապետության հանրությանը:*

9) *Աջակցել Հայաստանի Հանրապետությունում Ինտերնետի օգտագործման կառավարման համար մարդկային պոտենցիալի ստեղծմանը՝ օգտագործելով դրա համար տեղական մասնագիտական ներուժը:*

Վերոգրյալ հայեցակարգի և դրա հիման վրա ստեղծված միջգերատեսչական խմբի գործառույթների արժեքային ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն բավականին հավակնոտ ծրագիր է և դրա իրագործման շարժիչը կարելի է համարել ԻԿՀ-ն: Փաստացի, հիշյալ կարգավորումներով, ԻԿՀ-ն Հայաստանի համացանցի տիրույթում ստանձնել է ինտերնետ կառավարման քաղաքականություն «մշակողի» դերակատարումը (policymaker): Դա իրենից ենթադրում է նաև մեծ պատասխանատվություն, քանի որ պետության կողմից որոշակի պարտավորություններ պետք է իրագործվեն հենց այդ մարմնի կողմից տրված առաջարկությունների հիման վրա: Միևնույն ժամանակ նկատենք, որ ԻԿՀ-ն իրավաբանական անձ չէ, նորմատիվ ակտեր չի ընդունում ու նրա որոշումները խորհրդատվական բնույթ ունեն:

ԻԿՀ-ի դերակատարումը նաև արժևորվում է իր բավականին հագեցած կազմով, որը բաղկացած է 21 անձից[25] : Մասնավորապես՝ կազմում ներգրավված են պետական և մասնավոր հատվածի տարբեր ներկայացուցիչներ, որոնց գործունեությունը առնչվում է ատելության խոսքի հարուցմանը կամ կանխարգելմանը: ԻԿՀ-ի կազմի մեջ են Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանությունը, Ազգային ժողովի պատգամավորներ, «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը, այլ ՊՈԱԿ-ներ, Հանրային ծառայությունները կարգավորող

[25] ԻԿՀ խմբի կազմը հաստատելու մասին վարչապետի որոշում, ընդունված 2014թ. դեկտեմբերի 29-ին թիվ 1304-Ն որոշմամբ, հասանելի է՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=78756.

հանձնաժողովը, «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ն, օպերատորներ և քաղաքացիական հասարակության անդամներ:

ԻԿՀ-ն իր գործառույթները իրագործում է միջգերատեսչական խմբի կողմից ընդունված աշխատակարգի [26] միջոցով, որտեղ արտացոլվել է նաև ԻԿՀ-ի քարտուղարության իրավասությունները, որը իր գործունեությունը, ըստ էության, չի իրականացնում մշտական հիմունքներով (ad hoc):

Քարտուղարության, գործառույթներն են.

- *Հայաստանի ինտերնետ կառավարմանն առնչվող խնդիրների լուծման հարցերի վերաբերյալ առաջարկությունների ընդունում և այն ԻԿՀ-ին ներկայացում.*
- *Ապահովում է ԻԿՀ-ի գործունեության և արդյունքների վերաբերյալ հրապարակային տեղեկատվության հրապարակումը ԻԿՀ-ի պաշտոնական կայքում.*
- *Տրամադրում է տեղեկություններ պետական նշանակության ծրագրային միջոցառումների, կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին.*
- *Կազմում է որոշման նախագծեր.*
- *Որոշումների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում նախարարություն.*
- *և այլն գործառույթներ.*

ԻԿՀ-ի քարտուղարությունը իրականացնում է «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ն[27], ով նաև հանդիսանում է «.am» և «.հայ» վերին մակարդակի դոմենային անունների տիրույթների կառավարիչը:


Ուսումնասիրելով ԻԿՀ-ի գործունեությունը, նպատակ ենք հետապնդել պարզելու արդյո՞ք գործնականորեն իրականացվում է Կառավարության հայեցակարգը. մասնավորապես՝ պետական-մասնավոր հատվածի համագործակցությամբ միջոցների ձեռնարկումը **ահաբեկչությունը կանխելու, սահմանադրական կարգի տապալմանն ուղղված հանրային կոչերը, ազգամիջյան գժտության քարոզման նպատակներ հետապնդող կոնտենտի տարածումը** հայկական դոմենային տիրույթում:

[26] ԻԿՀ-ի աշխատակարգ, ընդունված՝ 2015թ. փետրվարի 24-ին, հասանելի է՝ http://igf.am/wp-content/uploads/2015/03/ashxatakargWeb_AM.pdf

[27] «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի պաշտոնական կայք՝ https://www.isoc.am/.

Այս գործառույթները կարևոր են մեր ծրագրի նպատակներից ելնելով, քանի որ դրանցից յուրաքանչյուրի թիրախային ոլորտը կարող է բովանդակել ատելության խոսք կամ հանդիսանալ ատելության խոսքի տարածման կրիչներ ինտերնետ տիրույթում։[28] Այսպիսով, ելնելով մեր ծրագրային նպատակներից, ցանկացել ենք պարզել արդյո՞ք պետությունը ապահովել է հիշյալ նպատակների իրագործումը, ձևավորել և զարգացրել է հայեցակարգից բխող քաղաքականության արդյունավետ իրականացումն ապահովող ենթակառուցվածքներ ատելության խոսքի դեմ պայքարի շրջանակներում։

Ուսումնասիրելով միջգերատեսչական խմբի 2015 թվականից մինչև 2020 թվականի գործունեությունը, պարզ է դառնում հետևյալը[29].



Վերոգրյալից երևում է, որ գերատեսչական խումբը իր աշխատանքները իրականացրել է նկատելի ոչ ակտիվ եղանակով, մասնավորապես, ընդհանուր առմամբ տեղի են ունեցել թվով 7 նիստեր, իսկ 2017, 2018 և 2020 թվականներին, ատելության խոսքի ծավալների աճմանը զուգընթաց, ընդհանրապես նիստեր տեղի չեն ունեցել։

[28] Բավական է միայն հիշել 2016-2020 թվականների ընթացքում սահմանադրական կարգի տապալման, իրենց բնույթով ահաբեկչական ակտեր հիշեցնող դեպքերի ծավալմանը զուգահեռ համացանցի տիրույթում ատելության խոսքի տարածման արագությունը և մասնաշտաբները, որոնք ցնցում էին ողջ հանրությունը, հանգեցնում քաղաքական ծանր հետևանքների, մարդու իրավունքների ծավալուն խախտումների։ Ի դեմ, մասնագետները բազմիցս նշել են, որ այդ իրադարձությունները ՀՀ-ում ատելության խոսքի համակարգված տարածման առաջին դեպքերն էին.

[29] Տեղեկատվությունը ստացվել է հետևյալ հղումներից https://igf.am/2015year/, ՝ https://igf.am/2016year/, https://igf.am/2019year/.

Հատկանշական է նաև տեղի ունեցած նիստերի բովանդակային արդյունքները: Հիմնականում նիստերը հրավիրվել են առցանց շահումով խաղերի, ցանցային էթիկետի դրույթների, համաշխարհային ֆորումին մասնակցելու և «Youtube partner program»-ին Հայաստանը մասնակից դարձնելու հարցերը քննարկելու նպատակով:

Սակայն անհրաժեշտ է կարևորել ԻԿՀ-ի իրականացրած որոշակի քայլեր, որոնք կարող են անուղղակիորեն նպաստել վերոգրյալ նպատակի իրականացմանը, մասնավորապես՝ ցանցային էթիկետի դրույթների սահմանման և «ArmIGF» ինտերնետ կառավարման համաժողովում ներկայացված թեմանները, հատկապես 31-րդ թեման՝ մարդու իրավունքները:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ԻԿՀ-ի կողմից իրականացվել են քննարկումներ և առաջադրվել են ուսումնասիրություններ իրականացնելու նպատակներ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը կիբերհանցագործությունների դեմ, կոնվենցիայով սահմանված ապօրինի բովանդակություն տարածող .am դոմենային անունների արգելափակման մեխանիզմների, ինչպես նաև ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ՀՀ օրենսդրությամբ արգելված կայքերի և ինտերնետ ռեսուրսների գործունեությունը ՀՀ տարածքում արգելափակելու հնարավորությունները[30]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հավանական է, որ ԻԿՀ-ի գործունեության շատ ասպեկտներ հասանելի չեն, մեր կողմից կատարվել են փորձեր ԻԿՀ-ի քարտուղարության հետ կապ հաստատելու համար, մասնավորապես հեռախոսազանգի, էլեկտրոնային նամակի միջոցով, սակայն այդ մարմնի հետ կապ հաստատել չհաջողվեց: Դա կարող է վկայել այն մասին, որ ԻԿՀ-ն մշտական հիմունքով գործող մարմին չէ:

Վերոգրյալ տեղեկատվության վերլուծության արդյունքում, պարզ է դառնում, որ Կառավարության կողմից սահմանված նպատակների իրագործման համար լիազորված **միջգերատեսչական խմբի կողմից 2015-2020 թվականներին հագեցած միջոցներ չեն ձեռնարկվել Կառավարության կողմից հաստատված «Ինտերնետ կառավարման սկզբունքներին հավանություն տալու մասին» արձանագրության մեջ արտացոլված բոլոր նպատակներին հասնելու համար**, մասնավորապես՝

[30] ԻԿՀ-ի կազմված արձանագրությունը՝ 2015թ. մարտի 18-ի թիվ 2015/2, հասանելի է՝ http://igf.am/wp-content/uploads/2015/03/IGC_Minutes_N2_18032015_AM.pdf.

ահաբեկչությունը կանխելու, սահմանադրական կարգի տապալմանն ուղղված հանրային կոչերը, ազգամիջյան գժտության քարոզումը բացառելու նպատակի շուրջ օրենսդրական առաջարկություն չի եղել, դրա վերաբերյալ գործիքակազմեր չեն մշակվել: Փաստորեն, ծրագրային նպատակների մաս կազմող ատելության խոսքի կամ, ընդհանրապես, ատելության կոնտենտի ուղղությամբ գործունեություն չի ծավալվել, իսկ եթե ծավալվել է, այդ մասին տեղեկատվություն չի տրամադրվել լայն հանրությանը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ թեկուզև ԻԿՀ-ն ստեղծվել է Կառավարության որոշման հիման վրա և ունի որոշակի իրավական հիմքեր, բայցևայնպես, այն չի հանդիսանում իրավաբանական անձ, չունի սուբյեկտի կարգավիճակ, չի գործում մշտական հիմունքներով, ուստի առկա է որոշակի իրավական խոչընդոտներ այդ խմբի կողմից իրենց գործառությունները ավելի ամբողջական իրականացնելու համար: **ԻԿՀ-ի աշխատանքները կարող են իրականացվել ավելի լայն ֆորմատով, եթե ապահովվի այդ խմբի ոչ միայն իրավաբանական անձի կարգավիճակի հարցը, այլև քննվի ֆինանսական ապահովվածության և գործառույթների օրենսդրորեն ամրագրման հարցը**:

Վերոգրյալի հիման վրա եզրակացնում ենք, որ Հանրապետության նախագահի կողմից ընդունվել են «Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» և «Տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության» հայեցակարգերը, իսկ Կառավարության կողմից ընդունվել է «Ինտերնետ կառավարման սկզբունքներին հավանություն տալու մասին» արձանագրությունը, որոնցում պետության կողմից, ըստ էության, սահմանվել է համացանցում ատելության խոսքի կարգավորմաննն ուղղված սկզբունքներ և նպատակներ: Այդ սկզբունքների և նպատակների իրագործման նպատակով պետության կողմից պատվիրակված լիազորություններ ունեցող մարմինը իր գործառույթները իրականացնում է նկատելի պասիվությամբ, և չեն ձեռնարկվել արդյունավետ միջոցներ համացանցի հայկական տիրույթում ատելության խոսքի կարգավորման ուղղությամբ: Մինչդեռ մենք գտնում ենք, որ ԻԿՀ-ն կարող է ունենալ ակտիվ և որոշիչ դերակատարում համացանցի տիրույթում ատելության խոսքի դեմ պայքարում:

2. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Այս բաժնում ներկայացնում ենք ինտերնետ տիրույթի իրավական կարգավորումները, իրավական կառուցակարգերը և կառուցվածքը, ոլորտում առկա փաստացի իրավիճակը, հեռահաղորդակցության հասանելիության կառուցվածքը և այլ անհրաժեշտ տվյալներ: Այս բաժնի ուսումնասիրության նպատակն է պարզելը, թե ինտերնետ տիրույթում ատելության խոսքի կարգավորման ի՞նչ դերակատարներ կան և ինչպես է <<տեղաշարժվում>> ատելության խոսքը Հայաստանի կիբեր տարածքում:

2.1. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ և ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտի վերաբերյալ կարգավորումները հիմնականում սահմանված են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով [31], որի նպատակներից է նաև էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ օգտագործողների, օպերատորների և ծառայություններ մատուցողների շահերի պաշտպանությունը:

Պետական վերահսկողությունը էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում իրականացվում է գործադիր իշխանության երկու մարմինների՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի [32] և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջոցով [33] : Ընդ որում, օրենքով տարանջատված են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ որպես կարգավորողի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ որպես իրավասու մարմնի, գործառույթները և իրավասությունները[34]: Պետական մարմինների իրավասությունների տարանջատման նպատակով ներկայացնում ենք ներքոգրյալ աղյուսակը, որտեղ երևում են հիմնական իրավասությունները և գործառույթները.

Իրավասու մարմին	Կարգավորող մարմին
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	**Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**

[31] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենք, ընդունված 2005 թվականի հուլիսի 8-ին, հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=140773.

[32] Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայք, հասանելի է՝ http://www.psrc.am/pages/topic/26

[33] Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պաշտոնական կայք, հասանելի է՝ https://hti.am/.

[34] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներ.

Ներկայացնում է Հայաստանը միջազգային կազմակերպություններում. Նպաստում է հանրային և ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը:	Ապահովում է ոլորտում մրցակցությունը. Կարգավորում է ցանցերը և ծառայությունները. Տրամադրում է լիցենզիաներ. Կայացնում է որոշումներ, հրամաններ, ընդունում է կարգեր:

Աղյուսակից բխում է, որ նախարարությունը մշակում և իրականացնում ոլորտի քաղաքականությունը, իսկ հանձնաժողովը ապահովում է ոլորտի մրցունակությունը և օրենքներով նախատեսված պահանջների կատարումը լիցենզավորված անձանց կողմից:

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում առկա մասնավոր ոլորտի մասնակիցներ են հանդիսանում ցանցային **օպերատորները** և հանրային էլեկտրոնային հաղորդակցության **ծառայություններ մատուցողները**: Հիշատակված մասնակիցներին փոխկապակցող հանգամանքը կամ ընդհանուր օգտագործման տարածքը էլեկտրոնային հաղորդակցության ցանցն է. մասնավորապես՝ օպերատորները իրավասու են տիրապետել և շահագործել ցանցը, իսկ ծառայություններ մատուցողները առաջարկում են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ ցանցում, ինտերնետ հասանելիության ծառայության մատուցում (Internet service providers (ISP)): Ընդ որում, այն օպերատորները, որոնք իրենց ցանցով նաև մատուցում են ծառայություններ, դասակարգվում են որպես ծառայություններ մատուցողներ՝ այդպիսով ստանձնելով երկակի դերակատարում:

Հատկանշական է նաև «հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց» և «հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն» իրավական տերմինների իրավական բովանդակությունը:

«Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց՝ էլեկտրոնային *հաղորդակցության ցանց, որն ամբողջովին կամ հիմնականում օգտագործվում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու համար»:*

«հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն՝ *էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն, որն առաջարկվում է հանրությանը կամ վերջնական օգտագործողների այնպիսի խմբակարգերի, որոնց շնորհիվ այն, ըստ էության, ուղղակիորեն հասանելի է դառնում հանրությանը»:*

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի *տիրապետման* և *շահագործման* համար անհրաժեշտ է ունենալ լիցենզիա: Որևէ անձ իրավասու չէ տրամադրել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ առանց ցանցի լիցենզիայի կամ օրենքով նախատեսված դեպքում ծանուցում իրականացնելու [35]: Այսպիսով, **և՛ ցանցի շահագործման, և՛ ցանցի միջոցով ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ է ունենալ լիցենզիա:** Այս երկու ծառայությունները պետական կարգավորման օբյեկտներ են:

Ցանցի լիցենզիա տրամադրելու կարգը սահմանում է կարգավորողը իր որոշմամբ [36], որում սահմանվում է լիցենզիա ստանալու հայտի ընդունման, քննարկման, լիցենզիայի տրամադրման (մերժման), դրա գործողության ժամկետի երկարաձգման, կասեցման, դադարեցման և լիցենզիայում փոփոխությունների կատարման ընթացակարգը: Ընդ որում, օրենքով [37] սահմանվել են այն պայմանները, որոնք ելակետային պետք է լինեն Հանձնաժողովի կողմից այդպիսի կարգ սահմանելու համար: Այդպիսի հանգամանքներ են հանդիսանում նաև՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերից և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից վերջնական օգտագործողների **շահերի պաշտպանությունը** և **հանրային շահի, ազգային անվտանգության շահերի** պաշտպանության երաշխավորումը: Այս երկու ոլորտները համընկնում են ատելության խոսքի կարգավորման իրավաչափ նպատակների հետ: Այլ կերպ ասած՝ Օրենսդրի կողմից կարգավորողին լիցենզավորելու կարգը հաստատելու լիազորության տրամադրմանը զուգահեռ նշվել են այն չափորոշիչները, որոնցով այդ կարգը պետք է սահմանվի, կիրառվի և մեկնաբանվի: Այդպիսի չափորոշիչներ են՝ **վերջնական օգտագործողների, ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը և հանրային շահը հաշվի առնելը:** Դրանք և՛ մասնավոր և հանրային շահեր են , որոնք անկասկած ընդգրկում են ատելության խոսքից պաշտպանված լինելու իրավունքը և շահը:

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնել ցանկացող անձ նաև պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ իր կողմից լիցենզիա տրամադրելու մասին հայտը չի կարող ընդունվել ուսումնասիրության և կարող է լիցենզիայի տրամադրումը մերժվել, եթե

---

[35] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մաս.

[36] «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման կարգը հաստատելու և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ, ընդունված 2013թ. հուլիսի 31-ին, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119764

[37] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մաս.

լիցենզիայի տրամադրումը հակասում է **հանրային և ազգային անվտանգության շահերին**[38]:

Վերոգրյալը արտացոլված է Սահմանադրության 77-րդ հոդվածով սահմանված երաշխիքում, որի համաձայն՝ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Այսպիսով, կարգավորողը իրավասու է լիցենզիա տրամադրումը մերժել, եթե առկա են հստակ փաստեր, որ լիցենզավորման ենթակա գործունեությունը կարող է հետագայում օգտագործվել այնպես, որ դրանով իրականացվի սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այլ կերպ ասած, եթե լիցենզիան տեղեկություններ ու գաղափարներ տարածելու մեդիում է, որի միջոցով լիցենզառուն իրականացնում է տեղեկություններ ու գաղափարների տարածելու իր իրավունքը, Սահմանադրության 77-րդ հոդվածի երաշխիքի համաձայն այդ իրավունքը չի կարող իրականացվել ատելության կոնտենտ տարածելու համար: Նույնը վերաբերում է նաև գործող լիցենզիայի կասեցմանը կամ չեղարկմանը:

2.2. ԿԱՐԳԱՎՈՐՈՂԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Կարգավորողի (Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով) կողմից ոլորտում հանրային շահերի պաշտպանությունը չի սահմանափակվում լիցենզավորման դիմումների ընդունմամբ կամ մերժմամբ, Կարգավորող իրավասու է կասեցնել կամ ընդհուպ դադարեցնել լիցենզիաները, եթե արդեն իսկ լիցենզիա ստացած օպերատորները կամ ծառայություններ մատուցողները իրենց գործունեության ընթացքում խախտել են օրենքը կամ դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերը և կանոնները: Կարգավորողը ունի օրենսդրական բավարար իրավական իրավասություններ կասեցնել կամ դադարեցնել լիցենզիան, եթե դա անհրաժեշտ է հանրային շահի նկատառումներից ելնելով[39]:

Ուսումնասիրելով կարգավորողի կողմից լիցենզավորված անձանց գործունեության նկատմամբ վերահսկողության շրջանակները և իրավասությունները, պարզ է դառնում, որ առկա են հետևյալ գործիքակազմերը.

[38] Կարգավորողի 2013թ. հուլիսի 31-ին ընդունված թիվ թիվ 272-Ն որոշման 20-րդ և 24-րդ կետեր.

[39] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդված և «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդված.

- *Բողոքների քննությունը* [40]

Լիցենզավորված անձի գործողությունների արդյունքում բողոք ունեցող անձը իրավունք ունի դիմել Կարգավորողին: Վերջինս բողոքը ստանալով այն փոխանցում է ենթադրյալ խախտում թույլ տված օպերատորին կամ ծառայություն մատուցողին: Վերջիններս պարտավոր են գրավոր պատասխանել բողոքին Կարգավորողի կողմից սահմանված ժամկետում: Լիցենզավորված անձի կողմից պատշաճ պատասխանի բացակայության պայմաններում կամ այն դեպքերում, երբ ընդհանրապես պատասխան չի տրվում, Կարգավորողը իրավասու է իրականացնել ուսումնասիրություն բողոքի առարկա հանգամանքները պարզելու նպատակով իր կողմից պատշաճ համարվող ձևով և միջոցներով:

Սակայն օրենքով կարգավորված չեն այն հարցերը, որոնք վերաբերում են վերը հիշատակված ուսումնասիրության իրավական բովանդակությունը, պարզ չէ դա իրենից ներկայացնում է վարչարարություն թե ոչ, արդյո՞ք ուսումնասիրության արդյունքներով Կարգավորողը իրավասու է կայացնել որոշումներ: Թեկուզև օրենքով [41] սահմանված է կարգավորողի կողմից ուսումնասիրություն իրականացնելու լիազորություն, սակայն օրենքում առկա չեն դրա իրականացման բավարար կարգավորումներ:

- *Դադարեցման կարգադրություն արձակելը*

Կարգավորողը իրավասու է կայացնել լիցենզավորված անձի գործողությունը/ները դադարեցնելու կարգադրություն, որը կայացվում է այդ անձին ծանուցելու և լսումներ իրականացնելուց հետո: Կարգավորողի կողմից գործողության դադարեցման կարգադրությունը արձակվում է խիստ սահամանափակ դեպքերում[42] , առկա չեն այն դեպքերը, երբ գործողությունը դադարեցնելը պայմանավորված է հանրային շահով.

Այն դեպքում, երբ դադարեցման կարգադրությունը իրականացնելը չի իրականացվում վարչական կարգով, Կարգավորողը իրավասու է դիմել

[40] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 59-րդ հոդված.

[41] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթակետ.

[42] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դադարեցման կարգադրություն արձակվում է եթե անձը շահագործում է չլիցենզավորված ցանց, մատուցում է չծանուցված ծառայություններ կամ առանց թույլտվության օգտագործում է ռադիոհաճախականություններ.

Վարչական դատարան դատական կարգով կարգադրության կատարումն ապահովելու համար[43]:

- *Տույժերը և տուգանքները*[44]

Կարգավորողը իրավասու է ծանուցելուց և լսումներ իրականացնելուց հետո լիցենզավորված անձին կարգադրել, որպեսզի վերջինս վճարի տույժ, եթե առկա է փաստեր այն մասին, որ լիցենզավորված անձը չի կատարել օրենքի որևէ դրույթ: Կարգավորողը իրավասու է նաև կայացնել լիցենզիան կասեցնելու որոշում, ինչպես նաև դիմել Վարչական դատարան լիցենզիան դադարեցնելու հայցով:

Ի տարբերություն լիցենզիայի կասեցման դեպքերի, երբ Կարգավորողի կողմից դա կատարվում է վարչական ակտով, լիցենզիայի դադարեցումը պետք է իրականացվի դատական կարգով՝ Կարգավորողի կողմից Վարչական դատարան հայց ներկայացնելու միջոցով, որի հիման վրա Դատարանները քննում են ներկայացված հայցը և հիմնավոր լինելու դեպքում դադարեցնում են օպերատորի կամ ծառայություն մատուցողի լիցենզիաները:

Սակայն, գործնականում, կարող են առաջանալ իրավական խնդիրներ այն ժամանակ, երբ Կարգավորողի կողմից պետք է իրականացվեն հանրային շահերից բխող հապճեպ, հրատապ գործողություններ, մասնավորապես՝ երբ լիցենզավորված անձի կողմից իրականացվող գործունեության ընթացքում հայտնաբերվում է, որ **վերջինիս կողմից տարածվում է ատելության խոսք և քրեորեն պատժելի այլ կոչեր**: Ուստի Կարգավորողին անհրաժեշտ են արագ կիրառման ենթակա գործիքակազմ:

Կարգավորող մարմնի կողմից հանրային շահերից բխող լիազորությունների իրականացման ժամանակ ընդունված որոշումները և կարգադրագրերը պետք է կատարվեն անհապաղ, հակառակ պարագայում կիմաստազրկվի գործիքակազմի կիրառությունը: Մասնավորապես՝ դատավարական օրենսգրքով վարչական մարմինների վարչական ակտերը վիճարկելիս դրանց կատարումը կասեցվում է[45], այսինքն՝ չի կատարվում մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտի կատարումը: Կարգավորողի կողմից գործողությունը դադարեցնելու կարգադրագրերը, լիցենզիայի կասեցման որոշումները ատելության խոսքի տարածման բացառման նպատակից ելնելով, եթե առկա են այդպիսի փաստեր և ընտրված միջոցը համապատասխանում է նպատակին, **պետք է կատարվեն անհապաղ**:

[43] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 62-րդ հոդված.

[44] «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդված.

[45] «Վարչական դատավարության» օրենսգրքի 83-րդ հոդված.

Վերոգրյալը չի բացառում, որ անձինք, ովքեր գտնում են, որ իրենց իրավունքները անհարկի սահմանափակվել է, դիմեն դատարան և դատական կարգով վիճարկեն միջամտությունը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում վնասների փոխհատուցման պահանջ ներկայացնեն վարչական մարմին: Դատարանում նաև կարող է քննվել ընտրված միջոցների համաչափության սկզբունքը, այն հարցը, թե արդյո՞ք ընտրված միջոցները պիտանի, անհրաժեշտ և չափավոր են եղել նպատակին հասնելու համար: Սա կարևոր սկզբունք է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի և ՀՀ սահմանադրության 78-րդ հոդվածի ներքո:

Բայցևայնպես, ատելության խոսքի բացառման սկզբունքից ելնելով կարևոր է Կարգավորողի լիազորությունների այնպիսի սահմանում, որը հնարավորություն կտա նրան ակտիվ դերակատարում ունենա ատելության խոսքի դեմ պայքարում:

Կարգավորողը համացանցի վերահսկողության շղթայում առաջին ու այդ իմաստով եզրային օղակ է, քանի որ ծառայություն մատուցողների կողմից օգտատերերին հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելուց հետո Կարգավորողը որևէ առնչություն չունի համացանցի հասանելիություն ստացած օգտատերերի և նրանց կողմից գեներացված կոնտենտի նկատմամբ:

2.3. ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ՈԼՈՐՏՈՒՄ

Վերոգրյալից ելնելով շատ կարևոր է նաև ուսումնասիրել ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման ընթացքում ատելության խոսքի կարգավորման քայլերը: Անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք պետության կողմից սահմանվել են նվազագույն կառուցակարգեր, որպեսզի համացանցի կառավարման այս մակարդակում նույնպես ապահովվի հայեցակարգով սահմանված երաշխիքները, կամ արդյո՞ք առկա են ինքնակարգավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան արդյունավետ պայքարել ատելության խոսքի դեմ: Նշենք, որ մենք առավելապես հակված ենք ինքնակարգավորման, այլ ոչ թե կարգավորման մեխանիզմների ներդրմանը, բայց նաև նախատեսում ենք, որ այս երկու մեխանիզմները կարող են միասին գործել՝ միմյանց փոխլրացնելով: Հիմնական պայմանը նրանում է, որ որևէ մեխանիզմի ներդրման արդյունքում ինֆորմացիայի ազատ հոսքը համացանցում չտուժի:

Հետազոտության ընթացքում իրականացվել են անանուն փաստահավաք զրույցներ ոլորտի աշխատակիցների հետ, այդ թվում օպերատորների, ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցների հետ, որոնց

աշխատանքային պարտականություններից է նաև ինտերնետ հասանելիության ապահովումը: Հիմնական հարցերը վերաբերել են տեխնոլոգիապես հնարավոր ծրագրային և տեխնիկական լուծումներին, որոնք հնարավորություն կտան իրականացնել տեղեկատվական հոսքերի մոդերացիան, այդ թվում՝ ֆիլտրացիան և արգելափակումը: Զրույցների հիման վրա, ինչպես նաև ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզել ենք հետևյալը.

Նախ՝ պետք է արձանագրել, որ Հայաստանում Կարգավորողի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) լիցենզիա 2021 թվականի դրությամբ տրամադրվել է թվով 181 անձանց [46] իսկ Լիցենզավորված ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից Հայաստանում սպասարկվում է 2020 թվականի երկրորդ կիսամյակի դրությամբ 2854585 բաժանորդ[47]:

Ինտերնետ հասանելիությունը Հայաստանում իրականացվում է կազմակերպությունների կողմից ՀՀ տարածք ներմուծված միջազգային «IP» հոսքերի թողունակությամբ, որը 2019 թվականի դրությամբ կազմել է 882000 Մբիթ/վ հզորություն: Ի դեպ, 2019 թվականին Հայաստանում տեղի է ունեցել աննախադեպ ներմուծման թողունակության աճ՝ նախորդ տարվա համեմատ՝ 54.2 տոկոսով[48]:

ՀՀ տարածք միջազգային «IP» հոսքերի թողունակությունը ներմուծվում է կա՛մ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից կամ այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնք հոսքերի թողունակությունը ներմուծելուց հետո պայմանագրի հիման վրա փոխանցում են այլ լիցենզավորված կազմակերպություններին: Այսինքն՝ միջազգային «IP» հոսքերի թողունակությունը ներմուծվելուց հետո կարող է հասանելի լինել 2-ից ավել կազմակերպությունների համար, որոնք էլ իրենց հերթին կարող են դա օգտագործել սեփական բաժանորդներին ծառայություններ մատուցելու համար կամ պայմանագրի հիման վրա թողունակությունը փոխանցել այլ լիցենզավորված կազմակերպություններին:

Անկախ վերոգրյալ գործողությունների տեխնիկական բովանդակությունից, յուրաքանչյուր լիցենզավորված ծառայություն մատուցող կազմակերպություն, ստանալով հասանելիություն «IP» հոսքերի թողունակության նկատմամբ, իր տեխնիկական հնարավորություններով արդեն իսկ իրականացնում է դրա վերահսկողությունը, ապահովելով իր բաժանորդների ծառայությունների մատուցումը:

---

[46] Էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) լիցենզիա ունեցող անձանց ցանկ՝ http://www.psrc.am/images/docs/license/communication/2020/Licenzianer_24.12.20.pdf.

[47] Ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների քանակը 2008-2020 թվականներ՝ http://www.psrc.am/images/docs/license/communication/2020/diagram_21.08.20.pdf.

[48] Ինտերնետ հասանելիության ծառայությունների ոլորտի վիճակագրական ցուցանիշների վերլուծություն, հասանելի է՝ http://www.psrc.am/am/news/topic/10778.

Նշենք նաև, որ ինտերնետ հասանելիությունը բաժանորդին կարող է հասցվել երեք տարբերակներով՝

- առաջինը բջջային հեռախոսի միջոցով է, որը իրականացվում է բջջային կապի հնարավորությամբ.
- երկրորդը շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիությունն է, որը կարող է իրականացվել, օրինակ, GSM սարքավորման կամ USB մոդեմների միջոցով.
- երրորդ տարբերակը ամրակցված լայնաշերտ ինտերնետն է, որը բաժանորդին հասանելիություն է տալիս ֆիքսված հեռախոսակապի տեխնիկական հնարավորություններով։

2.4. ԿՈՆՏԵՆՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Այսպիսով, արձանագրելով Հայաստանում ինտերնետ հասանելիության կառուցվածքը և դրանց ակտիվ մասնակիցների շրջանակը, հաջորդիվ ցանկանում ենք քննել տեխնիկական հնարավոր այն տարբերակները, որոնք հնարավորություն կտան նույնականացնել, ուսումնասիրել կամ սահմանափակել այն կոնտենտը, որն իր մեջ պարունակում է ատելության խոսք։ Հիշյալը կարևոր է այն փաստի հաշվառմամբ, որ պետք է պարզել, բացի իրավական կառուցակարգերից հնարավոր է արդյո՞ք **տեխնիկապես կամ ծրագրային եղանակով կանխարգելել ատելության խոսքը համացանցում:** Հավելենք նաև, որ սույն ենթաբաժնում ներկայացված տեղեկատվությունը հավաքագրվել է ոլորտի մասնագետների հետ զրույցների հիման վրա, ուստի հնարավոր է տեղեկությունները ներկայացվեն ոչ տեխնիկական տերմինաբանությամբ կամ ավելի խորը բովանդակությամբ.

Համացանցում՝ համակարգչային տեխնիկաների միջև առկա ցանցի տեղեկատվության փոխանակման մեջ կարևոր դեր ունի «IP» հասցեները (Internet Protocol Address)։ «IP» հասցեների տրամադրման հետ կապված կարգավորումները իրականացվում է համաշխարհային մակարդակով՝ «Internet Assigned Numbers Authority» (IANA) [49] միջազգային մարմնի և թվով 5 մայրցամաքային կազմակերպությունների միջոցով։ Ընդ որում, IANA-ն հանդիսանում է միջազգային մեկ այլ դոմենային տիրույթի կարգավորող հանդիսացող միջազգային «Internet

[49] INTERNET ASSIGNED NUMBERS AUTHORITY (IANA), պաշտոնական կայքը՝ https://www.iana.org/numbers

Corporation for Assigned Names and Numbers» (ICANN)[50] կազմակերպության ներսում գործող մարմին:

Եվրոպայում որպես IP հասցեների տրամադրման գործընթացում մասնակից միջազգային կազմակերպություն հանդես է գալիս «Reseaux IP Europeens Network Coordination Centre» (RIPE NCC) կազմակերպությունը [51] : Կազմակերպության անդամներ են հանդիսանում նաև հայկական կազմակերպությունները, որոնք հիմնականում հանդիսանում են ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող կազմակերպություններ[52]:

Հայաստանում ինտերնետ ծառայություն մատուցող կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում օգտագործում եմ իրական (real) և տեղային (local) «IP» հասցեներից: Հաշվի առնելով, որ իրական IP հասցեները ունենալը բավականին թանկ է և տնտեսապես ձեռնտու չէ բաժանորդներին բոլորին տրամադրվել իրական «IP» հասցեներ, ծառայություններ մատոցողները հիմնականում ունենում են իրական «IP» հասցե, իսկ իրենց բաժանորդներին տրամադրում են տեղային «IP» հասցեներ, որոնք կարող են սպասարկել մինչև մի քանի հարյուր օգտագործողներ:

Ուստի, շատ դեպքերում, անհնարին է պարզել կոնկրետ տեղային «IP» հասցեի օգտագործողին: Այն դեպքերում, երբ ատելության խոսք հարուցող անձի «IP» հասցեն բացահայտված է, հնարավոր է ծառայություններ մատուցող անձանց կողմից որոշակի դժվարություններ առաջանան անձի նույնականացման համար: Այն դեպքերում, երբ որոշակի տարածքում օգտագործվում է ինտերնետ հասանելիության մեկ սարքավորում (օրինակ՝ GSM տեխնիկական սարք) և այդ սարքավորումից օգտվում են մի շարք անձինք, «IP» հասցեի առկայությունը դեռևս բավարար չէ անձին նույնականացնելու համար, քանի որ ծառայություն մատուցողի համար կոնտենտի «հետքը» և այլ օգտագործողների համացանցի հասանելիության պատմությունը «History» գտնվում են մեկ «ցանկի» մեջ և դրանց առանձնացումը շատ դեպքերում անհնարին է: Իսկ այն դեպքերում, երբ ծառայություն մատուցողը պետք է արգելափակի հիշյալ հասցեն, կխախտի համաչափության սահմանադրաիրավական երաշխիքը,

[50] Internet Corporation for Assigned Names and Numbers (ICANN), պաշտոնական կայք՝ https://www.icann.org/history

[51] Reseaux IP Europeens Network Coordination Centre (RIPE NCC), պաշտոնական կայք՝ https://www.ripe.net/

[52] Local Internet Registries offering service in Armenia, հասանելի է՝ https://www.ripe.net/membership/indices/AM.html

քանի որ այդ հասցեից օգտվող մյուս անձանց ինտերնետ հասանելիությունը նույնպես կսահմանափակվի:

Ոլորտի մասնագետների հետ զրույցները ցույց են տալիս, որ ծառայություն մատուցողների կողմից արդյունավետ «վերահսկողությունը» կոնտենտի նկատմամբ կարող է իրականացվել երկու եղանակներով, առաջին՝ հատուկ սարքավորումների առկայությամբ և երկրորդ՝ երբ ծառայություն մատուցողները պահպանեն իրենց «սերվերներում» ամբողջ ինֆորմացիոն տրաֆիկը: Նշենք, որ առկա տեղեկատվության համաձայն՝ Հայաստանում մեկ կամ երկու ծառայություններ մատուցող կազմակերպություններ ունեն այդպիսի հատուկ սարքավորումներ: Սակայն այդ սարքավորումները դրանց թանկարժեք լինելու պատճառաբանությամբ անհասանելի է մնացած Ծառայություն մատուցող կազմակերպությունների համար, քանի որ դրա արդյունքում հնարավոր է ծառայությունների արժեքի մի քանի անգամ թանկացում (բացի սարքավորումները, անհրաժեշտ են որակավորված մասնագետներ, այդ թվում սպասարկվող թանկարժեք ծրագրային ապահովումներ և այլն):

Վերոգրյալ հատուկ սարքավորումներ են հանդիսանում նաև «Deep Packet Inspection (DPI)» սարքավորումները[53], որոնք տեխնոլոգիական առումով ունակ են հավաքագրել վիճակագրական տվյալներ, ստուգել դրանք, իրականացնել բովանդակային ֆիլտրացիա: Սարքավորումը ունակ է նաև հայտնաբերել և արգելափակել վիրուսները, իրականացնել տեղեկատվությունների ֆիլտրացիա, որոնք չեն համապատասխանում սահմանված չափանիշներին:

Սակայն, ժողովրդավարական հասարակություններում առկա է բավականին լայն քննադատություն հիշյալ սարքավորման կիրառման շուրջ, քանի որ այդ սարքավորումները կարող են ոչ միայն սահմանափակել անօրինական, այլ նաև օրինական կոնտենտը : Սարքավորումների ոչ համաչափ կիրառության վտանգը կաշկանդում է դրանց օգտագործումը, ուստի ոչ միայն այդ սարքավորումների թանկարժեք լինելը, այլև խոսքի ազատության անհամաչափ սահմանափակման կամ այլ եղանակով համացանցի նկատմամբ վերահսկողության վտանգը հաղթահարում է պետության կողմից այդպիսի սարքավորումների կիրառման անհրաժեշտությանը:

Մասնավորապես Deep Packet Inspection (DPI) սարքավորումները կիրառվել են Հայ-ադրբեջանական պատերազմի (2020 թվական) ժամանակ Ադրբեջանի հանրապետության կողմից, որի արդյունքում ամբողջական եղանակով արգելափակվել է Telegram, Facebook, WhatsApp, YouTube, Instagram, TikTok, LinkedIn,

[53] Deep Packet inspection explained, AT&T Business https://cybersecurity.att.com/blogs/security-essentials/what-is-deep-packet-inspection

Twitter, Zoom, Skype, և այլ սոցիալական ցանցերը: Արգելափակումները չեն շրջանցել նաև VPN սերվերները, օնլայն-բանկինգ, զանգվածային լրատվության կայքերը և այլն[54]:

Սակայն անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ նույնիսկ որևէ «IP» հասցեի ֆիլտրացիայի արդյունքում արգելափակումը դեռևս չի երաշխավորում դրա անհասանելությունը, մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ զարգանում է տարբեր ծրագրային ապահովումների լայնորեն կիրառությունը, որոնք դյուրին կերպով շրջանցում են սահմանափակումները. մասնավորապես այդպիսի ծրագրային ապահովումներ են հետևյալները.

- «IP» հասցեի փոփոխություն.
- Virtual Private Network (VPN) այս դեպքում անձը կարող է հատուկ ծրագրի միջոցով միանալ այլ երկրի VPN ծառայություն մատուցողի հետ այդ դեպքում համակարգը իրեն ճանաչում է որպես այլ երկրի բաժանորդ.
- Proxy server-ի միջոցով.
- TOR-ի միջոցով.
- Եվ այլ բազմաթիվ ծրագրային և տեխնիկական միջոցներով:

Վերոգրյալի հիման վրա եզրակացնում ենք, որ համացանցի կառավարման ոլորտում ոչ միայն առկա են տեխնիկական հնարավորություններ իրականացնելու կոնտենտի նկատմամբ վերահսկողություն, այլև առկա են հակընդդեմ ծրագրային ապահովումներ վերահսկողությունը շրջանցելու համար, ուստի կարող ենք արձանագրել, որ համացանցում առկա չէ երաշխավորված մեխանիզմներ: Ծրագրային ապահովումները հնարավորություն են տալիս օգտագործողին քողարկվել «darknet»-ում:

2.5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԱԺԱՆՈՐԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ՝ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑ

Սույն հետազոտության նպատակներին հասնելու նպատակով անհրաժեշտ է նաև ուսումնասիրել ծառայության մատուցող-բաժանորդ հարաբերությունները և այդ հարաբերությունների մեջ պետության, ի դեմս Կարգավորողի՝ Հանձնաժողովի մասնակցությունը և կարգավորման առարկան: Այլ կերպ ասած, պետությունը ինչ

[54] Social media restricted in Azerbaijan amid clashes with Armenia over Nagorno-Karabakh https://netblocks.org/reports/social-media-restricted-in-azerbaijan-amid-clashes-with-armenia-over-nagorno-karabakh-pA5LMj87

շրջանակներում է իրականացնում ծառայություն մատուցող-բաժանորդ հարաբերությունների կարգավորումը:

Ուսումնասիրելով մի շարք լիցենզավորված անձանց պայմանագրերը, պարզ է դառնում, որ գերակշիռ մասը օգտագործում է Քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածով սահմանված հրապարակային պայմանագրի կարգավորումները, որոնց հիման վրա բաժանորդը (օգտատերը, վերջնական օգտագործողը), ով ցանկանում է օգտվել ծառայություն մատուցողի ծառայություններից, գործարքով միանում է և այդպիսով կողմերի նկատմամբ գործում է այդ պայմանագրի դրույթները[55]:

Կարգավորողը «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը հաստատելու մասին» որոշմամբ [56] սահմանել է ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից բաժանորդների հետ կնքվող հրապարակային պայմանագրերում նշվելիք նվազագույն տվյալները, որոնց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Կարգավորողի կողմից ծառայություն մատուցող - բաժանորդ հարաբերություններում կարգավորում է տվյալների հոսքի արագության, ծավալների և նմանատիպ այլ պայմանները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համացանցում յուրաքանչյուր մասնակից ոչ միայն կոնտենտ սպառող է այլև կոնտենտ արտադրող (գեներացնող), ապա ավելի է կարևորվում Կարգավորողի կողմից ատելության խոսքի կանխարգելման նպատակով որոշակի կարգավորումներ սահմանելը: Սակայն մինչև Կարգավորողի կողմից հիշատակված ոլորտ կարգավորումներ ներմուծելը, գտնում ենք, որ անհրաժեշտ է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով սահմանվեն կանոններ այն մասին, որ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի մասնակիցները պարտավոր են ձեռնարկել միջոցներ ատելության խոսքի կանխարգելման ուղղությամբ: Մասնավորապես, **օրենքով կարող են նախատեսվել կանոններ, համաձայն որի՝ Կարգավորողը իրավասու է սահմանել կարգ՝ ծառայություններ մատուցողների կողմից բաժանորդներին ինտերնետ հասանելիության ծառայությունների վերաբերյալ պայմանագրերում (այդ թվում հրապարակային) սահմանել կանոններ, որոնք ուղղված կլինեն համացանցում ատելության խոսքի կանխարգելմանը**: Այդ կանոններում կարող են նախատեսված լինել սահմանումներ այն մասին, որ ինտերնետ հասանելիությունը բաժանորդի կողմից չի կարող օգտագործվել ատելության խոսքի տարածման համար:

---

[55] Օրինակ՝ https://www.mts.am/more/Legal-Information/General-Terms-of-Provisioning-Mobile-Electronic-Communication-Services.

[56] «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը հաստատելու մասին» որոշում, ընդունված՝ 2008թ. սեպտեմբերի 3-ին, թիվ 471-Ն, հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77489.

Ծառայություն մատուցողները, օրենքի ուժով հանդիսանալով հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություններ, ունեն որոշակի պարտավորություններ հանրային շահերի իրացման տեսանկյունից, ուստի կարող են հանդիսանալ արդյունավետ օղակ ատելության խոսքի կանխարգելման շուրջ: **Ուստի օրենքով կարող է նախատեսված լինել կանոն այն մասին, որ ծառայություններ մատուցող կազմակերպությունները պարտավոր են ունենալ իրենց ներքին կանոնակարգերում ատելության խոսքի տարածման դեմ սահմանումներ, որոնք հնարավորություն կտան անձին քննել կոնկրետ փաստերի վերաբերյալ իրեն հասանելի դարձած (այդ թվում՝ ներկայացված բողոքների հիման վրա) ատելության խոսքի վերաբերյալ տեղեկությունները և անհրաժեշտության դեպքում դիմել իր բաժանորդին ատելության խոսքը համացանցից հեռացնելու նպատակով, որի ապարդյուն լինելու դեպքում իրավասու կլինի կասեցնել կամ դադարեցնել ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման պայմանագիրը:**

Անկախ վերոգրյալ կանոններից, հանրային նշանակություն ունեցող կազմակերպությունները, որոնց գործառույթները որոշակիորեն առնչվում են ատելության խոսքի հարուցման հետ, պարտավոր են ունենալ ներքին ինքնակարգավորող գործուն կանոններ դրա դեմ պայքարի համար:

Կարգավորողը (ՀԾԿՀ-ն) կարող է ունենալ իրավասություն վերոգրյալի վերաբերյալ մշտադիտարկումներ կամ ուսումնասիրություններ իրականացնելու լիազորություն, որի արդյունքների հիման վրա կարող են ներկայացվել առաջարկություններ: Հաշվի առնելով ոլորտի հանրային կարգավորման բովանդակությունը, Կարգավորողը պարտավոր է բողոքների քննության և անօրինական գործողությունների դադարեցման կարգադրագրեր արձակելու իրավակարգավորումների շրջանակներում քննել նաև ատելության խոսքի հարուցման վերաբերյալ բողոքներ, սակայն միայն այն լիազորությունների շրջանակներում, որոնք տրված են օրենքով Կարգավորողին: Կարգավորողը նաև պարտավոր է ունենալ իրավասություն կիրառել պատասխանատվության միջոցներ այն դեպքերում, երբ ատելության խոսքի հարուցումը տեղի է ունենում լիցենզավորված անձի կողմից:

Վերոգրյալի հիմքում դրված է այն, որ պետական մարմինները ատելության խոսքի կանխարգելման նպատակով ոչ միայն իրավասու են, այլև պարտավոր են ապահովել նվազագույն ստանդարտների կիրառությունը բովանդակության նկատմամբ՝ օրենքով սահմանված կանոններով կամ ինքնակարգավորման իրավական ակտերով (փափուկ օրենքներ): Հիշյալը բխում է պետության պոզիտիվ պարտականություններից, մասնավորապես՝ ատելության խոսքի դեմ արդյունավետ կառուցակարգեր մշակելու, դա ժամանակակից կարգավորումների ներքո իրագործելու պարտականություններից :

2.6. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ և ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ.

Առանձին կարգավորման առարկա են սոցիալական ցանցերը և ծրագրային հավելվածները, որոնց կառուցակարգերը հնարավորություն չեն տալիս կիրառել դասական միջոցները: Մասնավորապես՝ սոցիալական ցանցերում օգտատերերի կողմից ատելության խոսքի հարուցման փաստերի վերաբերյալ տարբեր սոցիալական ցանցեր կիրառում են սեփական ինքնակարգավորող ստանդարտներ[57]:

Հարցազրույցների ընթացքում ծառայություն մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչները անանուն կերպով նշել են, որ առկա են որոշակի սարքավորումներ և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ Deep Packet Inspection (DPI), որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել սոցիալական ցանցում օգտատիրոջ IP հասցեն և արգելափակել այն, սակայն այդպիսի տեխնիկական սարքեր Հայաստանում հազվադեպ հանդիպող սարքեր են :

Սոցիալական ցանցերում օգտատերերի կողմից ատելության խոսքի հարուցման դեմ պայքարում կան հիմնականում երեք հայեցակարգեր.

- առաջինը դա սոցիալական ցանցի ինքնակարգավորող նորմերն են, որոնք հնարավորություն են տալիս սոցիալական ցանցին 3 ստանդարտներով իրականացնել մոնիտորինգ: Առաջին ստանդարտը սոցիալական ցանցի աշխատակիցների միջոցով իրականացվող մոդերացիան է (մասնագիտական մոդերացիա), երկրորդը սոցիալական ցանցի այլ օգտատերերի կողմից որոշակի կանոնակարգված աշխատանքով մոդերացիայի իրականացումն է և երրորդ ստանդարտը որոշակի ալգորիթմերի միջոցով իրականացվող ծրագրային մոդերացիան է: **Սոցիալական ցանցերը ինքնակարգավորող նորմերում նշված նպատակներին հասնելու հայեցակարգերն ինքնուրույն են ընտրում :**
- երկրորդը որոշակի տեխնիկական միջոցներով կամ սոցիալական ցանցի աջակցությամբ օգտատիրոջ IP հասցեի նույնականացումն է պետական մարմինների միջամտության շրջանակներում (այդ թվում՝ քրեական արդարադատության ընթացակարգեր շրջանակներում).

[57] Facebook community standarts, https://www.facebook.com/communitystandards/hate_speech , Twitter Hateful conduct policy https://help.twitter.com/en/rules-and-policies/hateful-conduct-policy և այլն.

- երրորդ պետության կողմից որոշակի նվազագույն չափորոշիչների սահմանումն է սոցիալական ցանցերի նկատմամբ, որոնց հիման վրա սոցիալական ցանցերը ինքնակարգավորվում են պետության սահմանված չափանիշների հիման վրա, այդ թվում՝ հաշվետվողականության չափանիշի հիման վրա: Սույնը կարող է իրականացվել պատասխանատվության միջոցների սահմանմամբ: Այս երրորդ մոդելի հիման վրա է գործում Գերմանիայի **NetzDG օրենքը**:

Առցանց ատելության խոսքի կարգավորման վերոգրյալ երրորդ հայեցակետն ավելի բարդ է, քանի որ դա կապված է առցանց հարթակների, այն է՝ սոցիալական ցանցերի կողմից իրենց ցանցերում այլոց կողմից տեղադրվող նյութերի համար պատասխանատվության ենթարկելուն:

Սույն հետազոտության նպատակներին հասնելու նպատակով ուսումնասիրել ենք աշխարհում ամենամեծ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի 2.8 միլիարդ ակտիվ օգտատեր[58])՝ «Facebook.com» սոցիալական ցանցի (այսուհետ նաև՝ ՖԲ)՝ ատելության խոսքի կարգավորման ուղղված քայլերը և այն գործիքները, որոնք հնարավորություն են տալիս գործնականորեն կանխարգելելու կամ հակազդելու ատելության խոսքը սոցիալական ցանցում:

Ատելության խոսքի վերաբերյալ ՖԲ-ի համայնքի ստանդարտը սահմանված է հետևյալ կերպ.

«ուղղակիորեն հարձակում մարդկանց վրա, որը հիմքում ընկած է այն, ինչ մենք անվանում ենք պաշտպանված հատկություններ. ռասա, էթնիկ պատկանելություն, ազգային ծագում, կրոնական պատկանելություն, սեռական կողմնորոշում, կաստա, սեռ, գենդեր, գենդերային ինքնություն և լուրջ հիվանդություն կամ հաշմանդամություն»: Արգելված բովանդակությունը ներառում է «բովանդակություն, որը նկարագրում կամ բացասական իմաստով թիրախավորում է մարդկանց հայհոյանքներով, որտեղ հայհոյանքը՝ որպես վիրավորական պիտակներ սովորաբար օգտագործվող բառեր են»:

«Facebook.com»-ի կողմից 2018 թվականին հայտարարվեց Վերահսկիչ խորհրդի[59] (Oversight Board) (այսուհետ նաև՝ Վերահսկիչ խորհուրդ) ստեղծման մասին (փաստացի սկսել է աշխատանքը 2020թ. հոկտեմբերի 22-ից), որը պետք է իրականացնի սոցիալական ցանցում կոնտենտի արգելափակման կամ ջնջման վերաբերյալ բողոքների քննությունը: Խորհրդի անդամներ են հանդիսանում աշխարհի 27 երկրների նախկին դատավորներ, փաստաբաններ, դատախազներ, լրագրողներ և քաղաքական գործիչներ:

Վերահսկիչ խորհրդի կողմից գործերի ընտրության չափանիշները[60] որոշվում են յուրաքանչյուր տարի, սակայն առկա է որոշակի սկզբունքներ, որոնք պետք է հաշվի

---

[58] Հասանելի է՝ https://investor.fb.com/investor-news/press-release-details/2021/Facebook-Reports-Fourth-Quarter-and-Full-Year-2020-Results/default.aspx.


[59] Վերահսկողության խորհրդի (Oversight Board), հասանելի է՝ https://oversightboard.com/meet-the-board/.

[60] Հասանելի է՝ https://oversightboard.com/sr/overarching-criteria-for-case-selection.

առնվեն գործերի քննության ընտրությունը կատարելու համար. մասնավորապես դրանք այն հարցերն են, որոնցում բարձրացվում են կարևոր խնդիրներ խոսքի ազատության և մարդու այլ իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև սոցիալական ցանցի ստանդարտների և արժեքների վերաբերյալ:

Վերահսկիչ խորհուրդը ինքնակարգավորվող մարմին է, ով գործում է կանոնադրության հիման վրա[61] և գործունեությունը կարգավորված է վերջինիս կողմից սահմանված գործերի քննության ընթացակարգերի հիման վրա[62]:

Ներքոգրյալում հակիրճ սահմանված է Վերահսկիչ խորհրդում գործերի քննության ընթացակարգը[63].



[61] Հասանելի է՝ https://oversightboard.com/governance/.

[62] Հասանելի է՝ https://oversightboard.com/sr/governance/bylaws.

[63] Հասանելի է՝ https://oversightboard.com/sr/rulebook-for-case-review-and-policy-guidance

ՖԲ-ն ստանձնել է պատասխանատվություն իրականացնել Վերահսկիչ խորհրդի կողմից կայացված անկախ որոշումների կատարումը, ինչպես նաև հետևել որոշումների բովանդակային կատարմանը[64]:

Վերահսկիչ խորհրդի կողմից առաջին որոշումներից է հանդիսանում 2021թ. հունվարի 28-ին հրապարակված որոշումը[65], որը վերաբերվում է հայ օգտատիրոջ կողմից 2020թ. նոյեմբերին կատարված գրառման հետ, ով ըստ որոշման՝ « (....) Ադրբեջանցիներին նկարագրելու համար օգտատերն օգտագործել է «тазики» («տազիկի») բառը, հայտնելով, որ նրանք քոչվոր են և չունեն պատմություն՝ համեմատ հայերին»: ՖԲ-ն հեռացրել է գրառումը ատելության խոսքին վերաբերող համայնքի սկզբունքների խախտման համար՝ ազգային պատկանելիության հիմքով մարդկանց խմբին վիրավորելու համար: Վերահսկիչ խորհրդի կողմից պատվիրված անկախ լեզվաբանական վերլուծությունը հաստատել է ֆեյսբուքյան մասնագետների կողմից «тазики» բառի՝ որպես ապամարդկայնացնող հայհոյանք ընդդեմ ազգային ծագման որոշումը, որի հիման վրա, ինչպես նաև հիմնվելով շուրջ 35 երկրներից ստացված կարծիքների վրա Վերահսկիչ խորհուրդը որոշել է, որ գրառումը խախտել է Ֆեյսբուքի Համայնքի սկզբունքները: Խորհուրդը համարել է նաև, որ բովանդակությունը հեռացնելու Ֆեյսբուքի որոշումը համահունչ է ընկերության արժեքներին:

ՖԲ-ի կողմից նաև յուրաքանչյուր կիսամյակ հրապարակվում է երկու տեսակ հարցումների վերաբերյալ վիճակագրություն՝

- Բովանդակության սահմանափակումների[66]
- Պետական մարմինների կողմից օգտատիրոջ տվյալների վերաբերյալ հարցումների[67]

Բովանդակության սահմանափակումները ՖԲ-ի կողմից կիրառվում են այն դեպքերում, երբ ՖԲ-ին հայտնում են, որ վերջինիս կողմից ղեկավարվող հարթակներում առկա է ներպետական օրենսդրության խախտում, որը թեկուզև չի

---

[64] Խորհրդի կանոնադրության 5-րդ բաժնի 3-րդ կետ, հասանելի է՝ https://oversightboard.com/governance/.

[65] Թիվ 2020-003-ՖԲ-ՈՒԱ որոշում, հասանելի է՝ https://oversightboard.com/decision/FB-QBJDASCV/

[66] Content Restrictions Based on Local Law, հասանելի է՝ https://transparency.facebook.com/content-restrictions

[67] Government Requests for User Data, հասանելի է՝ **https://transparency.facebook.com/government-data-requests**

խախտում ՖԲ-ի ստանդարտները. այդ դեպքում ՖԲ-ն կարող է սահմանափակել կոնտենտը տվյալ երկրի տարածքում: Նշենք, որ ՖԲ-ին կարող են դիմել դատարանները, կառավարությունը, ոչ պետական մարմինները, ՖԲ-ի օգտատերերը և քաղաքացիական հասարակության անդամները:

Պետական մարմինների կողմից օգտատիրոջ տվյալների վերաբերյալ հարցումների վիճակագրությամբ ՖԲ-ն ներկայացնում է կոնկրետ կիսամյակների պարբերականությամբ՝ պետական մարմինները որքան անգամ են դիմել ՖԲ-ին որևէ օգտատիրոջ վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

Ի տաբերություն Պետական մարմինների կողմից օգտատիրոջ տվյալների վերաբերյալ հարցումների, որը տեղի է ունենում բավականին հաճախ (իրավական հարցումները 2020 թվականի առաջին կիսամյակին կազմել են թվով 20 հատ), բովանդակության սահմանափակումների վերաբերյալ հարցումներ Հայաստանից ՖԲ-ն գրեթե չի ստանում, մասնավորապես ուսումնասիրելով 2019 և 2020 թվականները, տեսնում ենք, որ բովանդակության սահմանափակումների վերաբերյալ հարցումներ Հայաստանից առկա չեն [68] : Պասիվության պատճառ կարող է հանդիսանալ հասարակության համար (Դատարաններ, պետական մարմիններ, քաղաքացիական հասարակության անդամներ և այլն) գործիքակազմերի վերաբերյալ նվազ տեղեկացվածությունը:

Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ ՖԲ-ում (այդ թվում սոցիալական ցանցի կազմում գործող այլ հարթակներում, օրինակ՝ Instagram-ում) առկա է որոշակի գործիքակազմ, որի արդյունքում հնարավոր է ձեռնարկել ատելության խոսքի կարգավորման նպատակով արդյունավետ գործողություններ:

Կամավոր սխեմաներից է հանդիսանում ԵՄ կամավոր վարքագծի կանոնագիրքը [69] , որը ընդունվել է 2016թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ սոցիալական ցանցերի որոշ հսկա օպերատորների հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա, ինչպիսիք են՝ «Facebook»-ը, «Twitter»-ը եւ «YouTube»-ը: Դրա արդյունքում՝ ստեղծվեց Կամավոր վարքագծի կանոնագիրք, որի պահանջներն օպերատորները խոստացան պահպանել: Այս կազմակերպությունները բողոքների ընթացակարգերի միջոցով օպերատորների ուշադրությունը հրավիրում են ենթադրյալ անօրինական նյութերի վրա, որից հետո գնահատվում է, թե ինչպես են

[68] Content Restrictions-2020_H1, տող 13, հասանելի է՝ https://transparency.facebook.com/content-restrictions.

[69] Հասանելի է՝ https://ec.europa.eu/info/policies/justice-and-fundamental-rights/combatting-discrimination/racism-and-xenophobia/eu-code-conduct-countering-illegal-hate-speech-online_en.

օպերատորները արձագանքում դիմումին:

Վարքագծի այդ կանոնագիրքը հիմնականում համապատասխանում էր 2000թ.[70] հաստատված «Էլեկտրոնային առեւտրի մասին» ԵՄ հրահանգին, որն օպերատորներին պաշտպանում է իրենց հարթակներում հայտնվող նյութերի համար պատասխանատվությունից, երբ վերջիններս ծանուցված չեն եղել դրանց անօրինական բնույթի մասին: Ուստի օպերատորների համար սահմանված չէ իրենց հարթակներում անօրինական նյութեր ակտիվորեն որոնելու որեւէ պարտականություն, թեեւ նրանցից պահանջվում է միջոցներ ձեռնարկել այն պահից սկսած, երբ տեղեկացվում են իրենց հարթակում անօրինական նյութի առկայության մասին: Այս ընթացակարգը հայտնի է որպես «ծանուցում եւ հեռացում» (Notice and take down) ընթացակարգ:

«Համեմատական ուսումնասիրություն՝ ատելության խոսքի օրենքների և ՀՀ օրենսդրության վերաբերյալ» հետազոտությամբ [71] ուսումնասիրվել էր Գերմանիայում ատելության խոսքի կարգավորման գործընթացները: 2017 թվականին Գերմանիայի կառավարությունն ընդունել է Ցանցերում օրենքի կիրառման ակտը (հայտնի է որպես NetzDG օրենք), որով խոշոր տուգանքներ են սահմանվում սոցիալական ցանցերի օպերատորների համար, եթե վերջիններս իրենց հարթակներից բավականաչափ արագ չեն հեռացնում ատելության խոսքը: Այս օրենքը ներմուծվեց այն պատճառով, որ Գերմանիայի կառավարությունը կարծում էր, որ ինքնակարգավորումը եւ Կամավոր վարքագծի կանոնագրքերը բավարար չեն ստիպելու համար այդ ընկերություններին լրջորեն ստանձնել անօրինական նյութերի համար իրենց պատասխանատվությունը: Այսպիսով, Գերմանիայի մոտեցումը, ըստ էության, «ծանուցել և հեռացնել» ընթացակարգի առավել արդյունավետ կիրառումն է: Օրենքը կիրառվում է 2 միլիոն կամ ավելի օգտատեր ունեցող ընկերությունների նկատմամբ եւ հստակորեն ուղղված է այնպիսի համացանցային հսկաներին, ինչպիսիք են «Facebook»-ը եւ «Twitter»-ը: Օրենքով սահմանվում էր երկու պարտավորություն. առաջինը՝ բողոքների քննության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն (բաժին 2), եւ երկրորդը՝ բողոքների քննության արդյունավետ եւ թափանցիկ ընթացակարգ ապահովելու պարտավորություն (բաժին 3):

Թեեւ Գերմանիայի օրենսդրությունը, անշուշտ, արդյունավետ է եղել, սակայն այն ակնհայտորեն չի լուծել առցանց ատելության հետ կապված խնդիրները: Այդուհանդերձ, դեռեւս կան մտահոգություններ արտահայտվելու ազատության

[70] Հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A32000L0031.

[71] «Համեմատական ուսումնասիրություն՝ ատելության խոսքի օրենքների և ՀՀ օրենսդրության վերաբերյալ» հետազոտություն, հեղինակներ՝ Չարա Բակալիս եւ Արա Ղազարյան, 2020թ..

վերաբերյալ, եւ երբ Ֆրանսիայի խորհրդարանն ընդունեց նմանատիպ օրենք (այսպես կոչված «Ավիայի օրենք»-ը), դա Սահմանադրական դատարանի կողմից համարվեց անհամատեղելի ազատ արտահայտվելու իրավունքի հետ:

Ծրագրային հավելվածներում ատելության խոսքի կարգավորումը ունի իր առանձնահատկությունները: Մասնավորապես ծրագրային հավելվածների մեծամասնությունը տվյալների փոխանակումը իրականացնում է գաղտնագրման (encryption) հիման վրա, որի արդյունքում անհնարին է դարձնում ցանցի օպերատորների կողմից մոդերացիան: Իսկ ինչ վերաբերվում է դոմենային տիրույթին, ապա այս ծրագրային հավելվածների ոլորտը հիմնականում չի առնչվում այդ տիրույթի հետ: Գործնականում կիրառվում է ծրագրային հավելվածների սահմանափակման երկու միջոցներ՝ արգելքի սահմանումը կոնկրետ տարածաշրջանում կամ այդ ծրագրային հավելվածի հեռացումը ներբեռնման հարթակներից: Վերջինիս կիրառության օրինակ է հանդիսանում զանգվածային լրատվության միջոցներում տարածվող այն տեղեկատվությունը, համաձայն որի՝ «Parler» ծրագրային հավելվածը ատելության խոսքի տարածման հիմքով արգելափակվել է «Play Store» (Google) և «App Store» (Apple) հարթակներում իսկ «Amazon Web Services» հոսթինգային ծառայությունը դադարեցրել է հոսթինք ծառայությունը[72]: Արգելափակման հիմնավորումն այն էր, որ ծրագրային հավելվածը չէր ներդրել բավարար կառուցակարգեր արգելված կոնտենտի դեմ պայքարի համար:

Որոշ ծրագրային հավելվածներ խոսքի ազատության երաշխավորման նպատակով իրենց կանոններում չեն ներառել ատելության խոսքի կարգավորման վերաբերյալ դրույթներ, օրինակ՝ «Telegram»-ը[73]: Սակայն նկատվում է, որ «Parler» ծրագրային հավելվածի նախադեպը հիմք հանդիսացավ, որ այդպիսի հավելվածների կառավարիչները հնարավոր վտանգից ելնելով ավելի խորությամբ քննեն ատելության խոսքի կարգավորման և հարթակներում մոդերացիայի հետ կապված հարցերը: Մասնավորապես՝ «THE COALITION FOR A SAFER WEB» ոչ առևտրային կազմակերպությունը ԱՄՆ-ում դիմել է Կալիֆոռնիայի դատարան ընդդեմ «Apple»-ի, որպեսզի վերջինս արգելափակի «Telegram»-ը «App Store» հարթակում, ինչպես դա իրականացվեց «Parler» ծրագրային հավելվածի դեպքում[74]: Հայցվորը նշել է, որ «Apple»-ը անտեսել է այն հանգամանքը, որ «Telegram»-ը չի ապահովում ծրագրային հավելվածում ատելության խոսքի վերաբերյալ «Apple»-ի կանոնները և Կալիֆոռնիայի

[72] Հասանելի է՝ https://www.nytimes.com/2021/01/09/technology/apple-google-parler.html

[73] Հասանելի է՝ https://telegram.org/privacy/?setln=en

[74] Հայցը հասանելի է՝ https://coalitionsw.org/wp-content/uploads/2021/01/001_Complaint-and-Exhibits.pdf

օրենքները (Կալիֆոռնիայի քրեական օրենսգրքի 422.6-րդ հոդվածի հիմքով)։

Ինքնակարգավորման կառուցակարգերը հիմնականում բավականին արդյունավետ կիրառվում են այն դեպքերում, երբ դրանք գործում են որոշակի կարգավորումների շրջանակներում։ Կարգավորումները հնարավորություն են տալիս վերահսկել ատելության խոսքի դեմ պայքարի ինքնակարգավորման կառուցակարգերի համաչափությունը դրանց կիրառման արդյունավետությունը։ Սակայն կարգավորումը պարտադիր չէ, որ պետք է լինի պետության կողմից. մասնավորապես՝ որպես օրինակ կարող ենք վկայակոչել անդրազգային «Google» և «Apple» կազմակերպությունների կողմից սահմանվող կարգավորումները, որոնք ստիպում են իրենց հարթակներից օգտվող անձանց ապահովել ատելության խոսքի դեմ պայքարի արդյունավետ կարգավորումները։ Այդ կազմակերպությունները ոչ միայն ունակ են սահմանափակել կոնտենտը համացանցում կամ որոշակի տարաշրջանում, այլև կարող են սահամանափակել կոնտենտը տարածող անձի գործունեությունը ստիպելով վերջինիս աշխատել որոշակի ինքնակարգավորման շրջանակներում։ Նմանօրինակ դեպք կարող ենք հիշատակել «Telegram»-ի դեպքում, երբ «Google» և «Apple» կազմակերպությունները հրաժարվեցին ապահովել իրենց «Google play» և «Apple store» հարթակներով «Telegram»-ի ծրագրային թարմացումները, որի արդյունքում՝ վերջինս սկսեց արգելափակել այն ալիքները, որոնցում տարածվում էր ատելության խոսք[75]։

Ծրագրային հավելվածներից բացի որոշակի վերահսկողական սահմանափակում առկա է նաև հոսթինգային ծառայությունների ոլորտում։ Նշենք, որ հոսթինգային ծառայություններ են հանդիսանում կազմակերպությունների կողմից համացանցում օգտատիրոջ տվյալների պահպանման ծառայությունները։ Հաշվի առնելով այդ ծառայությունների բազմազանությունը և դրանց ընդգրկվածությունը կիրառելի է ծրագրային հավելվածների վերաբերյալ վերոգրյալ գործիքակազմերը. օպերատորների և դոմենային տիրույթի վերաբերյալ կարգավորումները այստեղ նույնպես կիրառելի չեն։

Այսպիսով, վերլուծելով վերոգրյալը, կարող ենք արձանագրել, որ ատելության խոսքի կարգավորման դասական կառուցակարգերը սոցիալական ցանցերում և ծրագրային հավելվածներում հիմնականում կիրառելի չեն։ Սակայն որոշ

[75] «Telegram»-ի համահիմնադիր Պավել Դուրովի իր թելեգրամյան ալիքում անդրադարձել է «Telegram»-ի կողմից ատելության խոսքի դեմ պայքարին, որպես առիթ նշելով «Google play» և «Apple store»-ի կողմից թարմացումների սահմանափակումը։ հասանելի է՝ https://t.me/durov_russia/30

սոցիալական ցանցեր ունեն իրենց ներքին օգտագործման կանոնները, որոնցում մշակվել են և շարունակվում են կատարելագործվել ատելության խոսքի կարգավորման վերաբերյալ կանոնակարգեր, որոնք կարող են կիրառելի լինել գլոբալ առումով՝ չսահմանափակվելով կոնկրետ երկրների օրենսդրությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը չունի ատելության խոսքի կարգավորման նպատակով իրավական ազդեցության միջոցներ սոցիալական ցանցերի և ծրագրային հավելվածների նկատմամբ, կարևորվում է արդեն իսկ առկա կառուցակարգերի ակտիվ օգտագործումը, որպես մոդել՝ ատելության խոսքի կանխարգելման նպատակով:

3. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԴՈՄԵՆԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Հետազոտության հաջորդ թեման վերաբերվում է Հայաստանի դոմենային տիրույթում ատելության խոսքի կանխարգելմանը: Դոմենային տիրույթը որպես առանձին իրավակարգավորումների համալիր կարևոր նշանակություն ունի սույն հետազոտության համար, քանի որ հանդիսանում է այսպես կոչված «բանալին» ինտերնետային կայքերում տեղեկատվության հասանելիության համար: Ի տարբերություն էլեկտրոնային հաղորդակցության, ոլորտը որևէ ազդեցություն չունի համացանցի կոնտենտի բովանդակության հետ, այլ միայն կառավարում է կոնտենտի հասանելիությունը ապահովող դոմենային տիրույթը: Այսինքն, անկախ դոմենի առկայությունից, կոնտենտը կարող է գոյություն ունենալ, սակայն հասանելի չլինել լայն հասարակությանը, իսկ հեռահաղորդակցության ոլորտը ապահովում է կոնտենտի հասանելիությունը համացանցի միջոցով:

Հետազոտական կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ այս ոլորտը էլեկտրոնային հաղորդակցության այն հազվադեպ ոլորտներից է, որտեղ պետությունը իրավական կարգավորում չի նախատեսել: Մենք վստահությամբ կարող ենք ասել, որ հայկական դոմենային տիրույթի առանցքային դերակատարները (.am և .հայ դոմեններ) տեղեկությունների, տվյալների հաղորդակցման իր աշխարհագրական սփռվածությամբ, բովանդակային բազմազանությամբ ու հասարակական լայն մատչելիությամբ կարող են դասվել որպես հանրային նշանակության ծառայություններ մատուցողներ՝ հատկապես հաշվի առնելով, որ իրականացնում են Հայաստանում գործող տասնյակ հազարավոր կայքերի (այդ թվում պետական, իրավապահ և անվտանգային) դոմենային տիրույթների կառավարումը:

3.1. Դոմենային տիրույթի վերաբերյալ պետական հայեցակարգերը.

Հայաստանի կառավարության կողմից դեռևս 2014 թվական «Ինտերնետ կառավարման սկզբունքներին հավանություն տալու մասին» քաղվածքով [76] սահմանված ինտերնետ կառավարման սկզբունքներում հաստատվել է դոմենային անվանումների լայն տարածման և դոմենային անվանումների համակարգի անվտանգության ընդլայնման (DNSSEC) արձանագրության տարածման սատարման սկզբունքները։

Կառավարությունը, որպես դոմենային անվանումների լայն տարածման նկարագիր սահմանել է ներքոգրյալ 5 նպատակները.

1) Դոմենային անվանումների գրանցման և օգտագործման համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ որպես համահայկական համագործակցության ցանցի ստեղծման հիմք՝ նվազեցնելով վարչարարությունը և ապահովելով նվազագույն արգելքներ:

2) Բարենպաստ պայմանների ստեղծում Հայաստանի Հանրապետության տարածքում կայքերի տեղակայման (hosting) համար՝ որպես համահայկական համագործակցության ցանցի հիմքային հանգույցների բազմություն՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության մասնագետների ներգրավվածությունը այդ հանգույցների ստեղծման, պահպանման, անվտանգության ապահովման, զարգացման և նորամուծությունների կիրառման գործընթացում:

3) Հանրության լայն շերտերի ներգրավմամբ պետական-հասարակական համագործակցության շրջանակներում դոմենային անվանումների նպատակային օգտագործում՝ բացառելով դրանց ոչ պատշաճ օգտագործումը սահմանադրական կարգի տապալմանը ուղղված հանրային կոչերի, ահաբեկչության, ազգամիջյան գժտություն սերմանելու, պոռնկագրական նյութերի տարածման և թրաֆիկինգի համար: Լայնորեն օգտագործել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային համագործակցության, տեղեկատվության փոխանակման միջոցները նման մարտահրավերների դեմ պայքարի ընթացքում:

4) Դոմենային անվանումների հետ կապված վիճահարույց խնդիրների լուծումների մշակում՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության վրա, դատական կամ արբիտրաժային որոշումների հիման վրա՝ չկիրառելով վարչարարական սահմանափակումներ:

[76] «Ինտերնետ կառավարման սկզբունքներին հավանություն տալու մասին» Կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի թիվ 34 արձանագրությունը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=92456

5) Դոմենային անվանումների ազգային այբուբենով համակարգի ներդրում, ինչը հանդիսանում է դոմենային անվանումների համակարգման քաղաքականության կարևոր նպատակ: Այդ համակարգը նպատակահարմար է լայնածավալ կիրառել լատինատառ դոմենային անվանումների օգտագործմամբ Հայաստանի Հանրապետության հիմնական տեղեկատվական ռեսուրսների ձևավորումից հետո՝ ինչը թույլ կտա պատշաճ կերպով ներկայացնել Հայաստանի Հանրապետությանը համաշխարհային Ինտերնետ հանրությանը, որն այսօր օգտագործում է հիմնականում, լատինատառ ստեղնաշարեր:

Հայեցակարգում սահմանվել է, որ ինտերնետ կարգավորումը նպատակահարմար է կիրառել միայն այն դեպքում, երբ առանց կարգավորման վտանգ է սպառնում հայկական ինտերնետ միջավայրի գոյությանը: Նշենք, որ ինտերնետ միջավայր ասելով նկատի է առնվում Հայաստանի դոմենային տիրույթը, դրա բովանդակությունը և այլն:

Պետությունը, որպես հայեցակարգ արձանագրել է պետական-մասնավոր հատվածի համագործակցությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որպեսզի կանխվի ահաբեկչության, սահմանադրական կարգի տապալմանն ուղղված հանրային կոչերի, պոռնկագրության, թրաֆիքինգի, ազգամիջյան գժտության քարոզման նպատակներ հետապնդող էլեկտրոնային հաղորդագրությունների և վնասաբեր ծրագրերի տարածումը հայկական դոմենային տիրույթում:

Որպես պետական-մասնավոր հատվածի համագործակցություն որոշվել է դիտարկել Ինտերնետ Կառավարման Հանձնաժողովը (ԻԿՀ), որի գործունեության, լիազորությունների և իրականացված գործառույթների վերաբերյալ մանրամասն վերլուծություն ենք իրականացրել վերոգրյալում:

Այսպիսով, պետք է արձանագրել հետևյալը. **պետական միջամտության և կարգավորման տեսանկյունից հայկական դոմենային տիրույթը արմատապես տարբերվում է էլեկտրոնային հաղորդակցության ցանցից: Էլեկտրոնային հաղորդակցության ցանցում պետությունը իր կարգավորման մեխանիզմները ներդրել է քաղաքականություն մշակող նախարարության, կարգավորող մարմնի՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և վերջինիս տրված լիցենզիաների միջոցով, իսկ հայկական դոմենային տիրույթում պետությունը, բացառությամբ իրավաբանական պարտադիր ուժ չունեցող հուշագրերի, չունի որևէ միջամտության օղակ, բացառությամբ տնտեսական մրցակցության պաշտպանության** (Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառույթների շրջանակներում) գործիքակազմի: Այնինչ դոմենային ոլորտը էական և կարևոր նշանակություն ունի ատելության խոսքի կարգավորման շրջանակներում:

3.2. ԴՈՄԵՆԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ և ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Այս բաժնում ուսումնասիրում ենք հայկական դոմենային տիրույթի դերակատարներին և վերլուծում ենք նրանց գործառույթների և ատելության խոսքի կանխարգելման միջև հնարավոր կապը: Դոմենային տիրույթում կոնտենտի (բովանդակության) վերաբերյալ վերլուծության ընթացքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ դոմենային հասցեների տրամադրման, ռեգիստրի վարման և ընդհանրապես օգտագործման ընթացքում առկա չէ ծրագրային կամ տեխնիկական կապ դոմենի և կայքում առկա տեղեկատվության միջև. դոմենը հանդիսանում է զուտ «բանալի» բաժանորդի կողմից կայքում առկա տեղեկատվությանը հասանելիություն ապահովելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դոմենային տիրույթը նաև հնարավարություն է տալիս դոմենը արգելափակելով անհասանելի դարձնել էլեկտրոնային հրապարակված տեղեկատվությունը, այդ թվում վիճելի կոնտենտը, դոմենային տիրույթը նույնպես դարձել է հետազոտության առարկա:

Միջազգային մակարդակում դոմենային տիրույթների կառավարման պատվիրակումը իրականացվում է «Internet Corporation for Assigned Names and Numbers» (կրճատ՝ ICANN) [77] միջազգային կազմակերպության կողմից: ICANN կազմակերպությունը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել է դոմենային և IP հասցեների և ինտերնետի տարածվածության հետ կախված հարցերի կարգավորման նպատակով: Պաշտոնապես 2016թ. հոկտեմբերի 1-ից այդ կազմակերպությունը համարվում է անկախ միջազգային կազմակերպություն [78]: Հայաստանի Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հանդիսանում է այդ կազմակերպության «Կառավարական խորհրդատվարական կոմիտեի» անդամ [79]: Հայաստանի Հանրապետության, ի դեմս իրավասու մարմնի իրավանախորդ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «ICANN» կազմակերպության միջև 2017թ. դեկտեմբերի 17-ին ստորագրվել է հուշագիր[80]:

Նախարարության և «ICANN» կազմակերպության միջև կնքված հուշագրում նախարարության կողմից կոնտակտային անձ է համարվում «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ն (կրճատ՝ ԻՀ): ԻՀ-ն հասարակական կազմակերպություն է, որին

[77] ICANN-ի պաշտոնական կայքը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.icann.org/

[78] Հղումը ստորև՝ https://www.icann.org/news/blog/cheers-to-the-multistakeholder-community

[79] https://gac.icann.org/?language_id=7

[80] Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և ICANN կազմակերպության միջև 2017թ. դեկտեմբերի 17-ին ստորագրված հուշագիր, հասանելի է՝ https://www.icann.org/en/system/files/files/mtcit-mou-19dec17-en.pdf

«ICANN» կազմակերպությունը պատվիրակել է կառավարել «.am» և «.հայ» վերին մակարդակի դոմենային անունների տիրույթները: «ICANN» կազմակերպության կողմից ԻՀ-ի պատվիրակման հարաբերությունները կարգավորվում են կողմերի միջև կնքված 25.06.2015թ. փաստաթղթով [81] : ԻՀ-ի կանոնադրական գործունեության առարկան «.am» և «.հայ» վերին մակարդակի դոմենային անունների տիրույթների դա կառավարելն է, իսկ նպատակը Հայաստանում ինտերնետի զարգացմանը նպաստելն է[82]: Նշենք նաև, որ ԻՀ-ն հանդիսանում է նաև Council of European National Top-Level Domain Registries (CENTR) միջազգային կազմակերպության անդամ [83] , որը հանդիսանում է Եվրոպայի վերին մակարդակի ազգային դոմենային տիրույթների եվրոպական խորհուրդը:

Հայաստանի Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ԻՀ-ի միջև հարաբերությունները կարգավորվում են 2009թ. հունիսի 11-ին կնքված համագործակցության համաձայնագրով[84]:

ԻՀ-ը հանդիսանալով «.am» և «.հայ» դոմենների կառավարիչը «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ին [85] պատվիրակել է իրականացնել ներքոգրյալ գործառնությունները.

- Հանդիսանալ «.am» և «.հայ» վերին մակարդակի դոմենային անունների տիրույթների ռեգիստրի առևտրային և տեխնիկական օպերատոր.
- Մատուցել ռեգիստրարներին Ռեգիստրի տվյալների շտեմարանին առցանց հասանելիության ապահովման ծառայություններ.
- Ապահովել «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում ծրագրային-ապարատային (ցանցային) համալիրի անխափան աշխատունակությունը.
- Տարածել Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված դոմենային անուններն ինտերնետում օգտագործելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը.

---

[81] Հասանելի է՝ https://www.isoc.am/file_manager/pdf/isoc.pdf

[82]«ISOC»-ի կանոնադրությունը, հասանելի է՝ https://www.isoc.am/file_manager/kanonadrutyun/Kanonadrutyun%2020.07.20.pdf

[83] Council of European **National** Top-Level Domain **Registries (CENTR), հասանելի է՝** https://www.centr.org/about/about-centr.html.

[84] Համագործակցության համաձայնագիր՝ https://www.isoc.am/file_manager/pdf/naxararutyun.pdf

[85] Պաշտոնական կայք, հասանելի ՝ https://www.itc.am/

«Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ն առևտրային շահույթ հետապնդող կազմակերպություն է, որը Տնտեսական մրցակցության պաշտպանության 2009թ. որոշմամբ ճանաչվել է ԻՀ-ի հետ փոխկապակցված կազմակերպություն. վերջինիս համաձայն հանդիսացել է «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի հիմնադիրը[86]: Այժմ ԻՀ-ն քննարկում է «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի լուծարման հարցը, որի համաձայն՝ վերոգրյալ գործառույթները, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունը կիրականացնի արդեն ԻՀ-ն[87]:

Ռեգիստրի տեխնիկական օպերատորը հանդիսանում է Հայաստանի ցանցային տեղեկատվական կենտրոն (AM NIC), ով հանդիսանում է Ռեգիստրի կողմից լիազորված կազմակերպություն, որն ապահովում է «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում ծրագրային (ցանցային) համալիրի անխափան աշխատունակությունը, ինչպես նաև տարածում է Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված դոմենային անուններն ինտերնետում օգտագործելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը[88].

Դոմենային տիրույթում հաջորդ մասնակիցների խումբն է ռեգիստրարները, որոնք «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա «.am» և (կամ) «.հայ» դոմենային անունների տիրույթներում մատուցում է դոմենային անունների գրանցման ծառայություններ (իրականացնում է դոմենային անվան գրանցում և վերագրանցում Ռեգիստրի տվյալների շտեմարանում): Սույն հետազոտությունը կազմելու դրությամբ ռեգիստրարների թիվը կազմում է 48-ը[89]:

Դոմենային տիրույթի վերջին մասնակիցը գրանցորդն է՝ (Domain name holder)՝ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտ, որը ռեգիստրարի միջոցով Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցել է «.am» կամ «.հայ» դոմենային անուն:

Վերոգրյալից ելնելով, դոմենային տիրույթի դերակատարների կառուցվածքը ավելի պատկերավոր դարձնելու համար, կարող ենք ուսումնասիրել ներքոգրյալը.

---


[86] Հանձնաժողովի 2009թ. մայիսի 13-ի թիվ 50-Ա որոշում: Հայտարարությունը հասանելի է՝ http://www.competition.am/index.php?page=&menu=173&newsID=845&lng=1

[87] Հասանելի է՝ https://www.isoc.am/file_manager/arzanagrutyun/2019/varchutyun/N%2019.05.pdf

[88] Հասանելի է՝ https://www.amnic.net/

[89] Ռեգիստրների ցուցակ, հասանելի է՝ https://www.amnic.net/directory/registrars/

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պետական մարմինները որևէ վերահսկողություն չունեն դոմենային տիրույթի նկատմամբ: Ուսումնասիրությունը



ցույց է տալիս, որ դոմենային տիրույթում կառավարիչները հիմնականում հանդես են գալիս հասարակական կազմակերպություններ, շատ նվազ քանակությամբ դեպքերում հանդես են գալիս պետական մարմիններ[90] (օրինակ՝ ԱՄԷ, Ֆոկլենդյան կղզիներ և այլն) ուստի Հայաստանում դոմենային տիրույթը ԻՀ-ի կողմից կառավարվելու լիազորությունը համահունչ է ձևավորված պրակտիկային:

Կարող ենք արձանագրել, որ հայկական դոմենային տիրույթը գործում է ինքնակարգավորման եղանակով, մասնավորապես՝ պատվիրակման և քաղաքացիաիրավական այլ գործարքների հիման վրա: Հաջորդ բաժնում կքննարկենք այն հարցը, թե արդյո՞ք դոմենային տիրույթում գործող իրավակարգավորման

[90] Ազգային ռեգիստրարների ցանկ՝ https://www.iana.org/domains/root/db

մեխանիզմներ բավարար են կամ արդյունավետ են ատելության խոսքի կանխարգելման համար:

3.3. ԴՈՄԵՆԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Վերոգրյալ բաժնում վերլուծելով տիրույթի դերակատարներին և վերջիններիս գործառույթներին պարզեցինք, որ այդ հարաբերություններում գրեթե առկա չէ պետական կառավարում: Ուստի սույն ենթաբաժնում կքննարկվեն ու կներկայացվեն այն կարգավորումները, որոնք առկա են ոլորտի մասնակիցների միջև և վերաբերում են ատելության խոսքի կանխարգելմանը:

Ուսումնասիրելով ԻՀ-ի հիմնադիր փաստաթղթերը, այդ թվում՝ կանոնադրությունը [91], պարզ է դառնում, որ այդ իրավական փաստաթղթում բացակայում են մարդու իրավունքների վերաբերյալ կարգավորումներ: Սակայն առկա են սկզբունքներ, որոնց հիման վրա կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը: Այդ սկզբունքներից է խտրականության բացառումը:

ԻՀ-ի գործադիր տնօրենի կողմից 2017թ. հոկտեմբերի 23-ի թիվ 33Լ հրամանով հաստատվել է ««.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման քաղաքականությունը» [92] (այսուհետ՝ քաղաքականություն): Քաղաքականության մեջ սահմանված են մի շարք կարգավորումներ, որոնք կարևոր են ոլորտի վերաբերյալ ընդհանուր վերլուծություններ և եզրակացություններ կատարելու համար:

Նշենք, որ քաղաքականության 11-րդ կետում սահմանվում է հակախտրականության և ատելության խոսքի կանխարգելման վերաբերյալ նորմ, որը ողջունելի քայլ է ոլորտի կարգավորման շրջանակներում, այսպես.

> «11. Արգելվում է գրանցել իրենցից մարդու սեռով կամ ռասայով, կամ մաշկի գույնով, կամ էթնիկ կամ սոցիալական ծագումով, կամ գենետիկական հատկանիշներով, կամ լեզվով, կամ կրոնով, կամ տարիքով, կամ այլ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված խտրականություն ներկայացնող, կամ մարդու արժանապատվությունն այլ կերպ նվաստացնող, կամ բռնություն կամ պատերազմ քարոզող, կամ քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածող, կամ հայհոյանք ներկայացնող, կամ բարոյականության սկզբունքներին այլ կերպ հակասող, կամ հանրային շահին չհամապատասխանող դոմենային անուններ»:

[91] «ISOC»-ի կանոնադրությունը, հասանելի է՝ http://bit.ly/3oeAHt7.

[92] Դոմենային անունների տիրույթներում դոմենային անունների գրանցման քաղաքականություն, հասանելի է՝ https://www.isoc.am/file_manager/pdf/Policy_AM_new.pdf

Վերոգրյալ նորմի վերլուծությունից բխում է, որ Քաղաքականությամբ սահմանվել է գրանցման արգելք այնպիսի դոմենային անվանումների համար, որոնք.

- Իրենցից ներկայացնում են մարդու սեռով կամ ռասայով, կամ մաշկի գույնով, կամ էթնիկ կամ սոցիալական ծագումով, կամ գենետիկական հատկանիշներով, կամ լեզվով, կամ կրոնով, կամ տարիքով, կամ այլ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված խտրականություն.
- մարդու արժանապատվությունն այլ կերպ նվաստացնող, կամ բռնություն կամ պատերազմ քարոզող, կամ քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր ***<u>տարածող.</u>***
- հայհոյանք ներկայացնող.
- բարոյականության սկզբունքներին այլ կերպ հակասող.
- հանրային շահին չհամապատասխանող.

Թեկուզև առկա չեն տեղեկություններ վերոգրյալ արգելքի փաստացի կիրառման վերաբերյալ, բայցևայնպես հիշյալ կարգավորումները կարևոր են ոլորտի կարգավորման տեսանկյունից։ Հիշյալ արգելքը վերաբերում է գրանցման գործընթացին, այսինքն՝ այն դեպքերին, երբ տեղի է ունենում գրանցորդի (Domain name holders) կողմից իր նախընտրած դոմեն անունի գրանցումը ռեգիստրարների էլեկտրոնային հարթակում կամ վերջիններիս հետ պայմանագրային բնույթի տեսքով։

Ուսումնասիրելով համացանցում առկա դոմենային գրանցման ընթացակարգերը, պարզ է դառնում, որ համակարգի համար որևէ զտում առկա չէ հիշյալ քաղաքականության կատարման ապահովման համար։ Մասնավորապես հնարավոր է գրանցել գրեթե ցանկացած[93] դոմենային հասցե առանց անվանման ֆիլտրացիայի։

Հաջորդիվ ներկայացնում ենք մեր հետազոտությունը առ այն, թե ի՞նչ կարգավորումներ են առկա, երբ ատելության խոսքի հարուցումը տեղի է ունեցել դոմենային անվան գրանցումից հետո

Քաղաքականության 21-րդ կետը սահմանում է հետևյալը.

«21. (....) Ընդ որում, դոմենային անունը չի կարող օգտագործվել՝

1) պոռնոգրաֆիկ նյութերի տարածման նպատակով,
2) Հայաստանի Հանրապետության պետական սահմանների պաշտպանությանը, ներքին կայունությանը, ազգային անվտանգությանը վնասող և (կամ) Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված նյութերի տարածման նպատակով,

[93] Բացառություն է այն դեպքերը, երբ ԻՀ-ի կողմից որոշված որոշակի դոմենային հասցեներ ենթակա չեն գրանցման դրանց նշանակության համապատասխան։

3) հանցագործության կատարման կոչեր պարունակող նյութերի տարածման նպատակով,

4) սպամի (spam) տարածման նպատակով,

5) այնպիսի ապրանքների և ծառայությունների վաճառքի նպատակով, որոնց շրջանառությունը կամ ազատ շրջանառությունն արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ Գրանցորդն ունի նման ապրանքների վաճառքի կամ ծառայությունների մատուցման թույլտվություն),

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված նյութերի տարածման նպատակով,

7) թրաֆիքինգի իրականացման կամ դրա իրականացմանն որևէ կերպ աջակցելու նպատակով:

Այսպիսով, դոմենային ոլորտում առկա քաղաքականության հիման վրա պետք է եզրակացնել, որ դոմենի գրանցման և այնուհետև դրա օգտագործման ընթացքում առկա է **«.am» և «.հայ» դոմենային անունների կառավարիչ ԻՀ-ն-ի կողմից մշակված քաղաքականություն, որով սահմանվել է ատելության խոսքի կանխարգելման որոշակի կարգավորումներ: Սակայն մեզ չհաջողվեց գտնել տեղեկություններ դրանց կիրառության մասին** :

Ավելին, նույն քաղաքականության 45-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) ենթակա է չեղյալ ճանաչման Ռեգիստրի կողմից՝ 6) բացառիկ դեպքերում՝ սույն քաղաքականության խախտման համար»:

Կան բավարար իրավական հիմքեր «.am» և «.հայ» դոմենային անունների կառավարիչ ԻՀ-ի կողմից քաղաքականության մեջ նշված արգելքների վերաբերյալ քննություն, անհրաժեշտության դեպքում՝ կոնկրետ միջամտություն իրականացնելու համար՝ կոնտենտի արգելափակման, հեռացման և այլ անհրաժեշտ գործողություններ:

ԻՀ-ի քաղաքականության 42-րդ կետում սահմանվել է, որ չի հանդիսանում պատասխանատու ռեգիստրարների գործողությունների համար և պատասխանատու չէ դոմենային անվան միջոցով տարածվող նյութերի բովանդակության (content) համար, սակայն վերջինս կարող է բողոքների կամ հայտնաբերված փաստերի հիման վրա իրականացնել քննություն, որի իրականացման համար իրավասու է ընդունել իրավական ակտեր:

Նաև հավելենք, որ քաղաքականության մեջ Ռեգիստրի կողմից Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան գրանցման մերժման հիմքերում բացակայում են ատելության խոսքի հարուցման դեպքերը, ուստի Առաջարկվում է կատարել դրա վերաբերյալ լրացումներ Քաղաքականության մեջ:

Հարկ է նկատել նաև, որ ԻՀ-ի պաշտոնական կայքում [94] ավելացվել է «Անվայել բովանդակության առցանց դիմում» անվանմամբ հավելված, որի միջոցով կայքը տեղեկացնում է, որ քաղաքացիները կարող են ներկայացնել անվայել բովանդակությամբ կայքի տվյալներ ԻՀ-ի քննության համար: Գտնում ենք, որ այս հավելվածով ԻՀ-ն փորձում է իրականացնել Քաղաքականության մեջ նշված իր պարտավորությունները, սակայն մեզ չհաջողվեց գտնել տվյալներ, թե արդյոք դիմումներ ստացվել են թե ոչ:

Դոմենային տիրույթի տեխնիկական և առևտրային օպերատոր «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի (ITC) կողմից ռեգիստրարների հետ կնքվող պայմանագրի նախագծում առկա են հետևյալ սահմանումները.

> Կատարողը իրավունք է վերապահում չմատուցել կամ միակողմանիորեն դադարեցնել Ծառայությունը մեկ կամ մի քանի դոմենային անունների համար հետևյալ դեպքերում.
>
> ● Դոմենային անվան գրանցումը կամ օգտագործումը հակասում է ՀՀ օրենսդրությանը:
>
> ● Առկա է ՀՀ դատական մարմնի որոշում, որը դադարեցնում է տվյալ դոմենային անվան գրանցումը կամ օգտագործումը որևէ կերպով:
>
> ● Առկա է ՀՀ դատական մարմնի որոշում որով տվյալ դոմենային անվան գրանցման կամ օգտագործման իրավունքը տրամադրված է այլ անձի:
>
> ● Դոմենային անունը օգտագործվել է, մասնավորապես, չպահանջված էլեկտրոնային հաղորդակցություն (սպամի) տարածելու համար, կամ այլ անօրինական նպատակներով, ազգամիջյան, կրոնական կամ էթնիկ չափանիշներով գժտության հրահրման համար, միջազգային ահաբեկչության խթանման և ուժի կիրառման քարոզչության համար, պոռնկագրության տարածման և թրաֆիքինգի համար:
>
> ● Դոմենային անվան գրանցման համար տրամադրված փաստաթղթերը կամ տվյալները կեղծ են կամ թերի:
>
> ● Դոմենային անվան մեջ օգտագործված է գռեհիկ բառապաշար:

Ընդ որում, «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ն իրավունք ունի Դադարեցնել դոմենային անվան համար ծառայությունը, իր կողմից որոշված ժամկետով կասեցնելով դրա հետագա օգտագործումը, եթե գրանցումը կատարվել է «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության Կանոնների, ՀՀ օրենսդրության և (կամ) սույն Պայմանագրի խախտմամբ, և (կամ) հակասում է ԷյԴիԱր Կենտրոնի Մեդիացիայի և Արբիտրաժի կայացված որոշումներին, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան դոմեն անվանման տակ գործող կայքերում

[94] Հասանելի է՝ https://www.isoc.am/hy/improper-content/

տեղադրված են տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությանը և (կամ) որոնք ուղղված են՝

- Որևէ ռասայական, էթնիկ կամ կրոնական խմբի դեմ թշնամանքի հրահրմանը.
- Ահաբեկչական և ծայրահեղական ուղղության գործունեության խթանմանը.
- Թմրանյութերի, դրանց պատրաստման և շրջանառության մեթոդների տարածմանը.
- Պոռնոգրաֆիկ նյութերի գովազդմանը և տարածմանը.
- Անօրինական միգրացիայի և մարդկանց առևտրի իրականացմանը.
- Ֆինանսական հանցագործությունների կազմակերպմանը:

Նշենք, որ ռեգիստրարների պայմանագրերի ուսումնասիրությունից բխում է, որ վերոգրյալ կարգավորումները և սահմանումները ավարտվում են «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից կնքվող պայմանագրերով, այսինքն՝ սովորաբար հիշյալ կանոնները չեն տարածվում ռեգիստրարների կողմից գրանցորդների (Domain name holders) վրա: [95] Այսպիսով՝ առկա է կարգավորումների ընդհատում, որը սկիզբ է առել ԻՀ-ից և ավարտվել է «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից կնքվող պայմանագրերում: Ավելին, «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից կնքվող պայմանագրերում բացակայում է կանոն, համաձայն որի հիշյալ կարգավորումները պետք է նաև սահմանված լինեն գրանցորդների (Domain name holders) հետ կնքվող պայմանագրերում:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ հայկական տիրույթում դոմենային անունների գրանցումները իրականացվում են առանց նկատելի ֆիլտրացիայի, ուստի հիշյալ կարգավորումները փաստացի կիրառություն չեն ստացել կամ եթե նույնիսկ ստացել են, դրա վերաբերյալ տեղեկատվություն հասանելի չէ:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է քաղաքականությամբ և «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից կնքվող պայմանագրերում նշված արգելքները և սահմանումները տեղ գտնեն նաև գրանցորդների հետ կնքվելիք պայմանագրերում, որի արդյունքում ապահովված կլինի կարգավորումների գործնական կիրառության բավարար իրավական հիմքերը:

4. ԱՄՓՈՓՈՒՄ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[95] Օրինակը հասանելի է՝ https://internet.am/special-terms

Սույն բաժնում կներկայացվի հետազոտության չորրորդ բաժնի ամփոփումը և առաջարկությունները։ Անդրադարձ է կատարվել թե ի՞նչ շրջանակներում է իրականացվել համացանցում ատելության խոսքի կարգավորման սույն հետազոտությունը, դրանց ծավալը, այն սկզբունքները որոնք հիմք են հանդիսացել առաջարկությունները կազմելիս, ինչպես նաև այն ռազմավարությունը, որը առաջարկվում է ներդնել

4.1. ԱՄՓՈՓՈՒՄ

Համացանցում ատելության խոսքի կարգավորման մեր կողմից առաջարկվող հիմնական հայեցակարգը կայանում է հետևյալում. **անօրինական բովանդակությամբ (ատելության խոսքի) կոնտենտի կանխարգելման և արգելման միջոցներ ձեռնարկելու առաջնահերթությունը պատկանում է համացանցում ինքնակարգավորման մեխանիզմներին։ Կարգավորման մեխանիզմները չեն մասնակցում կոնտենտի կանխարգելման ու արգելման ընթացակարգերին։ Սակայն ինքնակարգավորման մարմինները հաշվետու են կարգավորող մարմիններին ինքնակարգավորման հիմքերի ու ընթացակարգերի ստանդարտների վերաբերյալ, օրինակ՝ բողոքների վիճակագրության, բողոքարկման ընթացակարգերի, կիրառված չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ՝ առանց կոնկրետ գործով քննություն իրականացնելու իրավասության։**

Վերը նշվածը **ինքնակարգավորում՝ կարգավորման մեջ** ձևաչափի արդյունավետ մոդել է։ Հաշվի առնելով ոլորտում արդեն առկա ենթակառույցները, որի պայմաններում չի պահանջվելու ստեղծել նոր մարմիններ ու կառուցակարգեր, նշված ձևաչափի գործարկման հնարավորությունը առավել կանխատեսելի ու դյուրին է։

Հաշվի առնելով վերը նշված հայեցակարգը, առաջին բաժնում անդրադարձ ենք կատարել ատելության խոսքի կանխարգելման վերաբերյալ տեղեկատվական անվտանգության հայեցակարգերին, վերլուծելով ընդունված իրավական ակտերը և դրանցում սահմանված կանոնների գործնական կիրառմանը։ Արձանագրել ենք Ինտերնետ կառավարման համաժողովի (ԻԿՀ-ի) դերակատարումը և գործառույթները ոլորտում, ինչպես նաև՝ փաստացի իրականացված աշխատանքը և չիրագործված հնարավորությունները։

Երկրորդ բաժնում ուսումնասիրել ենք ատելության խոսքի կարգավորման կարևոր օղակներից մեկը՝ հեռահաղորդակցության ոլորտը։ Բաժնում ներկայացրել ենք ինտերնետ տիրույթի իրավական կարգավորումները, կառուցվածքը, դերակատարները։

Որպես ոլորտի ինքնակարգավորող մարմին վերլուծել ենք Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (կարգավորողի) գործիքակազմը և

միջամտության ծավալը: Այնուհետև առանձին-առանձին անդրադարձել ենք օպերատորների, ծառայություններ մատուցողների և բաժանորդների դերակատարմանը ատելության խոսքի կարգավորման ոլորտին: Որպեսզի բացահայտվի կոնտենտի հնարավոր միջամտության և վերահսկողության սահմանները, քննել ենք առկա ժամանակակից տեխնիկական հնարավորությունները: Բաժնի վերջնամասում անդրադարձել ենք սոցիալական ցանցերում ատելության խոսքի կանխարգելմանը և առկա գործիքակազմերը:

Երրորդ՝ վերջին բաժնում անդրադարձել ենք դոմենային տիրույթին, մասնավորապես վերլուծել ենք դրա վերաբերյալ պետական հայեցակարգերը, դոմենային տիրույթի դերակատարներին և վերջիններիս գործառույթներին:

Սույն բաժնում անդրադարձ կկատարենք հետազոտության արդյունքների հիման վրա կազմված առաջարկություններին, որոնք ուղղված են որոշակիորեն կարգավորելու Հայաստանում ատելության խոսքի կանխարգելման կառուցակարգերը:

Առաջարկություններ ներկայացնելիս հիմնականում քննվել է հետևյալ հարցերը. ի՞նչ ստանդարտներ պետք է կիրառվի կոնտենտի մոդերացիայի և վերահսկողության նկատմամբ, արդյո՞ք պետությունը պարտավոր է կարգավորել մասնավոր մոդերացիան և եթե այո, ապա ի՞նչ կարգով պետք է դա իրականացնի: Ի՞նչ ստանդարտներ կարող են կիրառվել, որպեսզի ապահովի պետության կողմից հաշվետվողականությունը, ինչպես նաև չեզոքացվի խոսքի ազատության սահամանափակման վտանգները: Ի՞նչ մեխանիզմներ կարող են գոյություն ունենալ հեռահաղորդակցության ոլորտում իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Կառուցակարգերի ներդրումը ինքնին կարող է ենթադրել որոշակի իրավունքների սահմանափակումներ, որոնք պետք է ձևակերպվեն այնպես, որպեսզի ապահովվի սահմանափակման իրավաչափության պահանջը: Այդպիսով, առաջադրելով ներքոգրյալ սահմանափակման չափանիշները, նպատակ ենք հետապնդում որոշելու այն սկզբունքները, որոնց պահպանման դեպքում միայն սահմանափակումը կարող է համարվել իրավաչափ.

<u>Օրինականություն.</u> ցանկացած սահմանափակում պետք է «սահմանված լինի օրենքով»: Մասնավորապես սահմանափակումները պետք է ընդունվեն Սահմանադրությամբ և օրենադրությամբ սահմանված կարգով, այնպես, որպեսզի թույլ տան դրա հասցեատիրոջը բավական հստակությամբ տարբերակի սահմանափակման ծավալը և համապատասխանեցնի իր վարքագիծը նորմերին: Օրենքները պետք է լինեն այնպիսի հստակությամբ, որպեսզի անձը կարողանա տարբերակել օրինական և ոչ օրինական խոսքը: Օրինականության երաշխավորումը պետք է ապահովվի դատական և արտադատական իրավունքների պաշտպանության արդյունավետ

միջոցներով:

Համաչափություն. Կիրառվող սահմանափակումները պետք է համապատասխանեն Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին, մասնավորապես սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Լեգիտիմություն և անհրաժեշտություն. Որպեսզի ցանկացած սահմանափակում լինի լեգիտիմ և անհրաժեշտ, պետք է այդ սահմանափակումը պաշտպանի միայն այն շահերը, որոնց համար սահմանված է:

Հարկ է նշել, որ վերոգրյալ չափանիշները նաև կիրառելի են օրենսդրական կամ իրավական մակարդակում առաջարկները կիրառելիս, ինչպես նաև այդ իրավական ակտերը մեկնաբանելիս: Միայն նմանօրինակ կառուցակարգերի ներդրմամբ և կիրառմամբ հնարավոր է ապահովել խոսքի ազատության սահմանափակման իրավաչափությունը և անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում:

Սույն հետազոտության նախաբանում նշվեց, որ քննվելու են ոլորտի կարգավորման և ինքնակարգավորման տարբեր մեխանիզմներ՝ շեշտը դնելով ինքնակարգավորման վրա: Սակայն ժամանակակակից գիտական վերլուծություններում արդեն իսկ առկա է մտահոգություններ ոչ պետական լիազորությամբ օժտված անձանց կողմից մարդու իրավունքների նկատմամբ միջամտությունների համաչափության և իրավաչափության վերաբերյալ [96] ուստի առկա է որոշակի վերապահումներ ոլորտը ամբողջությամբ ինքնակարգավորման դաշտ փոխանցելու հետ կապված: Մասնավորապես՝ ինքնակարգավորման մեխանիզմների ներդրմամբ արդեն իսկ նկատվում է այն իրավիճակը, երբ մասնավոր կազմակերպությունները կարող են սահմանափակեն օրինական կոնտենտը, որպեսզի ընդհանուր առմամբ խուսափեն պատասխանատվությունից:

Արագ և ինքնաբերաբար կոնտենտի արգելափակումը կամ վերացումը կարող է հանգեցնել նոր խնդիրների առաջացմանը (օրինակ՝ հեղինակային իրավունքի հետ կապված): Ընդհանուր առմամբ որոշակի բարդ բովանդակությամբ հարցերը պետք է, որպես կանոն, քննվեն պետական մարմինների կողմից, այլ ոչ թե մասնավոր

[96] Daphne Keller, "Problems with filters in the European Commission's platforms proposal", Stanford Law School Center for Internet and Society, 5 October 2017, հասանելի է՝ http://cyberlaw.stanford.edu/blog/2017/10/problems-filters-european-commissions-platforms-proposal

կազմակերպությունների միջոցով, որոնք կարող են կիրառել ոչ տեղին և ոչ բավարար նորմերի հիման վրա սահմանափակումներ, որոնք կկիրառվեն գլխավորապես տնտեսական նկատառումներով:

Ինքնակարգավորման պարագայում առկա է նաև այլ խնդիրներ նույնպես. մասնավորապես՝ կոնտենտի մոդերացիայի աշխատանքին կարող է խոչընդոտել կազմակերպությունների նվազ ժամանակը և ռեսուրսները, կախվածությունը ավտոմատացմանը, լեզվական կամ մշակութային հարցերի ոչ բավարար տեղեկատվությունը և այլն:

4.2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված առաջարկությունները մեծամասամբ հայեցակարգային են: Դրանք կարող են հիմք հանդիսանալ համացանցում ատելության խոսքի կարգավորման լայն մեխանիզմներ, իրավական կառուցակարգեր մշակելու ու կիրառելու համար:

Հեռահաղորդակցության ոլորտի վերաբերյալ առաջարկություններ

1) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում սահմանել ատելության խոսքի տարածման արգելքի մասին նորմ: Ատելության խոսք պարունակող կոնտենտի տարածման արգելքը կարող է հանդիսանալ իրավական հիմք ոլորտում հետագա իրավական կարգավորումների և առաջարկվող փոփոխությունների համար:

2) Կատարել լրացում «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման կարգը հաստատելու և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀԾԿՀ-ի որոշման 13-րդ կետում՝[97] սահմանելով կանոն, համաձայն որի լիցենզիա ստանալու հայտի հետ ներկայացվող գործարար ծրագրում հայտատուն պետք է ներկայացնի ատելության խոսքի կանխարգելման ուղղությամբ առաջարկվող քայլեր (այդ թվում՝ փաստաթղթային նախագիծ):

[97] Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119764

3) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածում կատարել լրացում և որպես լիցենզիայի կասեցման և դադարեցման հիմք ընդունել լիցենզավորված անձի կողմից ատելության խոսքի տարածումը: Լիցենզիայի գործունեությունը կարող է դադարեցվել նաև այն դեպքում, երբ լիցենզավորված անձը ծանուցված լինելով ատելության խոսքի առկայության կամ տարածման մասին միջոցներ չի ձեռնարկում այդ խոսքը արգելափակելու հեռացնելու կամ այլ կերպ խախտումը դադարեցնելու ուղղությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

4) Կարգավորողի համար սահմանել ատելության խոսքի վերաբերյալ բողոքներ ընդունելու ու քննելու, գործունեության դադարեցման կարգադրություն արձակելու իրավասություններով: Բողոքները կարող են վերաբերել այն դեպքերին, երբ լիցենզավորված անձը տարածում է ատելության խոսք կամ չի կատարում ատելության խոսքի կանխման ուղղությամբ իրավական ակտերով (այդ թվում՝ ներքին) սահմանված միջոցառումները («Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներ):

5) Ոլորտում միասնականություն ապահովելու նպատակով առաջարկվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածում նախատեսել կարգավորողի գործառույթ այն մասին, որ կարգավորողը իրավասու է որոշմամբ հաստատել լիցենզավորված անձանց կողմից բաժանորդների հետ կնքվող պայմանագրերում ատելության խոսքի արգելքի վերաբերյալ կանոններ: Այդ կանոններում կարող են սահմանվել ատելության խոսքի հրահրման արգելքը, ծառայության կասեցման կամ դադարեցման, IP հասցեի արգելափակման, անօրինական կոնտենտի վերաբերյալ ծանուցման և կոնտենտի մոդերացիայի վերաբերյալ նվազագույն կանոնները: Սույն կետով նշված փոփոխությունները կարող է իրականացվել նաև «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը հաստատելու մասին» որոշմամբ[98]:

6) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում սահմանել կանոններ Կարգավորող մարմնի կողմից ատելության խոսքի կանխարգելման վերաբերյալ որոշումները և կարգադրագրերը անհապաղ կատարելու մասին: Կարգավորողի

[98] Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77489

կողմից գործողությունը դադարեցնելու կարգադրագրերը, լիցենզիայի կասեցման որոշումները ատելության խոսքի տարածման բացառման նպատակից ելնելով, եթե առկա են այդպիսի փաստեր և ընտրված միջոցը համապատասխանում է նպատակին, պետք է կատարվեն անհապաղ։

7) Առաջարկվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով սահմանել Հայաստանում հոսթինգ ծառայություններ մատուցող կազմակերպությունների իրավական կարգավիճակը և որպես կարգավորող մարմին նախատեսել Հանրային ծառայություններ կարգավարող հանձնաժողովին։ Հոսթինգ ծառայություններ մատուցող կազմակերպությունները նույնպես պարտավոր են ունենալ նույն իրավական բազան, ինչը առաջարկվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողների համար։ Հոսթինգ ծառայություն մատուցողները ատելության խոսքի դեմ պայքարի շրջանակներում պարտավոր են ներդնել պատշաճ մեխանիզմներ։

Դոմենային ոլորտի վերաբերյալ առաջարկություններ

8) «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ն, որպես Հայաստանում «.am» և «.հայ» վերին մակարդակի դոմենային անունների տիրույթների կառավարիչ կարող է ընդունել ատելության խոսքի կանխարգելման վերաբերյալ բողոքների ընդունման և դրա վերաբերյալ որոշումների կայացման գործնական և կանխատեսելի մեխանիզմներ (այդ թվում՝ իրավական ակտեր)։

9) Առաջարկվում է կատարել լրացում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում և սահմանել «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի դերը դոմենային տիրույթում՝ ապահովելով վերջինիս ինքնակարգավորման երաշխիքները։ Այդ գործունեությունը չի կարող հանդիսանալ լիցենզավորման ենթակա կամ թույլտվության հիման վրա իրականացվող գործունեություն, սակայն կարող է օրենսդրորեն սահմանվել թույլ վերահսկողական գործառույթներ։ Այդ գործառույթները կարող են նախատեսվել նաև պայմանագրային իրավահարաբերություններում, որտեղ էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի քաղաքականություն մշակող նախարարությունը կարող է կնքել իրավունքներ և պարտականություններ նախատեսող պայմանագիր «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի հետ։ ԻԿՀ-ն կարող է քննարկումների, բանակցությունների արդյունքում մշակել այդպիսի մոդել և առաջարկել այն։

10) Դոմենային տիրույթում ռեգիստրարների կողմից գրանցորդների (Domain name holders) հետ կնքվող պայմանագրերում պետք է նախատեսվի դրույթ այն մասին, որ գրանցվող դոմենը չի կարող օգտագործվել ատելության խոսքի հրահրման կամ տարածման համար, ինչպես նաև դրա հետևանքով դոմենի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքերի և կարգի մասին: Եթե դոմենը գրանցվում է էլեկտրոնային եղանակով, գրանցորդը պետք է համաձայնվի հիշյալ դրույթի մասին էլեկտրոնային եղանակով, համաձայնվելով դոմենի գրանցման պայմանների հետ:

11) «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի կողմից պետք է ներդրվեն մեխանիզմներ ակնհայտորեն ատելության խոսք պարունակող որոշակի դոմենային անվանումներ գրանցումը չթույլատրելու կանոնների վերաբերյալ, այսինքն՝ պետք է իրականացվի որոշակի անունների ֆիլտրում կամ զտում: Այս առաջարկությունը կարող է իրականացվել «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի կողմից ընդունված ներքին իրավական ակտերով:

12) «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի կողմից դոմենի գրանցման քաղաքականության մեջ պետք է սահմանվեն դոմենի գրանցումը մերժելու հիմքեր այն դեպքերում, երբ դոմենը ակնհայտորեն կարող է օգտագործվել ատելության խոսքի հարուցման, հրահրման, տարածման, խրախուսման, քարոզման նպատակներով:

13) Առաջարկվում է դոմենային տիրույթում սահմանել «ծանուցել և հեռացնել» (Notice and Take Down) ընթացակարգի արդյունավետ մեխանիզմներ: Այդ մեխանիզմները կարող են սահմանվել պայմանագրային հարաբերություններում՝ ապահովելով արագ և արդյունավետ նպատակի իրագործումը:

Ինքնակարգավորման և կարգավորման վերաբերյալ առաջարկություններ

14) «Ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբին (ԻԿՀ) առաջարկվում է իրավական ակտով ճանաչել ինտերնետ կառավարման շրջանակներում պետություն-հանրություն համագործակցության ինքնակարգավորվող հարթակ, նախատեսելով կարգավիճակը,

գործառույթները, ֆինանսական անկախությունը: Այդ մարմնի գործելու ձևաչափը կարող է փոխվել ad hoc-ից՝ մշտապես գործող մարմնի: ԻԿՀ-ն կարող է միավորել ոլորտում գործող մասնակիցներին (ԻՀ-ին, ռեգիստրարներին, ինտերնետ ծառայություն մատուցողներին, օպերատորներին և այլն) պայմանագրային (կամ անդամության հիման վրա գործող իրավակարգավորումներով) հիմունքներով, որի արդյունքում կձևավորվի բարենպաստ ինքնակարգավորման դաշտ: ԻԿՀ-ն պետք է գործի հաշվետու և թափանցիկ. պետք է ապահովվի այդ ինքնակարգավորվող մարմնի ֆինանսական անկախությունը, որը պարտադիր չէ իրականացվի պետական բյուջեի միջոցներով: ԻԿՀ-ի անդամների ընտրության ժամանակ պետք է հաշվի առնվի ինքնակարգավորման բովանդակությունը, ԻԿՀ-ի անկախության երաշխիքները և շահերի բախման անթույլատրելիությունը:

15) ԻԿՀ-ի աշխատակարգի[99] փոփոխությամբ կամ ընդունվելիք կանոնադրությամբ կարող են սահմանվել ԻԿՀ-ի կողմից ատելության խոսքի կարգավորման նպատակով մշտադիտարկումներ իրականացնելու, սահմանված ժամկետում բողոքներ և դիմումներ ընդունելու և քննելու, ոլորտի կարգավորման ուղղությամբ քայլեր իրականացնելու, կիրառված միջոցների արդյունավետությունը ուսումնասիրելու գործառույթներ: ԻԿՀ-ն պետք է իրավունք ունենա ստանալ ոլորտի մասնակիցներից տեղեկություններ [100](այդ թվում պետական մարմիններից), վերլուծել դրանք, հանդես գալ առաջարկություններով (այդ թվում օրենսդրական), կազմակերպել քննարկումներ լայն հասարակության անդամների ներգրավվմամբ (այդ թվում քաղաքացիական հասարակության), հրապարակել տարեկան կամ կիսամյակային զեկույցներ:

16) Առաջարկվում է հստակորեն սահմանել ԻԿՀ-ի գործառույթները և լիազորությունները՝ ոչ վերաբերելի և ԻԿՀ-ի առաջադրված նպատակներին ոչ համահունչ դիմում բողոքների բացառման նպատակով: ԻԿՀ-ի նպատակներից կարող են լինել նաև ատելության խոսքի կարգավորման նպաստելը և համացանցում խոսքի ազատության պաշտպանությունը: ԻԿՀ-ն պետք է ունենա ներքին կանոնակարգ և բողոքները, դիմումները քննելու կարգավորումներ: ԻԿՀ-ի գործառույթները և իրավասությունները պետք է սահմանվեն հստակ և կանխատեսելի: Հաշվի առնելով, որ ԻԿՀ-ի գործառույթները ավելի լայն են, քան

[99] Հասանելի է՝ http://igf.am/wp-content/uploads/2015/03/ashxatakargWeb_AM.pdf

[100] Բացառությամբ եթե տեղեկատվությունը կարող է համարվել առևտրային կամ պետական գաղտնիք:

ատելության խոսքի կարգավորման համար գործողությունների իրականացումը, պետք է սահմանել դրանց տարանջատման հստակ կարգավորումներ։

17) ԻԿՀ-ի գործունեության հիմնական փաստաթղթով (նորմատիվ իրավական ակտ, աշխատակարգ, կանոնադրություն) պետք է սահմանվեն գործունեության արդյունքում անօրինական կոնտենտի հայտնաբերման դեպքում ենթադրյալ անօրինական արարք կատարած անձին տեղեկացնելու, խախտումները վերացնելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու, պետական մարմիններին դիմելու իրավասություններ։ Ոլորտի մասնակիցների կողմից ԻԿՀ-ի ներկայացրած տվյալների վերաբերյալ իրենց հնարավորությունների սահմաններում գործողություններ չիրականացվելու դեպքում դա պետք է դիտարկվի (պայմանագրով կամ այլ փաստաթղթերով) որպես ոչ իրավաչափ անգործություն (Ոլորտի մասնակիցները կարող են իրավական փաստաթղթով ընդունել ԻԿՀ-ի պահանջների կատարման պարտավորությունը)։ ԻԿՀ-ն կարող է հանդիսանալ արտադատական այն մարմինը, որը կարող է իրականացնել ոչ միայն անօրինական կոնտենտի վերաբերյալ բողոքների քննություն, այլև քննել իրավունքների անօրինական սահմանափակման մասին գործեր։ ԻԿՀ-ն պետք է իրավունք ունենա կայացնել իրավական հետևանք առաջացնող որոշումներ։ Այդուհանդերձ, ԻԿՀ-ն չի կարող կիրառել պատասխանատվության միջոցներ կամ ընդունել վարչական ակտեր։

18) ԻԿՀ-ն կարող է նախատեսել աշխատակարգային կանոններ դիմումների և բողոքների քննությունը սեղմ ժամկետներում իրականացնելու համար՝ հաշվի առնելով բողոքի կամ դիմումի էությունը։ ԻԿՀ-ն կարող է իր գործառույթները իրականացնել առցանց, ինչպես նաև կարող է քննությունը իրականացնել ավելի փոքր աշխատանքային խմբերով (կոմիտեներով)։
19) ԻԿՀ-ն պետք է իրավասու լինի սահմանել մասնավոր անձանց կողմից առցանց կոնտենտի մոդերացիայի թույլատրելի չափանիշները և կարգը՝ տեխնիկական հնարավորություններին համապատասխան։ Չափանիշներում պետք է ներառվեն նաև կոնտենտի մոդերացիայի արդյունքում կայացվող որոշումների հիմնավորվածության նվազագույն պահանջները։
20) ԻԿՀ-ի և ոլորտի վերաբերյալ քաղաքականություն մշակող պետական մարմնի միջև ստորագրվելիք փաստաթղթով կամ ԻԿՀ-ի վերաբերյալ ընդունված իրավական ակտով (տես՝ 14-րդ կետ) պետք է նախատեսվի ԻԿՀ - պետություն համագործակցության հիմքերը և շրջանակները։ ԻԿՀ-ն պետք է ներգրավված

լինի համացանցի և դոմենային ոլորտի վերաբերյալ օրենսդրական կամ այլ իրավական ակտերի նախագծերի կազմման աշխատանքներում: Պետք է ապահովվի ինչպես պետություն - ԻԿՀ, այնպես էլ ԻԿՀ - կարգավորող մարմիններ և այլ անձինք արդյունավետ համագործակցությունը:

21) ԻԿՀ-ն և պետությունը կարող են ձեռնարկել տեղեկատվական քայլեր, որ հանրությունը տեղեկացված լինի սոցիալական ցանցերում ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ գործիքների մասին, այդ թվում՝ ՖԲ-ի Վերահսկիչ խորհրդի (Oversight Board), «Facebook.com»-ին բովանդակության սահմանափակումների վերաբերյալ հարցումների մասին, որի արդյունքում պետք է խթանվի այդ գործիքների ակտիվ կիրառումը ատելության խոսքի կանխարգելման նպատակով:

22) Եթե ոլորտի մասնակիցների կողմից կիրառվում է կոնտենտի մոդերացիայի համակարգչային մեխանիզմներ (այդ թվում՝ ծրագրային ալգորիթմեր), կիրառողը պարտավոր է ապահովել դրանց անվտանգության կանոնները և օրինական կոնտենտի անօրինական սահմանափակման անթույլատրելիությունը: Եթե առկա են հիմքեր պնդելու (օրինակ առկա է բողոք), որ տեղի է ունեցել սխալ, պետք է իրականացվի մանրակրկիտ քննություն:

23) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով պետք է սահմանվեն կանոններ՝ Էլեկտրոնային հաղորդակցության և դոմենային ոլորտի մասնակիցների կողմից ատելության խոսքի կարգավորման ուղղությամբ իրականացված քայլերի վերաբերյալ հանրությանը հաշվետվություններ ներկայացնելու մասին: